Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԻԵՆՆԱ — 1928

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տողը վերից	Գրուած է	Պէտք է լինի
21	23	սուրը	տուրը.
24	10	աշխարհից երանի	աշխարհներից երանէ.
27	3	ձեռս ու ոտս	ձեռ ու ոտս.
28	22	Գաղնիքը	Գաղտնիքը.
29	17	Ցուրտը կ'գայ, կ'տանի	Ցուրտը կ'գայ եւ կ'տանի:
49	8	Հրաքան	Հրաման:
71	4	Ոտքերիդ տակ՝ կայ ցած.	Ոտքերիդ տակ՝ ի՞նչ կայ ցած:
80	5	Նրգը ձեզ չի սազում.	Նրգը ձեր չի սազում:
82	3	Բանում նա է.	Բանում է նա.
102	7	Բանտերի մէջ.	Բանտերի մէջ:
103	1	իմաստունն ես	իմաստուն ես:
104	4	ախնայ,	անխնայ:
106	12	Գարուն, սէր եւ ոչինչ	Գարուն ու սէր եւ ոչինչ:
109	19	Դրած իւր բեռները	Դրած հին իւր բեռները:
135	9	Կարօտն է քեզ քաշում	Կարօտ է քեզ
150	21	Փորձ ունի,	փորձ ունի:
161	21	Նւ արեւ, աստղերի,	Նւ արեւի, աստղերի:
163	4	Սիրտ ենք զօղում,	Սիրտ ենք զօթում
179	22	աստղերից,	աստղալից:
180	1	ծաղիկը մորինու,	ծաղիկը մորենու
189	4	Ցնորքն ու իղձը դրուած են,	Ցնորքն ու իղձը տրուած են:
200	7	Բռնկում մրրիկը,	Բռնկում է մրրիկը:
216	11	Եղած-չ'եղած.	Եղած-չ'եղածը:
231	4	հանքը անբաւ,	հանք անբաւ:
246	2	Վերքերով.	Վէրքերով:
260	8	Խելար,	Խելառ:
286	6	Մի հոգին.	Իմ հոգին:
294	11	Միշտ պատեց՝	Միշտ հողմահար:
301	13	Անցնում անխախտ,	Անցնում են անխախտ:
302	12	եւ օր փորձիդ.	եւ օրը փորձիդ:
304	3	Նւ միջը ծառերի,	Նւ միջեւ ծառերի:

ՀԱՄԱՋԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՄՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՎԻԵՆՆԱ 1928

ՀԱՄԱՋԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

891.99
Հ-

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ.

Ա II/1336

ՀԵՂԻՆԱԿԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՎ

ՎԻԵՆՆԱ 1928

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. Ի. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
ԱՐԽԱՎԱՌԱՆ
ԱՆՀԱՏԱԿԱՆ

Fr. W. Zurhellen-Schey

ՆԱԽՇԻՐԱՆՔ

1926—1927

ՆԱԽԵՐԳԱՆԲ.

❊

Ո՞ւմ հաւատամ այս լուսաւոր երգերը իմ.
Ո՞վ կ'տեսնի յաւերժական դիրքերը իմ . . .
— Գիտեմ, կ'գան մարդիկ յիմար, խենթ-արար
Ու կ'դատեն միտումներով նենգ ու չար՝
Մրրիկների պէս ահաւոր այս հոգեւոր զօրքերը իմ . . .
— Շատ շատերին խորթ կ'թուան
Հոգի եւ տխուր երգերը իմ.
Շատ քչերը կ'հասկանան
Խոր անսովոր մտքերը իմ . . .

Երգերը այս երբեմն ու վսեմ
Յօրինել եմ երկնքի տակ իմ հայրենի . . .
Ո՞վ չի տեսել դաշտերը մեր լուսադէ՛մ
Ու յաղթական լեռները մեր վիթխարի՛, —
Որ տարածում եւ մեկնում են թեւ ու թիկունք,
Անմատչելի շէնք ու բարձունք
Դէպի անմահ զօրադաշտը աստղերի . . .

— Քէյթի–Դաղը վեհատեսիլ,
Աղմաղանը մեր զմայլի՛լ,
Որ օրրան են երկնաբնակ շանթերի...
Իսկ Սեւանի լճակը մեր լուսապայծառ,
Որ շողում է աստուածային գեղեցկութիւն.
Եւ դիւթական մեր ջրերը աղմկաբար, —
Հազար ու մի գետ ու վտակ զուարթուն,
Որ խօսում են հեքիաթի պէս եւ անհուն,
Որ հոսում են կախարդաբար ու վարար
Եւ ասում են սրտին երազ ու գարուն...
— Իսկ ալեւոր ջրվէժները քաջ ու ժիր,
Կանաչազարդ դաշտն ու բլուր.
Միշտ երազուն, խորհրդաւոր,
Գլխով երկինք խորասուզուած անտառը մեր մտացիր..
Ես այնտեղ եմ յօրինել այս իմ քնար, —
— Խոր հոգեւոր՝ զօրքերը իմ անհամար...
Խորհրդաւոր մեր լեռներից, աստղերից,
Ձինջ երկնքի անմահական արեւից —
Կերտել եմ նիշտ շէնքերը միշտ իմ տխուր,
— Այս երկնաւոր մտքերը իմ յաղթ ու հուր...

Ո՛վ որ գիտի յաւերժական լեռները մեր անվրդով,
— Իմ հայրենի խորհրդալի երկինքն ու ծով.
Ո՛վ յիշում է դաշտերը մեր սրբարար,
Կախարդական գարունը մեր կենարար, —
Նա կ'հասկանայ սէգ լեռներում ծնուած
անմահ երգերը իմ,
Միշտ երկնքով թեւաւորուած — իմ
մտքերը յաղթական
— Նա կ'հասկանայ իմ հայրենի՛, աննման
Հող ու ջրով կեանքի բերած բերքերը իմ...

*

*

Զա՛րկ թմբուկին, նաղարաչի՛ եւ կանչի՛.
— Ձեռնարկն է մեր նոր արեւներ յօրինող.
Բե՛ր քո սազը եւ միշտ հնչի՛, քէմանչի՛,
— Մեզ երգ է պէտք սիրտը յուզող ու կարող...
Հազար անգամ պարզե՛լ եմ ձեզ, լոյսի պէս.
— Միտքն է հզօր գլուխ անցել մեր գործին.
Մեզ տանում են դէպ՝ հոգեւոր ասպարէզ,
Ոչ ոք չ'ասի, թէ վերջ կ'գայ մեր փորձին...
Իս երկնահաս արշաւանքի զօրքի մէջ
Միացած են սրտի բոլոր բարձունքներ.
Միտքը արի՛ իր փորձերով երկնաէջ,
Լաւն ու բարին, գեղեցկազօր մեր ջանքեր...
Զա՛րկ թմբուկին, նաղարաչի՛ ու կանչի՛.
—Տե՛ս, հոգեւոր զօրքը առաջ է խաղում.
Բե՛ր քո սազը եւ միշտ հնչի՛, քէմանչի՛,
— Միտքը կեանքին նոր գարուններ է շողում...

*

*

Ռազմանաւերը առաւել անվեհեր
Զօրացոյցի՛ են հաւաքուած մեր դիմաց.
Միտքը ծնել է անառիկ ամրոցներ,
Եւ կուռում է տիեզերքի դէմ անիմաց ...
Տեսէ՛ք, ահա թնդանօթը եւ կրակ
Մերթ տիրում են թշնամական դիրքերին...
Մենք գնում ենք տիեզերքի՛ դէմ համարձակ,
— Երկրպագէ՛ք մեր մտաւոր զօրքերին...

*

*

Ուխտաւորներ, ուխտատեղին մեր առաջ՝
—Ընդհանուր է մեր ուխտը սուրբ, երկնազօր.
Անթիւ մնա՛ք, ցրիւ չ'գա՛ք ձախ ու աջ...
—Մէ՛կ է ուղին դէպ աշխարհը հեռաւոր...
Ամէն մի սիրտ մի ուխտ ունի, մի գարուն.
Ամէն գարուն մի թո՛ւխտ ունի սեւ բախտի...
Բայց բոլորի ուխտը մէկ է եւ անհո՛ւն,
Միտքը չարին մի օր բնաւ կ'յաղթի:
Բոլոր գետերը հոսում են դէպի ծով.
Ամէն մի զօրք երազում է յաղթութիւն...
Միտքն է մրցում արեւի հետ իւր գործով,
— Մէ՛կ ուխտ ունի քարուանը մեր զուարթուն...

*

Ա.

ՈՒԹՆԵԱԿՆԵՐ

1904—1927

1. Հազար տարի նստե՞մ, գրեմ.
Հազար տեսակ բանուոր բերեմ.
— Ինչ կայ իմ մէջ՝ դուրս չեմ գրի,
Թէկուզ հազա՞ր ուստայ նարեմ...
Ինչ որ եղաւ՝ աչքս տեսաւ,
Եւ ինչ սրտիս խորքը հասաւ,
— Յաւերժաբար ծովս ընկաւ, —
Ինչպէ՞ս պիտի ծովը գրեմ...

*

2. Դոյլը ձեռին ծովի ափին ջրկիրը թոռ ջո՞ւր հանի.
Թոռ մէկի տեղ հազարը գայ, ջուրը տանի՞
ու ցանի՞...
— Անձրեւն ու ձիւն, գետերն անհուն միշտ էլ
նորան կե՞ր կ'տան,
Ծովը էլի ծով կ'մնայ, վերջը երբէ՞ք չի հասնի՞..
Դիրը ձեռին, բա՞ց է հոգին, — մէջը մտքեր ու երազ.
Օր ու գիշեր դուրս եմ գրում սրտիս ծովը
երկնահաս:
— Անձրեւ ու ձիւն, գետերն անհուն հա՛ գալիս են
անպակաս, —
Քանի՛ գրե՞մ, լիք կ'լինի, վերջը երբէք չի հասնի..

3· Նա որ դրեց հիմքը էս տան,
Նա որ գրեց մեր մատեան, —
— Անհետացել է վաղուց,
Մո՞ւբ է, անյայտ մեր մէջդան...
Իսկ երբ չ'կայ տէրը գործի,
Կամ երբ չ'կայ սէրը փորձի,
— Լաւ չէ՞ր լինի նանմբէն դարձի...
Շուրջը մուբ է ու դաժա՛ն...

*

4· Ոչ ոք չասաց, ի՞նչ էր գրած կնոնքի բարձր
դարբասին,
Ոչ ոք չասաց, ի՞նչ էր դրած էս բերդի մէջ
իր մասին:
Ոչ մի գրքում չ'կարդացի միտքը հզօր աշխարհի,
Մէկը չ'եղաւ իրաւացի, հասնէր իր խոր
մուրազին...
Ոչ մի գործում մարդը չ'եղաւ իւր վինակի, տնօրէն·
Ոչ մի փորձում մարդը չ'եղաւ ազատ, արի՛,
անօրէ՛ն...
— Ուզես, չուզես, մահը կ'գայ, եւ դու մենակ ու
անզէն,
Ոչ ոք չասաց, ի՞նչ էր գրած էս մատեանում իւր
մասին...

5· Հազար տարի մարդը արի միտք է անում, որ նարի,
Թէ ո՞վ սարքեց երկնքի մէջ քարուանը մեծ
եւ բարի՛,
Որ յաւիտեան չու է անում զօրքի նման
գունդիգունդ·
— Ոչ ոք չասաց, ո՞ւր է գնում քարուանը քիւ՛ր
աստղերի:
Կառավարը Սայլ է քշում, ձեռին մի հին երասան·
Ցուլ, Աղաւնի, Ջէվիկ եւ Շուն, Հայկը նաւով,
կամ Լուսան, —
Եւ գնում է քարուանը մեծ իւր խմբերով
անսասան··· —
— Ոչ ոք չասաց, ո՞ւր է դիմում գնացքը քի՛ւր
աստղերի···

*

6· Դուք որ դէմ էք օրէնքներին, ծէսին, պասին ու
ծոմին,
Ի՞նչ էք ասում ապականուած ձեր բարքերի էս
գոմին·
— Վարա՛մ կապի նարակը սե՛ւ, արիւնարբու
գործերի,
Ի՞նչ էք ասում կեանքը պատած ձեր հոգեւոր
զուլումին···
Երբ վերանայ Սոդոմ–Գոմորը ահրելի մեր կեանքից,
Եւ չ'լինի ցաւն ու չոռը մեր գործերին մասնակից,
Կամ տիեզերքը մի օր դառնայ մեր սրտերին
կարեկից,
— Նոր կարող էք վարա՛մ ասել զուր ծէսերին ու
ծոմին···

Ա II / 1336

7. Թէ ճիշտ է, որ մարդը եկած է կարեւոր հարցումի,
Ո՞ւր է ապա չէմպիոնը խոր եւ հոգեւոր մրցումի,
Որ գար եւ տար մէկ բանաձեւ աշխարհի քի՛ւր
շարժումին, —
— Երբ կ'լինի հանդէսը մեր կեանքը մեկնող
բացումի...
Թէ ճիշտ է, որ միտքը հզօր գործ է տանում
անուանի.
Իսկ մեր կռիւը ահաւոր փորձ է անում մի բանի՛,
Որը մի օր կեանքի իմաստը երեւան կ'հանի, —
— Ուր է, չ'կայ չէմպիոնը մեծ էս հոգեւոր
մրցումի...

*

8. Իմաստուն ես ու կարծում ես, թէ աշխարհը
հասկացար,
— Բայց չես տեսնում, ի՞նչ են անում, ի՞նչ է
լինում արտիդ մէջ.
Կարո՞ղ ես, տես, բանի՞ կէտ կայ մատիդ ծայրին
շարէշար,
— Բանի՞ գծեր, անտես թծեր գործ են լծել
ափիդ մէջ...
Թէ չես կարող լաւ հասկանալ մատիդ ծայրը
հասարակ,
— Ապա ինչպէ՞ս կ'հասկանաս աշխարհների սարքն
ու կարգ...
Մտքերդ դող՝ միշտ քեզ ու քեզ թոչունի պէս
անհոգ կաց,
— Էս աշխարհի հասկացողը մէկն է միայն —
եւ աստուած...

9. Քանի հիւր ես էս աշխարհի գործի մէջ,
— ենենոյք ու սէր ուզածիդ պէս վայելի՛ր...
Կեանքի նամակը լա՛ւ կարդա մինչեւ վերջ,
Իսկ յետոյ թող եւ սուս ու փու՛ս հեռացի՛ր...
Կռիւ, ալմուկ էստեղ բնաւ միտք չունի.
Քո մէջ պահիր դու նամակի վատն ու լաւ.
— Մէկ է, նորա հեղինակին չե՛ս գտնի, —
Եւ չես կարող փոխել գրա՛ծը բնաւ...

*

10. Ինչպէս դաշտերի հողմը սրընթաց,
Կեանքը մի վարկեան եկաւ ու անցա՛ւ...
Կարծես լեռնային ծաղիկ նորաբաց, —
Ժպտա՛ց եւ մի օր ընկա՛ւ, չորացա՛ւ...
Ինչի՞ն են այլեւ հաշիւ ու հոգսեր,
Քանի որ կեանքս հողմի պէս կ'անցնի՛...
Ես չեմ ափսոսում զարունը եւ սէ՛ր.
— Ձի՞ որ ամէն ինչ մահը կ'տանի՛...

11. Բա՛ւ է, քանի տարածեցիք հեքիաթը ձեր
խենթ ու խեւ.
— Չ'կայ աստուած յաւերժական երկնքի
մէջ. յարատեւ...
Հազար տարի լուրջ եւ արի՛, նրագները մեր ձեռին,
Հարց ու փորձ է, որ անում ենք, բայց նա չ'կա՛յ
մեր վերեւ...
Ճրագներով ու կրակով, մեր միտքը սուր ու կտրիչ,
Մենք գտել ենք միայն մի մեծ՝ ամբողջական
արարիչ, —
Որ ինքն ի. նա, բնութիւնը՝ անմահակա՛ն մի Դրդ'իչ...
— Սուտ մի՛ ասէք. Տիեզերքի մէջ աստուած
չ'կա՛յ աներեւ...

*

12. Ես շատ անգամ միտք եմ անում՝ փողոցներով շրջելիս
Հաւաքել են անչափ նիւթեր. երկաթ ու փայտ,
կաւ ու կիր...
Մարդն իր համար տուն է շինում, օր ու գիշեր
գործելիս —
— Նա միտք ունի երկա՛ր մնալ էս աշխարհում
դաւադիր...
Ես շատ անգամ միտք եմ անում. իմ հոգեկան
աշխարհում
Հազար տեսակ հում նիւթեր կան — իրար վերայ
հաւաքուած.
Վարպետներս, որ ապրում են սրտիս խորին
խրճիթում,
— Ե՞րբ կ'շինեն իմ պատուիրած բարձր շէնքերն
ու աստուած...

13. Ոչ ոք չասի՝ անդրանի՛կ է էս Ղարաչի՛ բազարում,
Ոչ ոք չասի՝ թէ զատի՛կ է սե՛ւ ժխորում,
ազարում...
— Քանի՞ տեսակ զոհեր, մահեր կան բանտի մէջ
արունքի՛...
Ոչ ոք չասի երջանի՛կ է բախտի բերած նազարում..
Ով խելք ունի, թող դուրս հանի իւր նաւակը էս
ծովից,
Ով ձիրք ունի, թող դուրս վանի իւր բանակը էս
սովից...
Կարելի չէ՛, մարդը անցնի մեղք ու կրա՛կ էս
բովից,
— Ոչ ոք չասի՝ երջանիկ է էս Ղարաչի՛
բազարում...

*

14. Ոչ ոք չասի՝ հասկանում է էս աշխարհի վերուդիր,
Ոչ ոք չասի՝ խորհուրդ ունի գործը բարի եւ ընտիր.
— Եղած-չեղածը լոկ տնա՛զ կամ մի երազ
անցաւոր,
Ոչ ոք չասի՝ թէ միտք ունի մեր էս կեանքը
բեռնակիր...
Բախտը՝ — անիւ մի անխուսափ, շուռ է տալիս
մեր ուղին.
Մահը — կռիւ կամ մի խունաւ, սուրք է դրել մեր
վզին.
— Ոչինչ չ'կայ էս աշխարհում յաւերժական ու
կարգին, —
Ոչ ո՛ք չասի՝ հասկանում է կեանքը ունայն, ու
պատիր...

15. Ոչ ոք չասի, թէ կեանքը իւր տարբեր է խոր
երազից.
Ոչ ոք չասի՝ թէ ազատ է սիրտը բախտի տնազից..
— Երա՜զ, տնա՜զ, միտքը անհաս ունին միայն մի
ծագում,
Ոչ ոք չասի, թէ շահ ունի էս դառնալի գրազից...
Եղած–չեղածը աշխարհում մի գոյն ունի,
մի՛ արժէք.
Անցուդարձին յաւերժութեան մենք չենք լինի
իրազէկ, —
— Զէ՞ որ բախտն է միայն տալիս մեր նաւերին
կայմ ու դէկ...
— Ոչ ոք չասի, թէ կեանքը իւր տարբեր է խո՜ր
երազից...

*

16. Ոչ ոք չասի՝ իմաստուն է եւ աշխարհում բան գիտի.
Ոչ ոք չասի՝ կ'վերանա՜յ գործը չարի եւ վատի...
— Գարուն ու աշ՜ուն եւ վեհ լոյսե՜ր միշտ չե՜ն մնայ,
կ'հանգչին.
Ոչ ոք չասի՝ թէ իւր համար կեանքը լոյս է
նշմարտի՜...
Ով կայ էսօր՝ քաջ ու հզօր՝ — էգուց կ'անցնի՜, չի
մնայ.
Պատիւն ու փառք, վայելքն ու կարգ նորա ձեռքից
կ'գնայ...
Էս աշխարհի արիւնալի՜ անցուդարձն է անխնայ, —
— Ոչ ոք չասի՝ թէ իւր ուղին իւր մուրազին
կ'հասնի՜...

17· Ոչ ոք չ'ասի, թէ հարուստ է, ունի արծաթ եւ ոսկի,
— Էս անկոպար երկի՛նքը լայն չե՛ն տայ նորան
յաւիտեան...
Ոչ ոք չ'ասի, թէ աղքատ է, ունի կարիք յոգնակի՛,
— նա հաւատար բաժի՛ն ունի արեւի մէջ անմահ..
Ով շատ ունի իր ամբարում եւ ձգտում է
շատ քանի,
Մի օր կ'ընկնի էս ազարում, ոչինչ իր հետ
չի՛ տանի...
— Մարդ ես, եղիր դու խօսակից աստղերի՛ հետ
անվախճան.
Ոչ ոք չ'ասի, անդրանիկ է էս տանարու՛մ
անհունի...

*

18· Ոչ ոք չ'ասի, անխլիս է իր ասպարէզը կեանքում,
Ոչ ոք չ'ասի, թէ զալիս է մի մեծ հանդէս մեր
հովտում,
— Բիւ՛ր ասպարէզ, շքեղ հանդէս երազի պէս
կ'կորչին,
Եւ ոչ մի գործ, եւ ոչ մի փորձ մշտական չի՛
աշխարհում...
Հզօրը թող յաղթութեան մէջ ապրուկ չանի՛
իր մասին,
Եւ ոչ թոյլը պարտութեան մէջ անէծք անի
իր գործին...
Եւ յաղթանակ եւ պարտումը արդիւնք են կո՛յր
բերմունքի,
Ոչ ոք չ'ասի, թէ ազատ է խոր անսովո՛ր
իւր ուղին...

19· Ոչ ոք չ'ուզի՛ ապացոյցը այն բանի,
Որ մահը մեզ դէպ՛ հայրենիք կ'տանի·
— Կեանքը՝ միայն միջասահման երկու անյայտ աշխարհի,
Մէկից մեզի մինչեւ միւսը կ'հանի···
Կրակ–նիրագը՝ տարածուող հոգու մէջ,
Ցաւն ու նարակը, որ ունին ելեւէջ,
Մեր միտքն ու սէր, անթիւ լոյսերը արձագանք են միայն,
Որ գալիս են միշտ հեռաւոր աշխարհից երանի՛···

*

20· Հազար ու բիւր ես մայր ունեմ տիեզերքում·
Նախ ծնեցին ինձ աստղերը երկնքում·
Երբ որ ծնուեց երկիրը մեր արեւից,
Ես նորա հետ հանդէս եկայ վերեւից···
Այնուհետեւ հողն ու ջուրը եւ բոյսեր
Հազար անգամ բերել են ինձ անարգել···
— Վերջին անգամ մայրս բերեց դառնագին·
— Անսահման է տիեզերքի մէջ իմ ուղին···

21· Թէ յիրաւի՝ ճի՛շտ է ասած,
—Աշխարհն ու մարդը բանական
Կաւից կրից են շինուած,
— Ու՞ր է ապա բրուտը այն···
Թէ ամէն ինչ նա է ծեփել
Միայն կաւից ու կրից,
Ո՞վ կարող է կաւը խառնել՝
Ու աշխարհը շինել նորից···

*

22· Թէ որ մի օր սեւ մահը գայ իւր զօրքերով ինձ այցի,
Ու կամենայ միշտ գրաւել դիրքերը իմ ամրոցի,
Ես, յիրաւի, մի մեծ դաւի՝ մի դարաբայ կ'բանամ,
— Չեմ տայ բերդս իզուր քանդի առանց հարցի՛
ու փորձի···
— Ցոյց տուր, կ'ասեմ, հրամանաը բիրտ, անազնիւ
քո տիրոջ,
— Ճիշտը ասա՛· էն աշխարհում սէր ու գարուն կա՞յ
թէ ոչ·
— Դու կապ ունի՞ս բնութեան հետ, թէ՞ լոկ հիւր
ես մի անկոչ···
Ճիշտ որ, բերդս չեմ կարող տալ առանց հարցի՛ ու
փորձի:

23. Կ'ուզե՞ս, մտքեր աստուածային քեզ կ'տամ,
Թէ սիրտ կ'ուզես դու երկնային, մէջդ նայիր
ուշադիր...
— Իմ հոգու մէջ աստուածներն են ամէն ժամ
Կռիւ անում, մտքեր ցանում անխտիր...
Ե՞րբ են զարկել նոքա վրանը իմ մէջ,
Ո՞վ է վառել խարոյկները լուսաւոր.
— Ե՞րբ են գծել իմ ճանապարհը անվերջ...
— Դու ես միայն, մայր բնութիւն, էս բանի մէջ
մեղաւոր...

*

24. Իմ յուշերը եւ գիշերը՝ իւր պսակով ասպագարդ,
Մերթ իջնում են եւ շինում են իմ սրտի մէջ
մի վրան...
Երբ արեւը դուրս է գալիս արքայի՛պէս ու հպարտ,
— Իմ յուշերը եւ գիշերը հեռանում են քոչուորի
պէ՛ս անհնշան...
Ես մի անգամ փորձ արեցի, իմ հիւրերին խնդրեցի,
Որ միանա՛ն, եղբօր նման ինձ համերա՛շխ այցի՛
գան...
— Բայց անփոփոխ, ինչպէս առաջ, գալիս են միշտ
ինձ այցի՛,
Կամ արեւը, կամ գիշե՛րը ստուերներով, քոչուորի՛
պէս ու միայն...

25· Երազումս մահն եկած էր իւր զօրքերով ինձ այցի·
Բռնել էր նա ել ու մուտքը իմ հոգեւոր ամրոցի:
Ինձ բռնեցին ամրոցի մէջ՝ ձեռս ու ոտս շղթայած՝
Ինձ դրեցին դագաղիս մէջ՝ առանց ծէսի՛ ու լացի՛··
Ի՞նչ էք անում, ու՞ր էք տանում· ես գործ ունեմ
դեռ այստեղ,
Ո՞վ է ասել, որ գրաւէք բերդս մենակ ու անմեղ···
— Տէրն է ասել, որ քեզ տանենք դատաստանին
իւր առեղ:
Ինձ դրեցի՛ն դագաղի մէջ առանց ծէսի ու լացի՞···

*

26· Զարմանալի մի հանդէս է էս աշխարհ·
Միացած են Ներդաշնակը եւ Ներհակ···
Արիւնալի մի վատ ծէս է, մի բազար,
Ուր ամէն բան խառն է՝ — մի մեծ հարկի տակ···
Լաւն ու վատը, բարիք, չարիք անխտիրան,
Կեր ու սէր, մուր ու լոյսեր, ցաւ ու վէն···
Ո՞վ է կարմել այս խմբերգը բազմազան·
— Ես էլ, կարծես, ե՛րգ եմ երգում նորա մէջ···

27. Ձի՛ւն գայ գլխիդ, իմաստո՛ւն.
—Տեսնել կ'ուզես աշխարհի
Կազմը ցրիւ՛ եւ անհուն,
Ձեւն անորո՛շ իրերի՛...
Ձի՛ւն գայ գլխիդ, ո՛վ անմեղ.
— Գործդ ծու՛ռ է եւ սխալ.
Կազմը ոչի՛նչ է այստեղ,
Պէտք ի մի՛տքը հասկանալ...

*

28. Հազար անգամ հարց եմ արել ես աստղերին,
արեւին.
Ասէ՛ք, ու՞ր են քշում անվերջ քարուանը ձեր
լուսաւոր...
Հազար անգամ հարց եմ արել ես հողմերին
ու ծովին.
Ասէ՛ք, ո՞վ է հիմքը դրել ձեր համերգին անսովոր..
— Քարուանը մեր ազատ է միշտ. նա բնաւի՛ն
տէր չունի...
— Համերգը մեր ծնուած է նիշտ երգչերի՛ց
անհունի...
Հազար անգամ հարց եմ արել. ո՞վ է տէրը
աշխարհի.
Մինչեւ հիմայ ինձ չեն ասում խոր գաղտնիքը
էս բանի՛...

29· Կիրքն ու կռիւ, Սուտը ցրիւ, փառքն ու հաշիւ
անսովոր
Ասպարէզը մեր հոգեւոր չարչի բազար են շինել,
— Մեր հանդէսը խորհրդաւոր Սոդոմ–Գոմոր
են արել,
Եւ զօրք չ'կայ, որ խափանի՛ էս բազա՛րը
յանցաւոր...
Ցաւն ու չոռը, Սոդոմ– Գոմորը վայրենի՛ եւ անմիտ
Մեր հեռաւոր ու երկնային ուղիներին չեն սազի·
—Թէ անցնում են անվախ ու ժի՛ր դէպի երկիր
ճշմարիտ,
— Զօրքը բերէ՛ք, որ բաց անի ուղիներ՛ը անհասի··

*

30· Դաշտը ունի ծաղիկ ու վարդ անուշ հոտով,
երազով·
Սիրտս ունի ծաղիկ ու զարդ խո՛ր կարօտով
ու սազով...
Ցուրտը կ'գայ կ'տանի՛ երազն ու նա՛զը դաշտի...
Մահը կ'գայ եւ կ'տանի կարօտն ու սազը սրտի
Եր·երի մէջ վառ աստղերը՝ սուրբ խորհրդով
համակուած
Միտք են անում, թէ ինչպէ՞ս է մահը ընկել
էս աշխարհ
Իմ սրտի մէջ անթիւ լոյսեր, կարօտ եւ սէր,
ու աստուած
Թուղթ· են անում· — ե՞րբ կ'կորչի զօրքը մահու
չարաչար...

31. Սիրտս ունի նրագներ
Առանց ձէթի ու ծխի՛.
Կեանքս ունի՛ կրակներ՝
Առանց փայտի՛, ածուխի:
— Ինչի՞ս են պէտք ձէթ ու փայտ.
Ճրագներս՝ երկնային.
Սիրտս լոյ՛ս է եւ ազատ,
— Նիւթ չի՛ ուզում իմ հոգին...

*

32. Կեանքը ունի մի գաղտնիք.
Նա գրուած է մեր սրտում,
Ու չեն տեսնում խեղճ մարդիկ,
— Ի՞նչ կայ հզօր էս բանում...
Գիրը գրուած անծանօթ՝
Խորն է դրուած սրտի մէջ.
Զարմանալի՛ մի անօր.
— Ինչե՞ր չ'կան նորա մէջ...

33. Կեանքի ծորում անկարելի շա՜տ բան կայ.
— Նախ՝ չ'գիտենք, ո՞վ է տնկել էս այգին...
Յոյց տուէք ինձ իսկ եւ արի մի վկայ,
Որ զէր ասի, ե՞րբ են հիմնել էս ուղին...
Յոյց տուէք ինձ կեանքի գրքից մի յօդուած,
Թէ այս հովտից ու՞ր է գնում մեր հոգին,
Ի՞նչ կայ էնտեղ, է՛ն աշխարհում անիմաց,
Ի՞նչ կ'լինի մեզնից յետոյ էս այգին...

*

34. Մութ է չորս կողմ. մութ եւ անգութ է խաւար.
Մթի միջով, խոր հառաչով տանում են մեզ
հողմահար...
Դուրսը ո՛չ մի հեռանկար, ներսը ոչ մի յոյս չ'կայ,
— Մեզ տանում են, մեզ հանում են անյա՛յտ ու
մո՛ւթ մի աշխարհ...
Լոյս ու ճրագը մեր սրտի թոյլ են, անզօ՛ր եւ աղօտ
Ճանչում է կապանքը սեւ մեր ձեռքերին արիւնոտ,
Եւ հնչում են մեր սրտի մէջ դառնութիւնը
ու կարօտ
— Մեզ տանո՛ւմ են, մեզ հանո՛ւմ են լուռ եւ տխուր
մի աշխարհ...

35. Կայ իմ սրտում մի գաղտնիք —
Ես միշտ կ'ուզեմ ձեզ ասեմ.
— Չ'կայ յարմար մի գործիք,
Ի՞նչպէս ասեմ, չ'գիտեմ...
Սիրտս լի՛ է խորհրդով,
Բայց իմ լեզու՛ն՝ խենթ ու խել.
— Կ'ուզեմ, տեսնէք սրտիս ծով,
Բայց չե՛մ գտնում ոչ մի ձեւ...

*

36. Այսօրն իբրեւ մի տերեւ
Ծառից ընկաւ ու կորաւ.
— Սիրտ իմ, սիրտ իմ խենթ ու խել,
Ի՞նչ ես փնտրում վատ ու լաւ...
Օրդ զօրդ շուտ կ'անցնի —
Էլ չես տեսնի դու արեւ.
Ով քեզ բերեց, կ'տանի՛...
— Ի՞նչ ես ճչում խենթ ու խել...

37. Դաշնամուրի հազար ու մի ելեւէջը բազմալար,
— Երաժիշտներ, ձեր համերգը եւ նուագը
մեղմաձայն.
Բեթհովէնը եւ Շօպէնը, նոցա երգը կատարեալ, —
— Վաղու՛ց է կան սրտիս անհուն դահլիճի մէջ
աննման...
Արեւելքի՝ սիրտը յուզող երգը սիրուն եւ նամազ,
Եւ ազգերի խորհրդաւոր աղօթքը մեծ ու դիւրին,
Հարսանիքը, չունգուրն ու սազ, նոցա աղմուկը
անհաս —
Սարք ու կարգով, բիւր լարերով իւր մէջ ունի
իմ հոգին...

*

38. Երկնքի տակ շատ կայ վատ բան վայրենի.
— Ամէնից վատ մեր մարմինն է անհոռնի, —
Հոգու համար բեռ է մի զո՛ւր, անարդար,
Որ ճնշում է, մաշում նոքան անդադա՛ր...
Զէ՞ որ մարմինն է միշտ ուզում հոգս ու կեր,
Սոսկում է նա ահից, մահից, վտանգի՛ց...
— Կաշառքի՛ է սպասում մի՛շտ, անհամբեր,
Ամո՛թ չունի, պոկ չի գալիս մեր փէշից...

39· Ի՞նչ կերպարանք կ'ընդունի
Մահից յետոյ մեր ուղին·
Ո՞վ է ասում, տէր չունի
Լոյ՛ս որոնող մեր հոգի՛ն···
Իսկութիւնը առյաւէտ
Չե՛ն տեսնի դու քնի մէջ·
Միայն յետոյ՝ մահից յետ,
Կ'զգա՛ս կեանքը քո անվերջ···

*

40· Մատիս ծայրին կայ անհշմար էնքա՛ն կէտ,
Ինչքան որ կա՛յ տիեզերքի՛ մէջ բովանդակ·
—Իմ մէջ հոսում է անցքերի վարար գետ,
Որ գերազա՛նց է, քան ինքը ժամանակ···
Մէկն՝ երկուսից հեռու է խիստ եւ անվերջ,
Բազմութիւնները անթի՛ւ են, փոխադարձ, —
Թէկուզ մի հատ աւազի մէջ, գծի մէջ·
— Բայց կա՛յ մէկը — բազմութի՛ւն է
բազմութեանց···

41. Կեանքդ տխուր անմիտ ու զուր մի խանուր,
Դարձել են մէջ ապրանքները վատ ու խաս...
— Շուտ աւարտի՛ր առեւտուրդ սեւ ու սուտ,
Հաշիւներդ շուտով փակի՛ր անպակաս...
Մի լաւ նայիր մայր մատեանիդ թուերին.
Ի՞նչ ես արել, ի՞նչ ես գնել ապառիկ.
— Ի՞նչ եկամուտ ունի տխուր քո հոգին...
Հաշուեզումարը քեզ կը տա՞յ մի զատիկ...

*

42. Մի օր նստեմ ու դրատեմ իմ հոգեւոր սարքն
ու կարգ.
Ի՞նչ է սիրտս ալեկոծում էս անիրաւ ծովը բարկ.
Սաղ աշխարհը վայելք ունի, ես եմ տխուր
ու մենակ.
— Ո՞վ է դրել իմ ուսերին էս բեռները, էսքա՛ն
հարկ...
Քանի՛ կ'ուզի իր կրակից սիրտս անվերջ զազգի՛.
Եթէ կրկին չ'նորոգուին կամ–կարասին իմ ներսի,
— Զէ՞ որ ինձ հետ ասող ու արեւ կեանքի մասին
չե՛ն խօսի...
—Թողէք նստեմ ու հաստատեմ սրտումս նո՛ր
սարք ու կարգ...

43· Զարմանալի՜ մեքենայ·
Զունիս սկի՜զբ ու վախնան·
— Ասա՛, աշխարհ անխնայ,
Կա՞յ ուրիշը քեզ նման։
Մէջդ, աշխարհ, կայ մի մաս·
Նա քեզ մի օր կ'տիրի·
Մարդու մի՜տքը անպակաս
Քեզ լա՜ւ խելքի կ'բերի՜...

*

44· Ճիշտ որ կեանքը թղթախաղի է նման·
— Ո՞վ ձգեց մեզ դումարի մէջ անաւոր·
—Ունիս, չունիս, դուրս պիտի գա՜ս դու մէյդան,
Եւ սպասես նոր վիճակիդ ամէն օր...
Է՛լ վերջ չ'կայ էս խայտառակ դումարին·
Ջամբա՜զ է խիստ հիմնադիրը ձեռնարկի,
Նա է տուել հաւանութիւն սեւ գործին,
— Դումարբազ է Տէ՜րը, կարծես, տիեզերքի...

45. Տեսանելի բնության մէջ օրէցօր
Բաց են անում գիտունները օրէնքներ.
Բայց չեն տեսնում օրէնքը մեծ երկնագօր,
Որ գործում է մեր հոգու մէջ անարգել...
Ի՞նչ կարող են ասել, մեկնել մեր սրտին
Նիւթի շարժը, լոյսի երթը եթերում.
Թանի՛ մենք դեռ չենք հասկանում, թէ հոգին՝
Ինչպէ՞ս է իւր լոյսերը միշտ տարածում...

*

46. Սիրտն իմ կուիւ անհանգիստ՝
Ճախրում է միշտ հեռուներ.
Մտքեր ունեմ խենթ ու խիստ,
— Նիւթում են նո՛ր գարուններ...
Սահման չ'կայ իմ սրտին,
Գոհ չէ՛ բնաւ աշխարհից.
Միշտ որոնո՛ղ իմ հոգին
Բոլշեւի՛կ է են գլխից...

47· Ասա՛ Տէր իմ, Սահմանադի՛ր անհունի,
— Ի՞նչ ես կապել նիւթն ու հոգին իրար հետ·
Մէկը միշտ խո՛ռ, միշտ յանցաւոր եւ բռնի,
Իսկ էն միւսը նուրբ է, ազնի՛ւ առյաւէտ···
Մէկը անմի՛տ, փոփոխակա՛ն, բիրտ եւ բութ, —
Իսկ էս միւսը յաւերժակա՛ն ու բարի
Մէկը ունի ապմուկ ու ձեւ խորթ ու սուտ՝
— Միւսը լոյս է Անմահութեան, Հանճարի՛···

*

48· Սրտումդ կայ մի մեծ խանութ, իսկ դու մէջը՝
մի բազազ·
Լեցուած է նա ապրանքներով ատլաս ու խաս
ե՛ւ ընտիր:
Հաշուեգիրքը քո առաջին, իսկ ձեռքումդ
մի հատ գազ,
Օր ու գիշեր վաճառում ես հոգուդ մասերն
անխտի՛ր···
Խոստում եւ սէր, պարտք ու պատիւ, բարիք,
չարիք, կեղտ ու սուտ
Դու առնում ես, դու չափում ես եւ զուր վատնում
անխնա՛ն···
Բայց չ'գիտես, օրդ կ'զայ, եւ կ'փակեն քո խանութ·
— Տէրդ կ'ուզի իւր հաշիւը· ի՞նչ պիտի տաս
դու նորան···

49· Մէկ է փորձը յաւերժական զօրութեան,
Մէկ է գործը էս անկործան տիեզերքի·
Թէկուզ աւազ, թէկուզ արե՛ւ անասական —
Մասն են միայն ամբողջակա՛ն մի կեանքի···
Կարծես մի մեծ ապրք ու սահուն մեքենայ,
Որ շա՛տ մասեր ունի իւր մէջ համակից,
—Իրեւ անմահ ամբողջութիւն՝ մէկ է նա,
Ինքն է Տէ՛րը եւ գործո՛ղը էն գլխից···

*

50· Մի բան միայն մեզ կ'ազատի
Էս վինակից նորտական·
Միտքը միայն լա՛ւ կ'զտի
Հին կարգե՛րը բնութեան···
Կոյր ու անմիտ կարգն է հսկող
Տիեզերքի մէջ ընթացիկ·
Բայց միտքը մեր վերստեղծող՝
Մեր հոգի՛ն է բոլ'շեւիկ···

51· Սրտումս կար մի քնար
Լարը ոսկի՛ եւ հնչուն...
Ինչպէս եղաւ, մի յիմար
Թելը կտրեց դողդոջի՛ւն...
Էլ չեմ գտնում մի վարպետ,
Որ քնարս նորոգի՛...
— Ի՞նչ անեմ քեզ, ով տգէտ,
Կտրեցիր թե՛լն իմ կեանքի...

*

52· Վիճակախա՛ղ է մեր կեանքը անարդար·
Մէկը նստած աներեւոյթ փարչի մօտ՝
Դուրս է հանում վիճակները անդադար·
— Կենցա՞ղ է սա, թէ՞ մի խաղ է անամօթ...
Լի՛ է փարչը խորհրդաւոր տոմսերով,
Եւ մեր խարջը դուրս է գալիս այնտեղից...
– Բերկրանք ու ջանք, մահ ու կրա՛կ, վիշտ ու սով
Դուրս է տալիս բախտը իր սե՛ւ ամանից...

53· Ճրագ-կրակը ձեռին՝
Շունն ու թազին առջեւից
— Որսորդ է խիստ մարդը հին,
Ո՛րս է ուզում աշխարհից...
Ինչ կա՛յ, չ'կա՛յ անխտիր
Թողէ՛ք նորան, որ գտնի՛...
Սարք ու կարգը բնադիր
Միտք ունի նա՝ խափանի՛...

*

54· Կեանքում շա՛տ կայ կարեկից,
— Վայելք ու սէրը բազում·
Բայց ոչ մէկը նոցանից
Միրատ սրտիս չի՛ սազում...
Էս այգու նոխ բերքերից
Խորշում է նա դողիդո՛ղ...
— Նո՛ր պտուղներ մի տեղից
Նորան նարել չեմ կարող...

55· Հազար տարի մարդիկ մի տեղ հաւաքուած են
խենթի պէս,
— Աղմկում են, որ փոփոխեն կեանքի ուղին
ու հոգին·
Եւ նոցա մէջ մէկը չ'կայ խելքը գլխին՝ —
հեռատե՛ս,
Որ գայ, ասի՛· անխուսափ է եւ անփոփոխ կեանքը
հին...
Ինչքան կ'ուզէ գան ու գնան ձեւն ու տեսը
էս անչափ·
Եւ քիւր անգամ թէկուզ փոխուին սարքը, կարգը,
հոյակապ,
Այդ ամէնը երազի՛ պէս անցնելու են անխուսափ,
— Իսկ յաւիտեան անփոփոխը՝ նա է, միայն
մեր հոգին...

*

56· Ո՞վ է անում ամէն օր
Ժամերգութիւնն աշխարհի
Մեզ կարդում են անսովոր
Գիրքը բարու եւ չարի՛...
Աստղերը լու՛ռ եւ լուսին
Ժամերգո՛ւ են պարտադիր,
— Ի՞նչ կայ գրած մեր մասին
Սաղմոսներում բնագիր...

57· Աչքդ խփի՛ր եւ մոռացիր աշխարհը·
— Թէ մէկն ունիս, — մի՛ կամեցիր հազարը:
Քեզնից յետոյ մէջլիսի մէջ աւել, պակաս չի՛ լինի,
— Քո ցանկութեամբ չի՛ վերանայ մեզ կաշկանդող
ազարը···
Մէկը լինի, համար անի մէջլիս եկող հիւրերին,
Մէկը լինի խաբա՛ր տանի աներեւո՛յթ աշխարհին,
Որ ամէն բան անցաւոր է էս դահլիճում դառնագին,
— Զուր մի՛ խոկա, դու չես փոխի էս անիրաւ
բազարը···

*

58· Իմ վաղեմի ծանօթներից էսօր տեսայ ես մէկին·
Կուչ էր եկած իւր բեռի տակ եւ հեծում էր
դառնագին·
— Ի՞նչ ես այդպէս խոր տառապում, ախպէ՛ր ջան·
— Ո՞ւր է նախկին եռանդը քո, ո՞ւր ես գնում
անգիւման···
Տաշեղի՛ պէս քշում է ինձ վարար գե՛տը էս կեանքի·
Ինչ կա՛ր, չ'կար, ես թաղեցի ջրերի մէջ յոգնակի՛··
Տե՛ս, գնում եմ դէպի ծովը՝, աշխարհն անյայտ
եւ անեղ···
— Գնա՛ս բարի, ես էլ կ'գամ··· կ'տեսնուենք մենք
այնտեղ···

59· Վա՜տ է շինած իմ բունը·
Հոգիս մէջը չի սթրում···
Կաւ ու կիր է իմ տունը,
Սրտիս բնաւ չի՛ սազում···
Ձեռքիս լինէր մի միջոց՝
Կ'հիմնէի մտացիր —
Սրտիս համար նո՛ր ամրոց,
— Ինչի՞ են պէտք կաւն ու կիր···

*

60· Ո՞վ է հեռուից անքո՛ւն, թաքո՛ւն մօտենում·
Կամա՛ց ու ցա՛ծ··· եւ չի ուզում, որ տեսնեն:
Ձոքում է զո՛ւր, սողում է լո՛ւռ եւ գնում·
— Կարծես գիտէ, որ յետեւից կ'հասնեն···
Ահա՛, արդէն մօտեցաւ նա մի դրան·
Փորձ է անում՝ կոտրել եւ շո՛ւտ ներս մտնել···
— Գո՞ղ է անտես, թէ՞ աներես ուրուական·
—Մա՛րդն է փորձում գազանի պէս որս գտնել···

61. Ինչ որ աչքս տեսնում է այս աշխարհում. —
Թռչուն ու բույս, գարուն ու լույս եւ խաւար,
Ծով ու ծաղիկ, աստղերը նուրբ երերում, —
— Կայ եւ իմ մէջ, բայց աւելի՛ կատարեալ...
Ես չեմ ժխտում, որ իրերը նիւթակա՛ն
Ունին մի տէր՝ մի արարիչ երկնաւոր.
— Տէր կայ նաեւ իմ սրտի մէջ անվախճա՛ն,
Նա է մտքիս արարիչը լուսաւոր...

*

62. Մէկը նստէ՛ր իմ կողքին,
Պատմէ՛ր անվերջ հեքիաթներ.
Անցուդարձը մարդու հին,
Նորա անթի՛ւ կարօտներ...
Հեքիաթներով լի՛ հոգիս
Նո՛ր ուղիներ մեզ գծէր.
— Անմահութեան աւետիս
Վա՛ռ աստղերին տարածէր...

63. Բա՛խտ իմ, բախտ իմ արնախում,
Կեանքի կծիկը ձեռիդ,
Բաց ես անում, ու փաթթում...
— Ի՞նչ ես մանում նենգամիտ...
Մէկը լինէր, — հիմնովին՝
Դահից գցէր քե՛զ, անգո՛ւթ.
— Չ'փաթթէիր մեր վզին
Դատնութիւնը, սեւն ու սուտ...

*

64. Ի՞նչ էք նորից իմ վերեւ
Պտոյտ գալիս, ագռաւներ.
— Չէ՞ որ ամբողջ սուգն ու սեւ
Սիրտս վաղուց է ըմպել...
Թէ կայ մի նոր դատնութիւն,
Սիրտս ուրա՛խ կ'ընդունի.
— Իսկ անցեալի ցաւն ու թոյն
Տեսել եմ ես, միտք չունի՛...

65· Քնար ունիմ ես ոսկեվար,
Երգ է հնչում անսովոր, —
Իմ օրերը սիրավառ
Յետ է կանչում ամէն օր···
Եւ շատ անգամ միտք են անում՝
Երգը սգիս լսելով·
— Ո՞վ է կապել իմ սրտում
Էս քնարը երկնագով··· ·

*

66· Սի՛րտ իմ, եթէ կեանքի միտքը հասկանաս
Եւ աշխարհի ներքին գաղտնիքը բանա՛ս,
— Հեշտ կ'լինի այնուհետեւ քո ուղին,
Շուտ կ'ծաղկին խորհուրդները քո անհաս···
Իսկ թէ այսօր, դու քո տան մէջ ինքնատէր,
Էս աշխարհից եւ ոչ մի բան չիմացար,
— Ի՞նչ կ'իմանաս վաղը, իրրեւ տնատէր,
Երբ դու գնա՛ս՝ ըղձերովդ անկատար···

67· Մի օր պիտի այս անցաւոր
Տունս փուլ գայ եւ ընկնի՛·
Եւ սուրբ զօրքը իմ հոգեւոր
Օթեւանը՝ իր թողնի···
Եթէ այդ օր իմ թաղումին
Հարցումի գան ծանօթներ,
Թէ ի՞նչ եղաւ սորա հոգին·
Ասէ՛ք, թռա՛ւ դէպ երեր···

*

68· Ծառի վերայ տերեւներ
Ծաղկում են նո՛ր գարունքին,
Որ աշունը ցրտաբեր
Գա՛յ եւ տանի՛ ամենքին···
Մարդը տերեւ է միայն —
Մահը կ'գայ կ'տանի՛···
Ծառը միայն մարդկուրեան
Միշտ կ'մնայ կենդանի՛···

69. Անյայտ ու սեւ այս ուղին
Շատ շատերը գնացին.
Բայց ոչ մէկը նոցանից
Լուր չ'բերեց էն ափից...
Քանի՛ այստեղ ես, զգա՛ստ,
Ճամբիդ բեռը դրստի՛ր
Մէկ էլ տեսար. անիմաստ
Հրաբան եկաւ. «հեռացի՛ր...

*

70. Տիեզերքը մեծ՝ յաւերժական իր կարգով,
— Եւ նորա մէջ ես եմ մենա՛կ, կենսագով.
Ո՞վ է մեծը իւր հասակով եւ հոգով.
Ո՞րն է արի, կիրք հանճարի՝ ե՞ս թէ նա...
Նքերական բարձունքներից լոյսն է հոսում
անկործա՛ն.
Իմ հոգեկան ակունքներից մի՛տքն է խօսում
անվախճան...
Ո՞րն է այստեղ անջնջելին՝ — այդ լոյսերից
իսկուրեան.
Իմ մտքե՞րը, թէ՞ աստղերը անխնայ...

71. Հարուստ ու շէն տուն ունիմ՝
Մէջը ոսկի եւ բեհէզ.
Զգո՛յշ անցի՛ր, ոխերի՛մ,
Տունս իզուր չ՚քանդես...
Սիրտս տուն է խոր ու շէն,
Մէջը լոյսե՛ր ու խնդում.
— Դու սրտումս՝ տնօրէն՝ —
Իմ ջահերն ես միշտ վառում...

*

72. Սուտ մի՛ ասէք. նիւթը ունի սիրտ ու սէր.
— Հոգմի առաջ միշտ խօսում են տերեւներ,
Միշտ լսում է ծովը արքունի ասողերին,
Լեռները մերթ ապօրո՛ւմ են սրտագին...
Սուտ մի՛ ասէք. կեանքը ունի խոր զգացմունք,
Որ խօսում են անտառ ու բոյս եւ ծաղիկ...
— Դի՛ր հոգմի դէմ դատարկ մի կուժ ու նայիր,
— Տե՛ս, թէ ի՞նչ է նա հառաչում անխոսիր...

73. Թէ չես տեսնում զաղտնիքը մեծ աշխարհի,
Երեկոյեան վառարանիդ մօտ նստիր,
Տե՛ս հանդէսը կապոյտ-կարմիր բոցերի,
Որ պարում են խորհրդաւո՛ր, երկնացի՛ր...
Ո՞վ է այդպէս շէնքը նիւթի խորտակում,
Հանդէս բերում իսկը նորա էութեան...
Այն, ինչ որ կայ, իբրեւ զաղտնիք, տիեզերքում
Յոյց են տալիս կրակի մէջ անմեռան...

*

74. Օմար-խայեամ, քո փառքը, միշտ անբաւ է.
Ձեռքդ ապին՝ սիրտն երազին ծարաւ է...
— Արեւի պէս խօսքդ պայծա՛ռ, իմաստուն,
Ճի՛շտ ասացիր. կեանքը մոլոր մի նաւ է...
Ո՞ւր է, ասէք, միտքն Օմարի ահաւոր,
Որ պայքարի՛ երկնքի դէմ ամէն օր...
Թէ չ'կայ նա, ո՞վ կ'ասարգի Աստուծուն,
— Միթէ՞ նա էլ նաւը նատեց անցաւոր...

75· Զե՞ս տեսնում դու, որ այստեղ
Եկած ես մի խնճոյքի·
— Հրճուանք ու սէ՛ր փառահեղ,
Աստղ ու արեւ երկնքի՛...
Քանի հիւր ես, վայելիր
Աշխարհի ճոխ սեղանից·
— Շուտով կ'ասեն· «հեռացի՛ր
Հարսանիքի դահլիճից»...

*

76· Ես շատ անգամ միտք եմ անում անվրդով
Եւ տիեզերքի՛, եւ իմ մասին խորիմա՛ց·
— Որն է մեծը մեր երկուսից հասակով,
Կամ որն է իսկ շինարարը եւ աստուած...
— Ե՞ս եմ ծնուած տիեզերքի խոր արգանդից,
Թե՞ նա է լոկ ծնուած իրօք իմ մտքում...
Եւ այս երկու յաւերժական գործերից
Ո՞րն է բարի եւ միշտ արի՛ իւր կեանքում...

77· Կեանքդ կարն է եւ անմուկ·
Թո՛ղ այդ երդումն ու ցասում·
Սուգն ու սեւը սրտմաշուկ
Հայրանիքին չեն սազում···
— Զէ՞ որ հիւր ես՝ մի անգամ·
Տե՛ս հաշիւը մատեանդ···
Տէրդ քեզի ամէն ժամ
Սպասում է չարամիտ···

*

78· Երկու գիրք կայ աչքիս առա՛ջ, իմ դիմաց·
— Մէկն ամէն օր բաց եմ անում ու կարդում·
Կեանքիս բոլոր ուղիները նկարուած՝
Տեսնում եմ միշտ նորա անվերջ էջերում···
Իսկ էն միւսը կարդալու մի նար չ'կայ·
— Գրուած է նա օտար լոզուով ու խրթին·
Էն աշխարհից ո՛չ մի խաբա՛ր, ոչ վկա՛յ, —
Կարդալու չէ կեանքի գիրկը բնաւին···

79· Զայնս լինէր ահալկո՛ւ,
Զի՞լ երկնահա՞ս մի կտրիչ,
Կ'կանչէի ես հուժկո՛ւ·
— Ո՞ւր ես, դուրս ե՛կ, արարիչ···
Երբ շէնքը այս կերտեցնիր —
Գարո՞ւն, արե՞ւ, լոյս անբաւ, —
Ինչո՞ւ իզուր կարգեցիր
Կեանքի հանդէպ մահ ու ցաւ···

*

80· Գլխիս վերեւ անդադար
Պտտւում ես, դու արտոյտ·
— Ի՞նչ լուր ունիս ինձ համար
Էն կողմերից լուռ ու մութ···
— «Մենք երկուսով ուղեկից՝
Զուր եկել ենք ու կ'երթանք·
Բայց յայտնի՛ չէ, թէ ուսկից
Կամ ո՞վ ձգեց մեզ այս կեանք»···

81. Սուտ մի ասէ՛ք. ես ջահել չեմ ու անփորձ.
Նոր չեմ եկել էս աշխարհը անմահ.
Նոր չէ՛ կեանքս իբրեւ ձեռնարկ, իբրեւ գործ.
— Ես եղել եմ գետերի մէջ բնութեան...
Եւ բիւր անգամ ես անցել եմ էս ուղին,
Ես եղել եմ արեւի մէջ, աստղերի հետ միաժամ.
Անվախճան է յաւերժական իմ հոգին, —
— Ես եկել եմ, նորից կ'երթամ ու կ'գա՛մ...

*

82. Ես ոչ մի բան աշխարհում
Չեմ հասկանում այնքան խո՛ր,
Ինչպէս կատուն իմ սիրուն
— Նորա հոգի՛ն անսովոր...
Աչքերն անմեղ եւ կարեկից,
Ասե՛ս, մի բաց լուսամուտ,
Ցոյց են տալիս սրտի խորքից
Անմար կրակ, սէ՛ր եւ գութ...

83. Թող տրտունջ, եղբայր, լուծդ տար անձայն.
— Էդպէս է կեանքում ամէնի վիճակ.
— Ասա. մեզանից ո՞վ չէ համաձայն,
Որ կեանքը ցաւի ծով է անյատակ...
Եւ ով ապրել է, կեանքում մտածել,
Կամ ով եղել է հարկատու բախտին,
— Ով գիտէ զգալ, աշխարհը դիտել,
Նա վի՛շտ կ'ունենայ իւր սրտի միջին...

*

84. Ասի՝ արի քաղենք վարդե՛ր,
— Վարդը անենք կեանքի զարդեր, —
Կարօտը տանք մեր սրտերին,
Որ թեւ առնի մեր հոգին...
Ասի՝ ելնենք անտառ ու սար
Շրջենք հովիտ եւ դաշտը յար.
— Դէթ մեզ ասեն աստղերն անհուն,
Երբ պիտի գայ ո՞ր գարուն...

85. Հոգին է աստուած էս մեծ անհունի,
Աշխարհն ու արեւ ձեւեր են ու ջանք —
— Հագուստը միայն յաւերժականի՛...
Թէ նա չ'լինի, չի՝ լինի եւ կեանք:
Երկինք ու գետին, շարժումը անվերջ
Միայն մէ՛կ իմաստ ունին աշխարհում.
— Դազգահը դրած իրադարձի մէջ,
Արարչի համար հագուստ են կարում...

*

86. Ո՞վ է գրել սրտիս գիրքը անմահ,
— Կեանքը շարել նորա ոսկի էջերին.
Եւ աշխարհի խորհուրդը սուրբ, յաւիտեան
Դրի առել սրտի տխուր պատերին...
Շա՛տ եմ ուզում լսել սաղմոսը սրտիս,
Շատ է յուզում խօսքը նորա թափանցող.
Ես շատ անգամ հարց եմ տալիս մտքերիս.
— Ո՞վ կ'իմանայ խորհուրդը ձեր երկնաշող...

87. Ի՞նչ ես անվերջ ու անմիտ
Պտույտ անում, նախսպա՛կ.
— Ասա՛, վարպետ. մանածիդ
Ո՞ր մասն է լաւ ու յստակ...
Թէ գործուածքդ անարատ
Իմա՛ստ ունի ու պարծանք,
— Ո՞ւր ես խառնել լաւն ու վատ,
Լո՛յս ու խաւար, մահ ու կեանք...

*

88. Զուր մի՛ խոկա, դու իմ սիրտ,
Ինչ կորած է, չես գտնի.
Վարար գետ է կեանքը բիրտ,
Ի՞նչ որ գցես, կ'տանի՛...
Ո՞ւր է հոսում գետը զուր.
— Ոչ ոք չասաց այդ մասին.
Ջրի վերայ մի փրփուր՝
Դու էլ կ'անցնես քո ուղին...

89. Մարդ ես հզօր եւ վեհագոյն մի էակ.
Երկինքը քեզ տուել է սուրբ մի կրակ,
Որ սովոր ես յետ եւ առաջ նայելու.
— Տե՛ս, նաւդ քեզ տանելու է շա՜տ հեռու...
Օրուայ տխուր հոգսերը թող անխնայ,
Մտքերդ հուր վառիր՝ կարող դու ատուած.
— Էս աշխարհից քեզ էլ բաժին չի՛ մնայ...
Նաւդ նստիր, որ շուտ հասնես հայրենիքդ
անմոռաց...

*

90. Վարկենի պէս կարն է կեանքս,
Ատուածների խաղջ է կեանքս.
— Ինչ որ կ'ուզեն, թող ինձ ասեն,
Արեւների՜ հարն է կեանքս...
Աստղերի պէս վառուում եմ ես.
Երազներ են հոսում սրտէս...
Ինչ որ կ'ուզեն, թող ինձ ասեն,
— Արե՜ւ եմ ես զարնան պէս...

91. Ես խօսք կ'ուզեմ կարմիր բոցով՝
— Որ շէկ շանթի կաթիլ լինի.
Ես խօսք կ'ուզեմ մի հարուածով
— Աստղ ու երկինք հոգի անի՛...
Մեզ խօսք է պէտք ինչպէս որոտ,
— Որ կապանքը կեանքի փշրի՛...
Խօսք արարիչ, լոյսի՛ կարօտ,
— Կեանքին գարուն, արեւ բերի՛...

*

92. Ձիւն է գալիս մեղմ ու լուռ,
Սիրտս է լալիս սեղմ ու զուր...
Ո՞վ է ցանում երկնքից
Ծերութիւնը էս անդուր:
Ի՞նչ են անիւն ու երկանք
Էդպէս աղում ու մաղում.
Ո՞վ է գործում մեզ պատանք
Անգութ ու սուտ էս խաղում...

93. Շատ ուղիներ շարուած էին իմ առաջ.
— Միայն մէկը ես ընտրեցի նոցանից...
Ու տանում է էս մէկն ինձի ձախ ու աջ,
Մինչեւ հիմա խաբար չունեմ միւսներից...
— Էս մէկ ուղին լաւ ու վատով, կոշտ ու նեղ
Տանում է ինձ դէպ հայրենի՛ հեռուներ.
— Ասա՛, Տէր իմ, ինչո՞ւ համար մէկի տեղ
Գծել ես զուր հազար ու բիւր ուղիներ...

*

94. Նկարիչ ես, ներկեր ունես գոյնզգոյն,
Զեռքիդ բռնած արարչական քո վրձին,
Գծել ես դու աշխարհ, արեւ ու գարուն,
— Յաւերժական կեա՛նք ես տուել կտաւին.
Ի՞նչ էր պակաս քո կտաւին ու ներկին,
Որ գործդ զուր պակաս պռատ դուրս եկաւ.
— Արեւ ու լոյս, գարուն ու սէր երկնային,
Բայց նոցա կից՝ մահ ու կսկիծ, չոռ ու ցաւ...

95· Ամպածրար սէ՛գ ժայռերի կատարին
Արծիւն է վեհ՝ գահ ունի...
Ամպերից վե՛ր, եթերի մէջ լուսածին
Մի՛տքն է շողում անհունի...
Կեանքի ունայն կամարից վեր՝ անվեհեր
— Կեանքը մաշող քանտերից դուրս ու միայն
Ազատութեան միտքը արի՛, լուսաբեր
Արծուի պէս սաւառնո՛ւմ է անսահման...

*

96· Ընչասէր չեմ,
Ոչ էլ գերի աշխարհային փառքերի·
— Ես կարօտ եմ արեւներին լուսադէմ·
— Ինձ յուզում են կիրքն ու կրակ հանիարի՛...
Ես սովոր չեմ
Անգութ եւ սուտ էս աշխարհի բարքերին·
— Սոսկ անցորդ եմ տիեզերքի մէջ էս վսեմ,
— Ինչպէս եկայ, էնպէս կ'երթամ ես կրկին...

97. Կարծես լոյս երազի հմայքով,
Մութ գիշեր իմ համբին դու եկար.
— Դու, իմ քոյր, հոգուդ սուրբ շողերով
Նո՛ր երկինք ցոլացիր ինձ համար...
Սէրն անբիծ եւ թախիծ քո դէմքին —
Շողացին անուրջնե՛ր ու գարու՛ն, —
— Դէր նայիմ քո հզօր աչքերին, —
Որ յիշեմ իմ աստղերն, իմ երկինքը անհուն...

*

98. Մի սուրբ անուրջ, մի նուրբ երազ —
Ինչպէս անյայտ երկրի հեքիաթ՝
Ինձ կախարդեց երգը անհաս —
— Սէրն աստղերի հարազա՛տ...
Մի նուրբ հոգի՛, մի սուրբ հոգի՛ —
Դէպ վե՛ր, երկի՛նք պանա՛մ...
Աստղ ու արե՛ւ անմահ փառքի,
— Ձեր բարձունքին տիրանա՛մ...

99· Էս կեանքը սեւ բանդ, էս կեանքը մութ խուց·
— Ազատը սիրող, ի՞նչ ես որոնում·
Ձեռքերիդ շղթայ եւ կեանքդ խաթայ,
Հերիք չէ՞ անվերջ դու սուգ ես անում...
— Զարնե՛մ նեղումուք կեանքիս կապանքին,
Փշրե՛մ ու ազատ թափով սլանա՛մ...
Արծուի պէս վե՛հ, ամպերի փէշին
Քե՛զ, ազատութիւն, գրկե՛մ ու երթա՛մ...

*

100· Մանուշակը անքուն եւ շուշանը ծարաւ,
Սիրուն վարդը կարօ՛տ, ջերմագի՛ն
Աղերսում են հեռու ամպերին սրարշաւ·
Ցող ցանել ջերմակէզ դաշտերին...
Հով ու զով, անվրդով, սեւ ամպերը խմբով
Անտարբեր ճանապարհ են անցնում·
— Չէ՛ երկրին դառնագին ու խռով
Մենք իսպա՛ռ մօտենալ չենք ուզում...

101· — Վառ աստղեր, ձեր լոյսերն ու ձեր սէր
Ո՞վ է ձեզ շնորհել զօրաւոր···
— Զէն տուր մեզ, Տիեզերքի անյայտ տէր·
Դէպի ո՞ւր ես տանում մեզ մոլոր···
Եւ անցնում են աստղերն անմեկին,
Պատասխա՛ն իմ հարցին չե՛ն տալիս···
Տիեզերքի միակ տէրը վերին
Թագնուա՛ծ է եւ դուրս չի՛ գալիս···

*

102· Հաւատարիմ իմ ընկերներ եւ ոխերիմ թշնամիք,
Գիրքը սրտիս ցոյց է տալիս, ձեզ պա՛տռեմ ես ահագին···
Առեւտուրը մեր սրտերի եղաւ կանխիկ, ապառիկ·
Իսկ հիմայ, երբ դուք էլ չ'կաք, հեռացե՛լ էք անգիւման,
Ձեր հաշիւը մնում է դեռ իմ մատեանի էջերին···
Ես շատ անգամ բաց եմ անում հաշուեգիրքը սուրբ սրտիս,
Եւ շատ անգամ լաց եմ լինում, մեր օրերը յիշելիս···
— Ինչո՞ւ թողիք ձեր հաշիւը իմ սրտումը յաւիտեան···

103· Սիրտս, կարծես, մի մեծ մատե՛ան, որ բիւրաւոր
էջ ունի,
Մէջը գրուած աշխարհների պատմութիւնը
անուանի···
Թէկուզ չնչին մի հատ աւազ, արեւն, աստղեր
աննման,
Ծաղիկ ու բոյս, խաւար ու լո՛յս, մարդ,
անասուն, ամէ՛ն բան
Իմ մատեանի լայն էջերին իւր ջոկ հաշիւը ունի··
Ես շատ անգամ բաց եմ անում էջերը իմ մատեանի
Ու կարդում եմ խորհրդաւո՛ր պատմութիւնը
աշխարհի···
Սիրտս, կարծես, մի մեծ մատե՛ան, մէջն աշխարհ
կե՛անք ունի···

*

104· Էս հոյակապ դահլիճի մէջ կայ ամէ՛ն բան գեղանի·
Վարդի բուրմունք, գարուն ու սէր, երգ ու երազ
եւ գինի···
Տե՛ս, ամէ՛ն բան առատ ու լի՛· խնոնո՛յք է նիշտ
բերկրալի·
Բայց ինչի՞ս է, երբ որ չ'կայ տէրը նորա անուանի··
Քէֆն՝ անիրաւ, կերուխումը մի անծանօթ
հարկի տակ,
Բացակա՛յ է քէֆ սարքողը, եւ յայտնի՛ չէ
նպատակ···
Միայն գինին, կամ վարդ ու սէր ոչինչ անել
չե՛ն կարող,
— Երբ որ չ'կայ քէֆ սարքողը, երբ անյա՛յտ է
նպատակ···

105· Ինձ իմ բալի ընկերները խօսք են ասում
շատ անգամ·
— Խի՞ չես գնում դու հանդէսներ, պար ու
թատրոն, ժողովներ,
Ուր խաղում են դերասանները իրական
պատկերներ, —
Որ կեանքը այս կարողանաս զտել, դիտել
ամէն ժամ...
Չէ՛ ասացի, — ներկայացում կայ իմ սրտում
ամէն օր,
Ուր խաղալիս՝ դուրս են գալիս դերասաններ
իսկական,
Ուր գործում է ողբերգութի՛ւնը աշխարհի
զօրաւոր...
Սրտիս շքեղ թատրոնի մէջ քեմ է սարքած
անմահան...

*

106· Այսօր քերին ինձ մի գործիք նրբաձեւ·
— Դի՛ր ականջիդ եւ կ'լսես, ի՞նչ է լինում
ամէն տեղ·
Երգեր ու ցոյց, խօսք ու զրոյց կամ ժողովներ
յարատեւ,
Տե՛ս, ամէն բան դուրս է գալիս թելի միջով
հանեսարի՛ղ:
— Ասի՝ իմ մէջ կայ բնածին, ազատ ու հին
մի գործիք·
Նրբոր լարուած է մեխեանաւ իմ սրտի մէջ ազդեցիկ,
Տեսնում եմ ես նորա միջից կեանքը անցեալ
ու գալիք,
Լսում եմ ես երգն ու աղմո՛ւկը աշխարհի բնածին··

107· Քանի կեանքս անյայտ նամբով ընթանայ,
Քանի օրս հոգսերի մէջ անց կենայ,
Լաց ու կոծը էս աշխարհում ի՞նչ նշան, —
— Եղած չ'եղա՛ծն է ինձ համար անխնայ...
Բեմի վերայ իրրեւ մի զուր դերասան՝
Իմ նախորդ դերն է չնչին եւ ունայն...
— Օրս կ'զայ, ինձ իմ հաշի՛ւը կ'տան,
Դուրս կ'նետեն, երբ որ դերս վերջանայ...

Բ.

ՁԵՂԱՒՍ ՈՒ ՊԵՂՈՒՍ

Ա.

Կանգնած ես դու հողի վերայ,
Սիրտդ՝ արեւ ու աստուած.
Նայի՛ր ներքեւ եւ մի՛տք արա.
— Ոտքերիդ տակ՝ կայ ցած...
Նա, որ մի օր միտք էր հզօր,
Սէ՛ր ու գարուն աշխարայ,
Տե՛ս. նա էսօր հող է անզօր,
— Դու կանգնած ես նորա վերա...

Կ'անցնին օրեր եւ տարիներ,
Թեզ էլ կ'տան վիճակը նոյն.
Հող կ'դառնայ սիրտդ եւ սէր,
Քո գործերը, քո անուն...
Ցեւոյ մի օր մի սրիկայ
Հողիդ վերայ կ'գրօսնի,
Որ նորան է՛լ նոյն հերքը գայ,
— Երբ նա աշխարհը թողնի՛...

1927.

Բ.

— Ես եմ մենակ երկնքի տակ.
Սեւ ծովերի ալիքն ու ջուր,
Մրրիկների կայծակն ու շանթ,
Երկի՜նք արի՜ւ, աստղերը հուր
— Մէ՜ջս թաղեմ, իբրեւ Աստուած,
Աշխարհն անեմ մտքի զանգուած...
Միտքս մեծ է եւ արի,
Շողշողում է ճառագայթ.
Քարուանների աստղերի
Լոյ՜ս է տալիս նա հպարտ...
— Սիրտս, ասես, երբեր լինի,
Արեւի՜ պէս լոյսերը վառ...
— Ո՞վ կարող է, սահման դնի
Իմ մտքերին անսպառ...

1921.

Գ.

Եկաւ մի օր կոյսը սիրուն
Թէ՝ յօրինիր երգ ու զարուն.
Երգ աննման, երեւային, —
Որ լոյս ու սէր բերի սրտին...
Ու ես վերցրի քնարը հին,
Զարկի նորա նուրբ թելերին.
Եւ մեղեդին հնչեց տխուր
Ցաւերը բիւր, երկինք եւ հուր...
Դարձաւ կոյսը՝ թէ չեմ ուզում.
— Երգդ տխուր սիրտ է յուզում...
Տխուր երգե՞ր ու խոր վէրքե՞ր
Կ'խորտակեն զարուն ու սէր...

Դ.

Զէ՞ որ մի օր հոգուս բարձրէն դու անցար,
Իբրեւ մի ձայն հեռուների յաւիտեան.
Սրտիս համար անհաս երազ դու դարձար՝
— Մի նուրբ հեքիաթ հոգիների, ու գարնան...

Զէ՞ որ մի օր սրտիս գաղտնի խորանից
Իմ խնկաբոյր բուրվառները հանեցիր.
Իսկ աստղերը իմ մտքերի երկնքից
Զո՛ւր, անպտո՛ւղ էս աշխարհին ցրեցիր...

Ինչպէ՞ս եղաւ... երազներս ո՞ւր կորան, —
—Ու՞ր ես, ով ձա՛յն հեռուների՛, գարունքի...
Ու՞ր են ցրուած իմ աստղերը յաւիտեան,
— Տե՛ս, գերի եմ էս բանտումը փոքրոգի՛...

1922.

Ե.

Էն հաւքեր, որ աշնան
Մեր երկրից հեռացան.
— Անմահ երգերով
Ցեղ եկան խմբերով...
Բիւր համբոյր ծաղիկներ,
Որ աշնան թօշնեցին.
Խանդավառ, ոսկեթե՛լ
Շողշողում են կրկին...

Թող ես էլ իմ վսեմ
Դլուշակը վերցնեմ.
— Հակառակ սեւ բախտին՝
Գարունքին սպասե՛մ...

1903.

Զ.

Իմ կեանքը թօշնեց, լոյսերս կորա՜ն,
Տենչանքը սրտիս, երազ ու անուրջ
Հեռացա՜ն աշնան հաւքերի նման.
— Դատա՜րկ է հոգիս, ամայի՜ իմ շուրջ...
Գարնան ու սիրոյ ժպիտներ ու. շող
Կեանքի ափերից քրքիջո՜վ կու գան...
Բայց ինձ օտար է բերկրանքը յուզող,
Սրտումս մոխիր եւ լո՜ւռ գերեզման...
Երանի՜ մի օր հողմերի թեւին՝
Աշխարհը մոռնամ, հեռո՜ւ սլանամ.
Բեռներս յանձնեմ անմիտ ժխորին,
— Էս կեանքը ունայն ողբա՜մ ու երգա՜մ...

Է.

Տո՛ւր ձեռդ, եղբայր. խոր վիշտը կեանքի
Թող մեզի տանջի, հարուածի միտեղ.
— Սիրտ սրտի սեղմենք... դժոխք օրերի
հաւարից նայենք դէպ հեռուն, — այնտեղ,
Ուր չ'կայ էս բիրտ ժխորը անմիտ,
Ուր զարունն, արեւ ազատ են, պայծառ,
Եւ երբեքիան լոյսը նշմարիտ
Նոր կեանք կ'շողայ աշխարհի համար...
— Տո՛ւր ձեռդ, եղբայր, նայենք դէպ՛ հեռուն,
Մեր կեանքն ու սէրը կանչում են անհուն...

Ը.

Սե՛ւ-սե՛ւ ամպերն եկան թափուան սար ու ձոր,
Սե՛ւ-սե՛ւ դարդերն եկան լեցուան սրտիս խոր.
Էն մեծ սարը ամպերի մէջ կ'սգայ.
Իմ սիրտը միշտ դարդերի մէջ կ'խոկայ...
— Ջան, քամի ջա՛ն, ա՛ռ ամպերը, քշի՛ տար
Ջան, հոգի ջան, ա՛ռ դարդերս, քաշի՛, տար...
Դուրս ե՛կ, արեւ, դուրս ե՛կ շուտով եւ լոյս տուր.
Սարի ամբուլ սարի դօշին համբոյր տուր...
—Դուրս ե՛կ, ջէյրան, դուրս ե՛կ տանից մի տեսնեմ,
Դէք մուրազիս վերջին անգամ ես հասնեմ...

Թ.

Երկնքում աստղեր կան
Վառվռուն ու փայլուն.
— Քո սրտում լոյսեր կան
Միշտ անհուն ու գարուն...
Երբ հեռու երկնքում
Սուրբ ջահերը վառեն.
Քո սրտի բարձունքում
Անուրջներ կ'նախրեն...
Աստղերը սիրով լի՜,
Մեզ միշտ լո՜յս են տալիս...
— Դու ինչո՞ւ, նազելի,
Մեզ այցի չես գալիս...

1923.

Ժ.

Ես նիւթապէս մի անշան
Մասն եմ միայն տիեզերքի.
— Բայց միտքը իմ անմահական՝
Աստուած է նիշտ եւ հոգի՛...
Իմ նիւթական տունը մի օր
Փուլ եւ փոշի՛ կ'դառնայ.
— Բայց իմ հոգին սմբենազօր
Յաւերժաբա՛ր կ'մնայ...
Հոգսերը զո՛ւր՝ իմ տան մասին
Կ'գա՛ն, կ'երթա՛ն անօգուտ.
— Միայն հոգին է երկնային,
Որ չի՛ սիրում հոգսը սուտ...

1927.

ԺԱ.

Սրտագին դաշտային ծաղիկներ,
Որ շողում էք կարօ՛տ, լոյս ու սէր,
— Ձեզ նման անգիւման շողշողա՛լ չեմ ուզում...
Սիրասուն ամբուլներ եւ անֆուն բլբուլներ,
Իմ սրտին ե՛րգը ձեզ չի սազում...
Տխրադէմ իմ լուսին, ֆեզ պէս զուր
Ձեմ կարող լոկ նիրհե՛լ, արթնանա՛լ...
— Դո՛ւք, անվերջ երազո՛ղ իմ աստղեր,
Ձեզի պէս չեմ ուզում լու՛ռ մնալ...
— Եղբայր իմ. ցաւի մէջ, բանտերում, լծի տակ,
Միշտ ֆեզ պէս ես կ'ուզեմ ծով արցո՛ւնք հեղեղել...
Սեւ բախտին հակառա՛կ, իմ ձեռքին դրօշակ,
— Բռնուրքի՛ւն, ֆո կուռֆե՛րը կ'ուզեմ խորտակել...

1903.

ԺԲ.

Ես չեմ ժխտի ու չե՞մ խախտի վսե՞մ գործը
գիտութեան.
— Բանում նա է, միտքը հանում մինչեւ երկինք
ու Աստուած:
Բայց կայ մի բան, որ ծնում է իմ մէջ յոռի մի կասկած.
— Ի՞նչ է ուզում մարդը գտնել անցուդարձում
բնութեան.
Արեւների եւ աստղերի շարժո՞ւմը մեծ եւ անվերջ,
Թէ՞ նիւթերի իսկութիւնը, տարածութիւնը անտես..
— Այդ ամէնը ցոլացումը, անդրադիրը առերես —
Իսկ զօրութիւնը գործում է մեր սրտերում
եւ մեր մէջ:
Մեքենավա՛ր, եթէ կ'ուզես հիմքը տեսնել քո գործի,
Զուր ես նայում նորա դրսի՝ արտադրած աղմուկին.
— Մեքենայիդ կազմը դու տես, իսկը նորա անմեկին.
Զէ՞ որ միայն այնտեղ է լոկ պատասխա՛նը քո հարցի..

ԺԳ.

Ո՞վ է վառել ջահերը իւր տիեզերքի մեծ այգու մէջ,
Որ ներշնչեն տաքածուքեան իրադարձը, ելեւէջ.
— Ո՞վ է դրել նրագները իմ սրտի մէջ հոգեւոր,
Որ ներշնչեն ու լո՛յս բերեն այգիներիս անսովոր...
Տիեզերական ջահերը այն սէ՛ր ու կարո՞տ չ'գիտեն.
— Ճրագները իմ սրտի մէջ սէր ու գարուն կ'բերեն...
Եթէ մի օր նիւթը հզօր անհետանայ հիմնովին,
Երկնքի հուր ջահերը բի՛ւր միանգամից կ'հանգչին.
— Եթէ տունը իմ հոգածին փո՛ւլ գայ, կորչի՛,
անգիւման,
Ճրագներս հանգչելո՛ւ չեն, այլ կ'շողան յաւիտեան...

ԺԴ.

Քեզ եմ երգում,
Ով հալածուած ու տանջահար,
Կեանքդ զուլում,
Սիրտդ խաւա՛ր, իմ եղբա՛յր...
Քո արցունքն է յորդ ու առատ,
Որ հեղեղեց աշխարհը մեծ.
Քո հանգարը խոր ու ազատ
Արեւները յօրինեց...
Քո կապանքի ձայնն է հնչում
Օր ու գիշեր անսովոր.
— Կո՛ւ ու դա՛ռ դու ես կանչում
Յաղթութեան տէ՛ր դու բանուոր...

1919

ԺԵ.

Սիրո՛ւն աղջիկ, նազլո՛ւ աղջիկ.
— Որ սարերի զմրուխտն ես դու.
Գարնան հովիկ, սարի ծաղիկ, —
Դաշտի ժպիտը ազդու...

Աստղերը քիւր խոր երկնքից
Նեսել են քեզ քի՛ւր համբոյր.
Եւ արեւը իւր մեծ զահից
Քեզ տուել է արտի հուր...

Սիրուն աղջիկ, գարուն աղջիկ,
Սիրոյ երգեր մեզ ասա՛.
— Մեր սրտերին լոյս ու ծաղիկ —
Ցնորք, երազ միշտ խօսա՛...

1922

ԺԶ.

Ես կ'ուզեմ ոսկեշող արեւի լոյսի մէջ՝
Սաւառնել դաշտերով երկնամէջ...
— Կամ թողէք, որ գլխիս փոթորիկը պայթի,
Ես կռուե՛լ եմ ուզում կատաղի...
Երկնային սուր ու թո՛ւր կայծակներ,
— Ես կ'ուզեմ գալարուել ձեզ նմա՛ն...
Կամ տուէք լռութիւն, գերեզմա՛ն,
Եւ տանջանք ու կոիւ մահաբեր...

Կամ ոչի՛նչ, կամ տուէք ամէ՛ն ինչ.
Բերկրութիւն, կամ ցաւում,
Արեւներ ու զարո՛ւն կամ գայրոյթ մթրկի՛.
Կամ երկի՛նք անկռպար, կամ թէ մահ եւ զուլում,
Դառնութի՛ւն ու շղթա՛յ, կամ երա՛զը կեանքի...
— Ա՛խ, տուէք ինձ արե՛ւ, կամ կոիւ չարաչար,
Կամ միա՛յն գերեզման, մոռացո՛ւմ ու խաւար...

1902.

ԺԷ.

ԲԵՐԹՈՂ.

Ո՞վ է քո մէջ այդպէս խօսում անվրդով.
— Հուրն է իմ մէջ հոսում անշէջ, իբրեւ ծով...
Ո՞ւմ երգն է միշտ թնդում, խնդում յաղթաթաթ.
— Աստուածներն են իմ մէջ խօսում քաջաբար...
Ո՞ւմ քնարն է հնչում, կանչում, հառաչում.
— Երկինքն է միշտ նչում, գոչում եւ վե՜ր կանչում...

Սէգ լեռների յաւերժական հմայքով՝
Ու անտառի խորհրդաւոր երգն իր մէջ,
Կանաչազարդ դաշտի ժպիտը իր քով՝
Խոր ծովերի սուգն ու տրտունջը իր մէջ՝ —
— Նա է հզօր, որ յօրինում է արեւ.
Բերթողը միշտ կեանք է ծնում յարաւեւ...

1922.

ԺԸ.

ԲԱՆՈՒՈՐԻ ԵՐԳԸ.

Ե՛կ անցնենք ու գնանք
Դէպ հեռուն, դէպ՛ արեւ.
Կեանքը մեր յարատեւ,
Թշնամուն մեր դիրքերը չ՚տանք.
— Մեր քրտինքն ու արիւն,
Մեր տանջանքը անհուն՝
Երբ հոգի յաղթարար
Կ՚բերեն նոր արեւ մեզ համար...

Երբ կռիւն է ազնիւ,
— Մեր կռիւն է պատիւ
Երկնքին, աստղերին,
Գալիք սուրբ օրերի
Աժդահա քաջերին...
Շուտ բռնենք մեր ուղին այս կարմիր, —
— Միայն նա նոր գարուն կ՚բերի...
Թշնամուն մեր դիրքերը չ՚տանք
— Շուտ ելէք բանուորներ, քաջ ու ժեր,
Ձեզ կանչում է արե՛ւ աշխատանք...

Մենք անցնում ենք ազատ, անվրդով՝
Երկնքին արժանի՛ հայացքով...
Մեր կրծքում անջնջում...
Մրրիկներ են շրջում.
Մեր դէմքին, մեր գլխին
Կայծակներ են շաչում դառնագին...
— Միայն նա՛ — մեր զայրոյթը, հանգնար —
Կ'ստեղծի նո՛ր աստուած, նո՛ր աշխարհ...

Շուտ անցնենք ու գնանք
Դէպ հեռուն ու գարուն, —
Թշնամուն մեր դերքերը չտանք...
— Թող ննջի մեզ տանջանքը անհուն,
— Մեզ կանչում է արե՛ւ — աշխատանք...

1925.

ԺԹ.

Անսասա՞ն, ինչպէս ծովն անբաժան,
Ինչպէս հուր ու կայծակ, անխոով, —
— Նա գալիս է ազատ շարքերով,
Որ փշրի՛ կասպանքները դաժան...

Բիւր-հազար տարիներ՝
Հարկատու կաշկանդող բռնութեան՝
Մարդկութիւնն է անյաղթ, անվեհեր
Պահանջում արդար դա՛տ, դատաստան...
Նա գալիս է իբրեւ փոթորիկ,
Ձեռքին սուրբ դրօշակը կարմիր...
— Ստրուկնե՛ր, ձեր զարունն է գալիք.
Կանգնեցէ՛ք, խոնարհուէք շուտ եւ ժիր...

Բիւր-հազար տարիներ
Ձեր տանջանքն էր պատել ողջ երկիր,
Ձեր արիւնն էր ներկել արշալոյս,
Ձեր ցաւով էր աշխարհ տառապում,
Ձեր տանջանքն էր պատել ողջ երկիր,
— Շարժեցէ՛ք դրօշակը կարմիր...

Եւ հազար տարիներ
Ձեր սգով էր մեր կեանքը անմիտ, սեւաւոր,

Ձեր արիւնն էր նիրկել արշալոյս,
Ձեր կապանքն էր շաչում ահաւոր,
Ձեր ցաւով էր լալիս վերջալոյս...
Ու քամին իւր տխուր ժամերին
Ձեր սեւ օրն էր խօսում, շրջելիս...
— Օ՛, զազան դահիճներ դառնագին,
Ձեզ վրէ՛ժ, դատաստա՛ն է գալիս...

Դահիճներն են անդուր սարսափում,
Դահիճներն են տխո՛ւր, փոքրոգի.
Ճահիճներն են իզուր տարափում, —
— Որ կ'գայ դատաստա՛ն երկնքի...
Անսասան, ինչպէս ծովն անքաժան,
Ինչպէս հո՛ւր եւ կրակ, ու որոտ
Շարժուեցէք հերոսներ նոր զարնան,
Ձեզ կանչում է կռուի սուրբ հոգին ու կարօտ...
Եւ կայծակը ձեզ սուր,
Ձեր սրտում բոց եւ հուր՝
Շո՛ւտ առաջ, բանուորներ քաջարի՛,
—Զարկեցէք անցեալի կուռքերին.
Թող գարունը ազատ օրերի
Շողայ լոյս ձեր սրտին, ձեր բախտին...

1916.

Ի.

ՀԵՖԻԱԹՆԵՐ.

Կեանքի բոլոր ուղիներին, եւ իմ մոլոր օրերին
Սրբուքեան պէս միշտ անվեհեր սիրել եմ ես
հեքիաթներ.
— Հեքիաթների կարօտներով միշտ արբած է իմ հոգին,
Աղբիւրի պէս հեքիաթները փսփսում են խինդ ու սէր:

Ոսկի թեւեր, աւիւ ձեւեր, միշտ վառվռուն ու շարժուն՝
— Սուրբ հեքիաթի հերոսները կեանքին արեւ են բերում.
Նուրբ հեքիաթի փարոսները՝ արեւի պէս կախարդուն՝
Կանչում են մեզ նոր գարունքի անմահական երգերում..

Ո՞ւր են, չ'կան իմ անխոով, հազար նազով ու սազով,
Հեքիաթները պարզ ու վճիտ, անարատ...
— Դուք, երգիչներ. ձեր երկնային քնարով
Յօրինեցէք մեզ հեքիաթներ միշտ ազատ...

Ինձ կարի տեղ մայրս առատ հեքիաթով է միշտ սնել.
Երազներով լի՛ գիշերը եւ իրիկուն կախարդուն՝
Միշտ հեքիաթով լի յուշերը պատել են ինձ անարգել,
— Հեքիաթն է միշտ թեւաւորել կեանք ու հոգիս
զուարթուն...

Հեքիաթն է միշտ աղբիւրի պէս աշխարհի վի՛շտը ասում.
Հեքիաթն է նիշտ զեփիւռի պէս կանաչ կարմիր թեւերով՝
Անցեալը մութ, ասես մի գուբ, մեր սրտերին միշտ
խօսում...
— Հեքիաթի՞է սիրտս կարօտ հազար ու բի՛ւր ձեւերով..

Անտառ ու ապր, ծով եւ ալիք հեքիաթներ են
միշտ շարում.
Իւր սրինգը հզօր ձեռին՝ աղմկարար ժիր քամին
Անմահական հեքիաթներ է մեզ եթերից միշտ բերում.
— Ա՛խ, հեքիաթի կարօտով է լեցուած ծարաւ
իմ հոգին...

1924.

ԻԱ.

Միտքս ազատ, դիրքս հաստատ՝ —
— Արեւն, աստղերը հարազատ...
Ելէ՛ք սարեր, ծով ու ալիք,
Անտառ ու քո՛յս, արի մարդիկ,
Ելէք, եկէք խորհուրդ անենք,
Ճրագները միշտ վառե՛նք...
Եթէ ասեն. ո՞ւր էք գնում,
Ո՞ւմ դէմն է, որ դաւ էք սարքում.
— Թողը պոկենք մեր լուրթեան,
Իսկը տեսնենք էս քնուրթեան...
Ասենք անվախ եւ քաջարի՛.
— Դատ ենք ուզում երկնքէն,
Թող դուրս հանի միտքն աշխարհի...
Ի՞նչ է պահել մեզնից իւր էն...

ԻԲ.

ԶՄՐԱՆ ԳԻՇԵՐ.

Բուք ու բորան, ձմրան գիշեր,
— Սառնամանիք դառնալի.
Վիշապները խաւար ու ծեր՝
Բերները բաց, ահրելի,
Մռնչում են եւ նչում,
Մահը գործի են կանչում...

— Ո՞ւր է, չ'կան արեւ, գարուն,
Ինչպէ՞ս կորան ծաղիկ ու վարդ.
Վշտի աշխարհ, վիշտն է անհուն,
Կեանքը ցուրտ է ու անզարդ...

Թամին է խօլ, անյաղ — վայրագ
Դոներ բաղխում, զարնում սրտին.
Թամին է լոկ թռչում արագ՝
Սեւ սրինգը իւր սեւ ձեռին...

— Ի՞նչ ես կորցրել, ով անկոչ հիւր,
Ումն ես թաղում տխուր—իգուր...

Ի՞նչ ես փչում, անվերջ յուզում,
Երգդ անհուն ի՞նչ է ուզում...
Նա վշվշում է, խոր լալիս,
Տխուր սրտին ձայն է տալիս.
— Գարնան յուշեր սէր ու խնդում,
Երազների ոսկի՛ կամար.
Մահուան տխուր ձեր մահինում
Հանգիստ քնէ՛ք, փարուէք իրար...
Սեւ սրինգով այս մութ գիշեր
Ինչ եմ ասում ես ձեզ համար.
— Քնէ՛ք առմիշտ սէր ու յուշեր,
Լոյսեր չ'կան էլ ձեզ համար...
Վշվշում է ու խոր լալի՛ս,
Սար ու քարին ձայն է տալիս...

1904.

ԻԳ.

Օրերն ու տարիք մէկ-մէկ, միալար,
Կարծես թշնամի անմիտ ջուլիակներ,
Յաւերժի հանդէպ արագ ու խոնարհ
Մանում են, գործում սեւ պատանքը մեր...
Անցնում են ահա՝ մոռայլ ուսերին
Միշտ ձախորդութեան բեռները բարձած...
Բերում են, լեցնում հլու մեր հոգին
Կրքեր վայրենի՛ եւ թունաւորուած...

Եւ մենք այս բանտում, աշխարհի բանտում
Ձանձրո՛յք ենք ծծում կեանքի ակունքից.
Իսկ մեր սուրբ հոգին հեռու է ձգտում,
— Ազատ ու հեռու կապանքի հովտից...
Ո՞ւր է բանական այն կեանքը բուրեան,
Որ արարչական ծնել է հանճար, —
Ո՞ւր են աւետեաց լոյսերը գարնան,...
— Ասա՛, ով երկինք, ի՞նչ ես դարձել քար...

1904.

ԻԴ.

Գործս լինէր երկնքի մէջ,
Փորձս լինէր երերում.
— Նոր սարք ու կարգ, նոր երկնակէջ
Կ'հիմնէի աշխարհում...
Ես նիւթական էս ժխորից
Կ'թողնէի լո՛յս, արե՛ւ,
Դարուն ու սէր միշտ բերկրալից,
— Բարիքն արի՛, յարատեւ:
Տիեզերքի մէջ վեհ եւ ազդու
Միտքը հզօր ու անմահ
Կ'կարգէի մեզ լուսատու,
— Էլ չէր լինի վիշտ ու մահ:
Չէի թողնի եւ ոչ մի բան
Էս ժխորից ցաւագար.
Միայն հոգին անմահական
Կեանքին ուղի՛ ցոյց կ'տար...

1927.

Իե.

Մարդը ահա միտք է անում ամէն օր,
Որ վերանան ազգերի մէջ զօրքն ու կռիւը խարդախ —
— էլ չլինին զէնք ու զրահ, ռազմանաւերը հզօր,
Որ ազգերը ապրեն ազա՛տ, միշտ հարազատ ու
խաղա՛ղ...
Մանուկները՝ խարոյկի մօտ՝ քաց փայտի —
Փորձ են անում անմտաբար եւ անհոգ,
Որ չ'լինի ծուխը նորա դառնալի...
— Բայց ծուխը կայ դեռ անփոփոխ եւ իրօք...
Պատերազմը ազգերի մէջ, կրակ ու զէնք, զօրքը խիստ
Ծուխ են միայն կռիւների, որ կան մարդու հոգու մէջ..
Եթէ կ'ուզէք ազգերն ապրեն եղբօ՛ր նման ու հանգիստ,
— Փոխէք սրտի կարգ ու սարքը, ներիակն ու վէն
նորա մէջ...

ԻԶ.

Մեր լայն երկնքում բանակ առ բանակ
Ամպեր են շարուած անբաւ դառնութեան.
Մեր վեհ սրտերի երգերն ու նուագ
Բանտում, կապանքում բնաւ սեւացան...

Եւ եդեմական վայրերում փարթամ,
Ուր կեանք էր հոսում գարնան կարկաչով.
— Արիւն ու մոխիր անփայլ ու թառամ
Պատել են չորս կողմ մահուան հառաչով...

Իսկ յաւերժութեան կրծքից միալար
Անցնում են դարեր մռայլ ու դաժան.
Եւ շիրիմ դարձած մեր սրտի համար
Ոչ յոյս կայ, ոչ սէր, ոչ արեւ գարնան...

1904.

Իէ.

Արնակարկաչ կեանքի հովտից ծով պսակով
Անյուսութեան դանդաղ ու քարշ ամպերն ելան.
Դերեզմանուող սեւ լռութեան կամարներից
Անուրջ ու լոյս հրեղէն թեւով դողդո՛ջ առան...
Դահիճներն են ոտքի ելած՝ սպասում խեղճ զոհերին,
Ճահիճներն են ապականուած՝ արտաքորում
թոյնը հին...
Խաւարը մութ ամպի քօղով երկնակամարն է պատել.
Մութ է չոլս կողմ. աստղ ու արեւ չեն երեւում քնաւին,
Հողմը անյագ չարագուշակ խոկում, ագում է անհուն
— Ո՞վ է լեցրել կեանքի ձորը անվե՛րջ ու խո՛ր
դառնութիւն...

Ա՛խ, կենարար հզօր Ոգու
Ընտինքը ջերմ իմ շրթերից հեռացաւ.
Ու իմ հոգու անարեգակ ծով երկնքից
Կեանքիս ջահեր, երազ աստղեր՝
Կայծակահար վշտի թափից
Մէկիկ մէկիկ ընկան, կորա՛ն...
Ո՞ւր է, չ'կայ
Դարնանաշունչ տենչանքներիս
Այն յաղթական արեւը վառ...
Ու՞ր է, չ'կայ՝ սրտիս վկայ —
Իմ աւիւնի արարչական կրակը յար, աստուածարար..

— Ասէք, մարդիկ, ինչպէ՞ս կորաւ եւ ո՞ւր կորաւ
Իմ երկնային վեհատեսիլ միտքը յամառ...
— Աւաղ, Հոգիս, որ յոյսերի
Արեգակուող երկինքն էր վառ,
Նման է սին ու փուլ եկած
Հիմքը խորտակ սեւաւոր տան...

Անյուսութեան սեւ բանտերի մէջ՝
Կիրք ու ցաւի ծանրութեան տակ
Հոգուս սիւները շուտ ընկա՛ն ու փուլ եկան.
Եւ պատերը նորա հզօր ու յստակ,
Որ հրեղէն ցնորքներից էին հիւսուած, —
Ընկա՛ն, կորա՛ն, էլ չ'կա՛ն...
Այդ հոգեւոր աւերակաց մէջը այսօր
Վհատութեան ու սեւ մահու
Վրաններ են զուր տարածուած...
Եւ խորտակուա՛ծ աստուածութեան
Անեան տակից՝
Ցայտում է յորդ ու արնաշիր
Տխուր ու հուր կարմիր աղբիւր...
Նորա անհուն, վշտատարած ակունքներից
Յորինում եմ երգերը իմ մարգարիտ...
— Իմ երգերը այն աղբիւրի ցայտերից
Կեանքի սաղմոսը ասում են միշտ տխո՛ւր...

1904.

ԻԸ.

Իմաստո՛ւնն ես եւ պրքուն ես դու մտքովդ խորիմաց
— Քեզ ես միայն տեսնում ունայն կեանքի տխուր
էս ձորում.
Աղմկում ես օր ու գիշեր, դա՞տ ես կանչում մոլորուած.
Եւ ինքնագով՝ քո ցաւը միշտ հաշուի առնում
ու գրում...

Դու լաւ գիտես, որ մենակ չես իրրեւ ապրող
մեր հովտում.
— Նայիր չորս կողմ. հազար ու բիւր կենդանիներ
ու թռչներ
Միշտ քեզի պէս կեանք են վարում, քո պէս ապրում
ու տանջւում.
— Ինչո՞ւ միայն քեզ ես տեսնում եւ քո գործը,
տնաւե՛ր...

Քո ուրացող հոգսերը թող, քնիր կեանքը յիրաւի.
— Տես տանջանքը քո պէս ապրող էս բովանդակ
աշխարհի,
Քո ցաւը լոկ մասն է չնչին յաւերժական մեծ ցաւի,
— Զուր ես միայն քեզնով լեցնում գրքիդ էջերը բարի:

Դու քնուքեան տէ՞րն ես հզօր, քէ՞ չար գազան
մի վայրի՛·
— Ի՞նչ ես անվերջ մահ տարածում երկրի վերայ
ախնայ,
Միսը ուտում անմեղների, կեանքը զոհում բոյսերի, —
Եւ դա՛տ կանչում, որ ցաւդ շո՛ւտ եւ բնաւին վերանայ··

Մարդ ես անհուն եւ իմաստուն, մտքերդ ժի՛ր
երկնացիր, —
— Թող չար գործը, արեան փորձը· կեանքին նայիր՛
խնամքով·
Շահիդ համար, կրքիդ համար անմեղներին մի՛ զոհիր,
Որ քո դատը երկի՛նք հասնի, քեզ կեանք բերի անխոով··

1927·

ԻԹ.

ԱՄՊԸ.

Ո՞վ է տեսել ամպը ջահել գարունքին,
Ողբը նորա խոր ու սիրել, սրտացա՜ւ.
Ո՞վ է լսել լացը նորա դառնագին,
—Սիրտը մաշող կրակները սրտալշաւ...
Կուչ է գալիս ամպը սիեղ երկունքից,
Անչափ — խուսնապ միշտ երեսին իւր ծանօթ, —
— Աղմուկ ու ցիչ, կայծակ ու շանթ եւ որոտ...
Եւ նա լալի՜ս, ծով է տալիս արցունքից...

Ո՞վ չի տեսել ամպը ձմեռ կիսամեռ.
— Խոկում է նա առանց լացի, — մեղմաբար...
Սգում է նա ինքը իրան, անտարբեր,
Իւր արցունքը ձիւնի փոխած եւ մռայլ...
Ձիւն է գալիս ամպի տխուր աչերից,
Դերձակը ժի՛ր պատանքը մեր թոռ կարի.
Ամպն է լալիս իր խո՜ր, հզօ՜ր ցաւերից,
— Ողբում է իւր օրը տխուր աշխարհի...

1927.

Լ.

Չեմ հասկանում, ի՞նչ են անում երկինքն, արեւ
ու աստղեր,
Երբ ցուրտն ու ցաւ, խաւարն անբաւ տիրում են մեզ
անարգել.
— Չեմ հասկանում, ինչի՞ համար են ջրերը ծովերի,
Երբ նոցա տեղ հեշտ կ'բռնէր արցունքը լի խեղճերի՛..
Ինչի՞ համար է յօրինած աշխարհը մեր կենդանի,
Ի՞նչ միտք ունի կեանքը մարդու, սէրը ազգու,
անուանի՛,
— Երբ մահը չար, կեանքին օտար, կործանում է
ամէն ինչ,

Իսկ սեւ բախտը չի խնայում զարո՛ւն, սէր եւ ոչինչ,
Այնտեղ ուր կան արեւը վառ, ճշմարիտը եւ բարիք,
Ինչի՞ են պէտք խաւարը սեւ, կամ պատահար ու չարիք.
— Ո՞վ է ծնել սրարչութեան էս պակասը եւ արատ.
Ի՞նչ է իզուր նա շփոթել խաւար ու լոյս, լաւ ու վատ..
Ես, որ մի խեղճ մահկանացու, վարկեանի չափ
կեանք ունեմ,
Չեմ հաւանում արարչութեան կարգերը հին ու ներիսակ.
— Այգեբան ես, պէտք է նայես քո բոյսերին լոյսի դէմ,
Որ բերքերդ լինին մաքուր, ե՛ւ հոտաւէտ ե՛ւ յստա՛կ..

1927.

ԼԱ·

Ես շատ յանախ միտք եմ անում
Ու մտքերիս հարց տալիս·
Ո՞վ է էապէս կեանքը մանում,
Ո՞ւմ ճախարակն է լալիս···

Գոյնը տարբե՛ր, ձեւը ջո՛կ·
Նիւթը ծա՛նր է կամ թեթեւ·
— Իսկը էդպէ՞ս է իրօք
Ինձնից անկախ ու դրսեւ···
Մեծն ու փոքրը, քաշ եւ գոյն
Ունի՞ն արդեօք գոյութիւն···
Հերթը, երթը իրերի
Կատարւում է բացէբաց·
— Իսկութի՞ւն է սա արի,
Թէ՞ լոկ երազ անիմաց···
Ով է տէրը՝ տնօրէն
Աշխարհների մեծ ու շէն···
Տիեզե՞րքն է ինձ հոլովում՝
Ինչպէս տերեւ՝ հողմի մէջ·
Թէ՞ միտքն է այդ կառարում,
Ծնում անթիւ հլեւէջ···

Ո՞վ՝ ում համար անսասան
Օրէնքներ է յօրինում·
— Ե՞ս, թէ՞ զօրքը բնութեան,
Որ երեւոյթ է միայն···

1927·

ԼԲ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ.

Իմ հոգին էր խաւար, իսկ սրտումս ժխոր.
Եւ տիեզերքը հոսում էր իմ դէմ՝
Կարծես խորք մի քաօս:
Էս աշխարհը տեսնում էի զո՛ւր, անսովոր,
Իմ լեզուն էր կոպի՛տ, վայրենի ու անխօս...
Երբ ես ծունկ չոքեցի էս կեանքի սեղանի առաջին,
Իմ մտքի դաշտերից, իմ սրտի խորանից
Դառնութեան խիտ ամպերը եկան,
Իմ նակտին տիարկու շարուեցան...
Հիւանդոտ իմ դէմքին խոր ղժոխք էր լողում,
Իսկ սրտումս տեղ՝ տանջանքի ծովի մէջ
Մերթ կայծակ էր շողում...
Ու ես համր էի, խուլ, վայրենի՛...
Կեանքի ծովն իմ առաջ յար յորձանք էր նետում
Եւ քշում ալիքներ...
Որ տեղ գալարում էին խոր,
Մերթ վշշո՛ւմ ու քաշում,
Եւ վազո՛ւմ, գազազում, —
Որոտում էին խո՛ւլ ու հզօր...
Կարծես իսկ դեւի պէս զայրացած՝
Նրանք ջանում էին վեր բարձրանալ.

— Դէպի վե՞ր, դէպ երկինքը, Աստուած,
Նորա կուրծքը նեղքել եւ բանալ...

Միշտ հեղեղ էր թափւում երկնքից,
խիստ հեղեղ կրակի՞ ու շանթի.
Եւ աշխարհը, ասես, մոլորուած
կորուցել էր ուղին իւր հերթի ու երթի...
Այդ պահին դառնագին՝
Անասուն ու թռչուն՝ ահաբեկ
Դեգերում էին լուռ ու մթին
Ճանկերում անթափանց խաւարի.
— Կեանքը քիրտ էր, անգութ ու վայրի՞.
— Չ'կար լոյս ու արեւ. չ'կար սէր ու գարուն.
Միայն սով էր տիրում,
Ոգու սով ընդհանուր,
Որ սարսափ էր ազդում,
Կաշկանդում ու քանդում մեր սրտերը անհուն...
Ու ճչում էր ահեղ կեանքի խիղճը գերուած.
Խեղճ երկիրը՝ խաւար ու մենակ՝
Ուսերին դրած իւր բեռները անդուր,
Դառնութեան փոթորկից
Ու ոգու մեծ սովից
Զարգանդում էր, դողում եւ առաջ գլորւում...

Եւ եկաւ աշխարհի էութեան՝
Եւ չարի ու բարու,

Տանջանքի, քաւութեան
Հեղեղատը հուժկո՛ւ...
Հեղեղատը եկաւ յաղթաբար ու անբաւ
Եւ նետուեց իմ կրծքին ու զարկեց իմ սրտին.
Նա փշրեց կապանքները արնոտ,
Խորտակեց հոգեւոր շղթանե՛րն ու կարօ՛տ...
Ու բացուեց իմ լեզուն աստղերի, արեւի.
Եւ երկինքը սրտիս իւր լոյսերը վառեց...
Էն օրից իմ խօսքերն են զայրոյթ,
Ու իմ երգը կարող.
Իմ մտքերը ահե՛ղ, թեւաւո՛ր,
Երկնատես ես հոգի՛ եմ, քերթո՛ղ...

Իմ սրտի այրիւրից վեհարար
Միշտ հեղեղ է հոսում յոյսերի ու ջանքի,
Ճիշտ քնար է խօսում նոր զարնան ու կեանքի՛.
— Բանաստեղծ արեւի՛, լոյսերի՛,
Նոր արեւ ու երկինք եմ հիւսում.
Ես հեղեղ եմ հոգու, վեհութեան,
Եւ աստուած եմ մտքի.
— Բնութիւնն է իմ մէջ իւր սաղմոսը խօսում...

1904.

ԼԳ.

Ողջո՛յն ձեզ, իմ ձախորդ սեւ օրեր եւ տանջանք,
Բիւր հոգսեր, վիշտ ու սէ՛ր, ցաւ ու ջանք...
Մանկութեան օրերին՝ մեծութեան ժամերին
Դուք էիք միշտ բաղխում սրտիս դուռը մթին.
Դուք էիք մտքերիս թեւ տալիս,
Որ միշտ վե՛ր սլանայ.
Դուք էիք ինձ այցի՛ միշտ գալիս,
Ու կանչո՛ւմ անխնայ...
Թէ իրօք իմ սրտին չլինէր ձեր կապանքը ամուր,
Թէ իմ մէջ չյուզուէր փոթորի՛կ, շանթ եւ հուր,
— Ո՞վ կ'երգէր այս մեծ երգը կեանքի ու կարօտ
սրտերի՛,
Ո՞վ կ'տար պատգամներ երկնքի ու հեռու աստղերի՛...

Ինձ ընկեր ու ծանօթ շուտ թողի՛ն, հեռացան,
Իմ յոյսերը անցա՛ն, շէնքը իմ ցիրուցա՛ն, իմ լոյսերը
կորա՛ն, —
Միայն դուք անմեկին կ'մնաք սրտիս սեւ օթեակում.
Ձեզնից զատ ես չունեմ մտերի՛մ էս կեանքում...
— Զէ՞ որ դուք ինձ բերիք երազներ
Գարունքի ու մտքի.

Չէ՞ որ դուք ինձ տուիք նուրբ թեւեր
Երկնքի՛ ու մտքի՛...
Ողջո՛յն ձեզ, իմ ձախորդ սեւ օրեր,
Իմ տխուր մենութիւն.
— Ձեր թեւին է հոգիս վե՛ր նախրում անարգել՛
Դէպի իւր հայրենիքը անհուն...

1917.

ԼԴ.

ԲԱՂԱԲԸ.

Ճիշտ մի վիշապ՝ հազար լեզուով ու գլխով,
Միշտ մի խուլնապ է անսովոր ու դաժան:
Դրսում ցասում, իրարանցում,
Ներսում կռիվ, անվերջ հաշիվ ու հարցում.
— Ո՞վ է այդպէս աղմուկ անում իրրեւ ծով...
Մարդն է միայն իրրեւ զազան,
Կիրքն է նորա վարա՛ր հոսում,
Կռի՛վ, հաշի՛վ է մարսում...
Միշտ անխուսափ ու անձեռ.
Ալեկոծուում մրրկահար ծովի պէս...
— Ի՞նչ է ասում, ո՞ւր է հոսում կիրքը սի՛ր...

Ահա տներ, ցաւի բներ, կիրք ու կռիվ անարդար.
Ահա տանջա՛նք, խաւար ու ջա՛նք հոդմահար,
Դժոխք ու լոյս, մահ ու զոհեր բռնութեան...
Շարժումները վայրենի՛,
Ինքը, ասես, անհուն է միշտ,
Գազանի՛ պէս արիւն է նիշտ,
Խիստ այլանդակ գո՛ղծ ունի...

— Ո՞վ է ծնել անմտությեան էս հանդէս...
Քաղաքն է միշտ հոսում, խօսում ծովի պէս...
Տեսէ՛ք, ի՞նչպէս օրօրում է խիստ անմոռնի՛ ու անկա՛պ
Իր հաշիւն է շուկայ բերում նա անուանի՛ եւ շտապ...
Աչքը չռած, ասես կրքի մի զանգուած՝
Խունաւ է խոր կեանքը բռնել բազմաձեւ...
Ի՞նչ վայրենի՛ նա տեսք ունի գազազած...
Ասա, Տէ՛ր իմ, ո՞վ է ծնել այս գործը,
Ո՞վ է բերել կեանքի համար այս փորձը...
Ի՞նչ է ասում,
Ո՞ւր է հոսում,
Ասես մի ծով, հազար գլխով քաղա՛քը խե՛ւ...

1918·

Լե·

Երանի՜, ով կարող է վատնել իւր հոգին,
Որ անցնի այս ուղին եւ հասնի՜ երկնքին...
Եւ հազար երանի՜,
Ով կարող է այստեղ, էս ահեղ կռուի մէջ
Սիրտը իւր տանջանքովը լեցնել,
Կեանքը իւր անց կենալ դառնութեան ծովի մէջ, —
Որ այնտե՜ղ իւր հզօր ցնորքին նա հասնի՜,
— Երկնքի՜ն, արեւի՜ն տէր լինի...

Եւ հազա՜ր երանի,
Ով իւր մէջ հնարում է անթիւ աստուածներ
Եւ նոցա տապալում անընդհա՜տ, ամէն ժամ·
Ով պայքա՜ր է վարում անվեհեր,
Որ այնտեղ դառնայ տէր տիեզերքին լուսաբեր...
Երանի՜, ով իւր մէջ, իւր հոգու մեծ փորձում
Մրրիկնե՜ր է ցանում ու հնձում·
Ում սրտում բռնկւում է որոտ,
Եւ կայծա՜կն է շողում երկնքի՜ սուրբ կարօտ...
— Նա կարող է ապրե՜լ մահուան սուրբ յոյսերով...
— Նորա սիրտն է յոի՜ զարնան նո՜ր լոյսերով...

1922·

ԼԶ.

Անմահ սիրտ ու հոգի,
Մարդը զարդ է անհուն տիեզերքի.
— Ո՞վ կարող է ասել մեր իմաստը ներքին,
Արդեո՞ք երբ, կամ ինչպէ՞ս է ծագել մեր հոգին...
Միշտ հզօր մարդկութիւն իւր անվերջ ըղձերով,
— Անյատա՛կ խորութիւն, անվախճա՛ն մի մեծ ծով...
Ո՞վ կարող է մտքով յաղթաբա՛ր
Ի ներքո՛ւստ թափանցել այս աշխարհ...
Մէկը կա՞յ, որ այս քարը տեղից գէթ շարժի.
— Ի՞նչ հնք մենք՝ մի կամո՞ւրջ
Ոչնչից դէպի կեանքն յաւերժի.
Մի ձեռնա՞րկ տիեզերքի վե՛հ եւ լուրջ,
Թէ՞ միայն մեր հոգին արշալոյս է խորին...
Կամ գուցէ զառամեալ գոյութեան
Արեւմո՞ւտքը վերջին...

1917.

Լէ·

ԱՂՕԹՔ·

Լսիր ինձ, դո՛ւ, երկինք ահաբեր,
Դո՛ւ, վերին տիեզերքի անյայտ տէր·
Ամէն տեղ, ամէն ժամ դու տեսնում ես չարիք,
Միշտ ոնիր ու տանջանք, միշտ պատիր ու կարիք···
Դու տեսնում ես արիւն, ես զուլում, ես աւեր·
— Դէ՛հ, աստ՛· էլ ինչո՞ւ ես լռում անտարբեր···

Երկնային մարմինները անթիւ, ներդաշնակ
Քո հզօր խորհրդով են անհուն կեանք վարում·
Անխոով են հովիտ ու լեռներ,
Համերաշխ են բոյսերն անտրտում···
Անասուն ու թռչուն լուսնի տակ
Միշտ ապրում են ուրա՛խ ու շիտակ···
— Մինչ այստեղ՝ մարդու չա՞ր հովիտում —
Դու տեսնում, համբերում ես ոնիր,
Ու անմիտ ու ներիակ ոյժերի մի պայքար···
Մեր սրտում մրրկում է դժոխքը պատիր,
Մեզ քշում են սարսափը, ու մահն ու խաւար···
— Աստ՛ ինձ, տիեզերքի անմահ տէր,
Որ շարժում ես անթիւ երկնային բանակներ, —
— Արդեո՞ք միշտ կ'լռես· թէ՞ մի օր անսասան
Կ'կանգնե՛ս դատաստան ցաւագար մարդկութեան···

1922·

ԼԸ.

Ի՞նչ էք խորհում օր ու գիշեր,
ա՜յ սարեր.
Ի՞նչ մտքեր են, կամ ի՞նչ յուշեր, —
կաշկանդել են ձեզ, սարե՛ր...
Ձոյս բնութեան գէսք ու գահից
Բաժի՛ն ունիք դուք առատ.
Ձեզ ամէն օր երկնքի մօտ՝
Ողջունում են բի՛ւր աստղերը
լուսազարդ.
Ձեր լանջերը՝ գարնան կաթո՛ւտ,
— Ծաղիկներին մա՛յր են սիրող ու գթոտ..

Երբ արեւն է զարթնում քնից
Ու բարձրանում իւր գահին.
Բարեւը իւր բերկրալից,
Համբոյրը իւր առաջին
Ձեզ է տալիս, ա՜յ սարեր,
Ձեզ է գալիս, ջա՜ն սարեր...
Արշալոյսը սիրադէմ
Ժպիտը իւր երկնային,
Խորհուրդները իր վսե՛մ
Ձեզ է բերում սրտագի՛ն...
Երբ վերջալոյսն է լալիս,

Սգում վերջին իր կարօտ,
— Իր ջահերը արիւնոտ
Միայն ձե՛զ է նա տալիս...

Ի՞նչ էք լռում օր ու գիշեր,
Երկնածարա՛ւ ա՛յ սարեր.
— Ի՞նչ մտքեր են, կամ ի՞նչ յուշեր —
Կաշկանդել են ձե՛զ, սարեր...
Ձեր ուսերին ասող ու արեւ
Սէ՛ր են շնչում գեղեցիկ.
— Ի՞նչ էք լռում դուք յարատե՛ւ,
Ձերն է լոյ՛սը եւ զատիկ...

1920.

Լ.Թ.

Երգի տենչը մաքած է իմ մէջ.
Ոչ կապոյտ ծովերի հեռաստանը շքեղ,
Ոչ աղմուկը վազող ջրերի,
Ոչ անտառն ու հովիտը բիւրեղ, —
Որ յանախս երազումը սուզուած,
Զեն դիւրում իմ սեւ սիրտը բնաւ.
— Իմ հոգի՛ն, իմ քնա՛ն ալիւնոտ
Այլ ցաւով է տարուած.
— Նա կուռի է կարօտ...

Երգի տենչը մաքած է իմ մէջ.
Ոչ հզօր երկնքի խորութիւն,
Ոչ աստղերը հեռուն,
Որ յանախս երազում են անյայտ մտքի մէջ, —
Զեն դիւրում, կախարդում իմ քնար.
— Այս վհատ օրերին
Ա՛յլ հոգսեր են յուզում ցաւագար
Ու մռայլ իմ հոգին...
Երգի տենչը մաքած է իմ մէջ.
— Տես, աղմուկ է լսում.
Դա — կսկիծ, հառաչանք է եւ լաց
Շղթայուած մարդկութեան՝
Բանտերի խաւարում:

Դա՝ կարկաչն է արեան բիւրաւոր զոհերի,
Որ դժոխք էս կեանքի ափերից
Դէպ հեռուն, դէպի ծովն է տանում
Մեր ամօթն ու կարօտ, մեր զայրո՛յթը արի...
— Ի՞նչ կարող է անել անօգ երգը էստեղ,
Երբ կռիւ է մեզ պէտք քաջարի՛, —
— Մի կռիւ յաղթակա՞ն, վերջնակա՞ն եւ ահեղ...

Իմ հոգին դառնագին միշտ կռուի՞ է կարօտ·
— Վեհ կռիւ աստղերին, տիեզերքին...
Երկնքից, փոթորկից ու ծովից
Ա՛ռ նոցա զօրութիւնն ու կորով,
Տա՛ր անվախ կռուի դաշտ սեւ կայծակն ու որոտ...
— Ի՞նչ կարող է անել անօգ երգը էսօր,
Երբ ճնշում է կապանքը հզօր...
— Ես կռիւ եմ ուզում յաղթական,
Մի կռիւ, որ բերի նոր արեւը գարնան...

1903·

Խ·

ԹՈՂ, ԵՍ ՀԱԼԱԾՈՒԵՄ·

Թող սուր, երկաթէ հալածանքն յամառ
Ինձ միշտ հետեւի՛, իբրեւ ուրուական,
Եւ բիւր ցաւերով պատէ իմ ուղին·
Աքսոր թող ընկնեմ աշխարհէ աշխարհ,
Թող փորձիկներ պայքին իմ գլխին,
Թող որ չունենամ ընկեր, ապաստան,
— Ես չեմ ափսոսայ···

Հոգ չէ՛, թող լինի·
Ահա կախարդուն վերջալոյսը հուր,
Որ մահ ու կեանքի սահմանն է տխուր·
Նորա յետեւից դանդաղ ու դաժան
Իւր գահն է ելնում գիշերը մթին,
Ու կործանարար իր շունչը մահուան
Փչում է երկրի անփայլ երեսին:
Եւ սեւ ստուերներ, ինչպէս դահիճներ,
Սուրում են չորս կողմ տխուր ու մռայլ,
Ու սուրբ արեւի շողերը վերջին
Բռնում են, զոհում անգութ ու յամառ···
— Էդպէս էլ մարդիկ անգութ, անխնայ
Կեանքի ափերից թող ինձ հալածեն·

Թշնամիներս անիծոյք ու լկտի
Թող ինձ պարսաւեն եւ միշտ քարկոծեն...

Ինչպէս փոքրիկի ահեղ ժամերին
Ամպերը մռայլ բանակ առ բանակ
Ծրարում են խիտ երկինքը խորին. —
Փորձանքը դաժան եւ դժոխածին,
Վհատութիւնը եւ վիշտն ու կարիք
Թող սիրտս պատեն, կաշկանդեն հոգիս...
Եւ ձախորդութեան ամպե՛րը դաժան
Թող անվերջ պատեն կամարը կեանքիս...
Եւ թող դադարկիւն
Ես միշտ թափառեմ մենա՛կ, անընկեր.
— Արար աշխարհը թող դժո՛խք դառնայ,
Միայն թէ արթուն իմ սիրտը մնայ,
Եւ ազատարար իմ վսեմ հոգին
Միշտ լուսաւորի հեռու իմ ուղին...

Եւ ուր էլ գնամ,
Որտեղ էլ լինիմ ծիր ժամանակի
Եւ տարածութեան իրադարձի մէջ,
Ինձ հետ կ'լինի հոգեւոր կեանքի
Պսակը վսեմ նակտիս վշտաբէջ...
Աշխարհը համայն իր հզօր կազմով
Դժոխք ծաւալի՛ եւ աւեր դառնայ.

— Միայն թէ իմ մէջ հպարտ կենսագով
Գիտակցութիւնը միշտ անյաղթ մնայ...
— Թող ես հալածուիմ...
Ուր էլ որ լինիմ,
Ամէն տեղ հպարտ իմ միտքն ու տենչանք,
Իրրեւ անմեկին եւ ջերմ ընկերներ,
Ինձ հետ կ'լինին եւ իրր արեգակ
Կ'շողան ինձի անմահ երազներ...
— Թող ես հալածուիմ...

1904.

ԽԱ.

Մեր ժամանակի երկաթ հողմերի
Անգթութեան տակ
Դո՛ւ, իմ հալածուած ընկեր սիրելի,
Երբ անարեգակ,
Սիրտդ մոլորուած ու միշտ մենաւոր,
Թափառե՛ս օտար աշխարհէ աշխարհ.
Կամ երբ փորձանքը, վիշտը ահաւոր
Անխնայ պատեն քո մութ հանապարհ. —
— Ակնիւ իմ ընկեր.
Այս իրադարձին անմահ տիեզերքի
Չ'նայես երբէ՛ք իբրեւ բերմունքի,
Կամ իբրեւ մի զո՛ւր անմիտ ժխորի՛...
— Զէ՞ որ մեր հոգին երբեմնի ժամին
Կարող է տեսնել
Յաւերժութեան մեծ իմաստը ներքին,
Անհաս արուեստի համայնապատկեր...
— Զէ՞ որ խորիմաց քո վսեմ հոգին,
Հեռու վանելով վիշտը դառնագին,
Այս անմահական պատկերի դիմաց
Զգում է, որ կայ Արարի՛չ, Աստու՛ած...

Ո՞ւմ չի կախարդում արշալոյսը վառ,
Որ կրծքին քաշած կարմիր ժապաւէն

Ու նակտին դրած երկնային գոհար,
Գալիս է հեռո՛ւ, անյայտ աշխահէն...
— Արշալոյ՛սը վառ եւ միշտ բերկրալից,
Որ դառն օրերի օրրոցի միջից
Ամէն առաւօտ
Յիշեցնում է միշտ մեր սէրն ու կարօտ,
Եւ անմահական արեւ ու գարուն,
Որ վիճակուած է սրտերին անհուն.

— Միթէ՞ չես տեսնում, ազնիւ իմ ընկեր.
Ով որ կարգել է վեհ արշալոյսներ,
Երկինքը արեւ եւ կեանք ու գարուն,
Նա կա՛յ եւ անխախտ կ'լինի անհուն...

1904.

ԽԲ.

Իրիկուա՛յ ստուերներ, իրիկուա՛յ ստուերներ —
Մահու լո՛ւռ վկաներ.
— Ձեզ անյայտ Գործարանն է հիւսել,
Ձեր գնացքը անհուն
Իսկութեան աշխարհին է հասել...
Կեանքի վիշտը ձեր մէջ՝
Կեանքի նիշտը տեսած՝
Մահը միշտ փայփայած,
Գողդոջո՛ւն, ելեւէ՛ջ
— Եւ արթո՛ւն, եւ մարա՛ծ իրիկուայ ստուերներ...

Ձեր անհուն կախարդուն ցանցի մէջ
Կա՛ն յոյսե՛ր աննման,
Կա՛ն լոյսեր մոռացման,
Եւ քայլուածքը մահու նենգամիտ,
Եւ նայուածքը անյայտ ու անմիտ...
— Իրիկուայ ստուերներ՝ երազի սուրբ շորեր,
Ներաթեւ, մութ ու սեւ սուրսուրո՛ւմ էք անձեւ...
Ձեր թեւին, ձեր ձեւին նրբարար
Կայ խորհուրդ անյայտի՛, բնութեան...
Ներահիւս թելերում ձեր շէնքի
Կան անխօս զեղումներ,
Եւ կեանքի ու մտքի

Սուրբ սաղմո՛ս, աղօթքներ...
— Ահա ձեր թագուհին՝
Թուխ գիշերը յիշալ
Բարձրացաւ իւր գահին
Ու դրեց իւր ճակտին սեւ պսակը խաւար.
Եւ ցրեց աշխարհին ստուերները խորհո՛ւն,

Պատից-պատ սուրսուրող՝
Հոգիներ այցելող,
Անցեալի նուրբ յուշերը պատմող՝ —
— Դալկութեան մէկուհար իրիկուա՛յ ստուերներ,
Երազիս սուրբ թեւեր,
Դառնութեան տխուր սէր,
Երերուն, բեկբեկու՛ող՝
Հեւացո՛ղ, հեռացո՛ղ ստուերներ,
Որ քաշում էք, խորշում մեզանից
Եւ ասում էք, խօսում մթալից...
— Մոռացման հատորներ՝ իմ հոգու ընկերներ,
Պահէ՛ք ձեր խորհուրդները
Անյայտի՛, իսկութե՛ան աշխարհից...
— Սահէ՛ք ժի՛ր, մտացի՛ր,
Իրիկուայ ստուերներ՝ կեանքի լո՛ւռ վկաներ...

1904.

ԽԴ.

Հալածուած իմ ընկեր, դու հանգիստ ես ուզում
Մահուան ցուրտ մահիճում.
Եւ թէպէտ քեզի պէս ես յոգնած եմ հոգով,
— Բայց քեզ հետ էսքան վա՜ղ, անվրդով
Աշխարհից հեռանալ չեմ ուզում...

Երկչոտ չեմ ես հոգով,
Ու մահից սարսափել չ'գիտեմ.
— Արթնանում են իմ մէջ անցեալի սուրբ յուշեր,
Ու տանջում են հոգիս ներկայի սուր փշեր...
Բանտերում շղթայուած իմ եղբայրն է լալիս,
Բռնութիւն ու բռունցք մեր գլխին են գալիս...
Քանի՜ կան դահիճներ,
Քանի՜ կա՜ն նահիններ,
Որ անէծք են մեր սե՜ւ օրերի,
Որ լափում են անմե՜ղ զոհերի, —
— Չեմ կարող անտրտունջ ու քեզ հետ՝
Մոռանալ էս աշխարհը յաւէտ...
Լսիր ինձ, կարեկից իմ ընկեր.
Դառն արցունքը թէեւ անկործան ժայռի պէս
Քարացած է վաղուց իմ սրտում.
Եւ աշխարհը կոպիտ, նորա ցաւն ու կրքեր
Խորտակել են սրտիս եւ գարունը, ե՛ւ սէր, —

— Բայց բախտին հակառակ,
Ժայրի պէս անկործա՛ն,
Ես ապրել եմ ուզում լուսնի տակ,
Ես կռի՛ւ եմ ուզում անսահման...
— Չէ՛, ընկեր, ես քեզ հետ չեմ կարող
Մոռանալ էս աշխարհն ու արեւ՛ ոսկեշող...

Թող գլխիս գալարուին կայծակներ,
Թող փչեն չար հողմերը յամառ·
— Դրօշակը ձեռիս՝ անվեհե՛ր
Ես կռիւ կ'նետուեմ քաջաբար...
Կռուի մէջ՝ երկունքի ցաւերով յաղթական
Մենք կարող ենք միայն
Խորտակել բռնութի՛ւնը կեանքի,
Ու կանգնել նոր աշխարհ նշմարտի, գեղեցկի՛...
— Չէ՛, ընկեր սրտակից,
Հեռանալ չեմ ուզում աշխարհից...

1904·

ԽԴ.

ԿԱՅԾԱԿՆԵՐ.

Ամպերի զօրքի մէջ ահաւոր
Կայծակները լողում են արդար.
— Բոցաթեւ, օձաձեւ, փառաւոր,
— Իրրեւ թուրը երկնից յաղթարար —
Գալարւում են ահա վեհ ու ժիր,
Ու նեղքում են երթեր ու երկիր...
— Կայծակնե՛ր, արարչի անմահ թուրը հզօր,
Որ սրի էք քաշում նիւթականը կոպիտ,
Գալարուէք ու զարկէք աշխարհին յանցաւոր,
Դուրս հանէք գոյութեան,
Մեր կեանքի ու գարնան
Խորհուրդները ներքին, նշմարիտ...

Արեւելք, արեւմուտք մտքի պէս սաւառնող,
Բնութեան աննման զօրութիւն.
Կայծակներ՝ յաղթարար գալարուող,
— Կռուի մէջ դուք ծնում էք գարուն...
Փոքրիկի սուրբ հոգի,
Եւ խորհուրդ Տիեզերքի —
— Կայծակներ, ձեզ կարօտ է հոգիս.
Ծաւալուէ՛ք, գալարուէ՛ք միշտ անհուն
Եւ այրէ՛ք անդունդները սրտիս...

1904.

ԽԵ·

ԾՈՎԸ·

Տիեզերական մարմինների արցունքից
Եւ բիւր դարեր վիշտը քամող սրտերից
Ծնուած է ծով կախարդական ու արի՛, —
Որ երազն է էս տանջահա՛ր աշխարհի···
Ահա եւ նա, բիւր լոյսերով յաղթական,
Որ շողում է հեռուից հզօր միտք ու սէր·
Նա յուզւում է անմահական խորհրդով,
Եւ սուզւում է տիեզերքի մէջ անվրդով···
Կեանքի հարցը քննում է խոր արքուն ծով···

Մութ գիշերին խռովարար եւ հզօր՝
Նա կանչում է աստղերը բիւր՝ խորհրդի,
Որ գա՛ն, սուզուին իր անկոպար կրծքի մէջ,
Որ զմրուխտէ ջրերի մէջ անդնդի
Նոր արեւներ կազմեն հզօր, երկնաէ՛ջ···
Որ այնտեղ իսկ, դաշտերի մէջ երկնքի
Ասեն, խօսեն յաւերժական նոր երգեր,
Որ անցեալից յետ գան կրկին փա՛ռք ու սէր···

Իսկ ցերեկով արեւի հետ է խօսում,
Խիստ պահանջում նառագայթներ, ջերմութիւն···

Արշալոյսի ժպիտը վառ՝ առաւօտ,
Երեկոյեան՝ վերջալոյսի սուրբ կարօտ՝
— Որսում է նա եւ ջրերի մէջ թաղում.
— Տեսէ՛ք, ծովը հեքիաթներ է միշտ խօսում...
Երկնքի խոր անդունդից
Եւ ամպերի խռովարար զօրքերից
Որսում է նա մրրիկ ու շանթ եւ կայծակ,
— Ծովն է անվերջ խօսում կռի՛ւ ու կռիւ:
Ահա եւ նա՝ ծովը հպարտ ու ազատ.
Նա մտքեր է անվերջ շարում հարազատ
Յար ու վարար, վճիտ՝ ու խիտ՝
— Վազէ՛ք ջրեր, յուզէ՛ք ալիք.
Տիեզերական երգերովը ճշմարիտ
Պատմէ՛ք հզօ՛ր մեր անցեալը եւ գալիք...

1921.

ԽԶ.

Մենք ծնուել ենք լոյսեր տեսնենք,
— Մեծ արեւի ժպիտներ.
Մենք եկել ենք աստղեր սիրենք
Եւ յօրինենք գարնան ժպիտ, երգ ու սէր...

Հեռու վանիր հոգսը տխուր ու դաժան.
— Մեզ խունկ է պէտք, աղօթք ասենք.
Սուրբ արեւին, անմահութեան
Սիրոյ աղօթք ու երգ հիւսենք...
— Ով արեւի եւ աստղերի
Միշտ երազուն երկնադաշտ,
Քե՛զ է հնչում մեր սրտերի
Երգը սիրուն, երկնապա՛շտ...

Սաղմո՛ս ասէք բիւր աստղերին.
Մեզ խո՛ւնկ բերէք, զանգե՛ր քաշենք.
Սիրոյ աղօթք մեր արեւին —
Անմահութեան երգե՛ր հիւսենք...
Արկտուրն ահա ժպտաց ոսկի,
Պայծառանեմ սայլը հեռուից
Միշտ կանչում է նո՛ր կեանքի, —
Սէր է հնչում եթե՛ր մեզ ոգելից...

Ժամանակի, տարածութեան յաղթարար,
Դու, որ սիրով կենդանար
Կախարդում ես մեր էութիւնն ու սրտեր, —
Արե՜ւ, արե՜ւ, լոյս ու սէր,
Անմահութեան զարուն բեր...
Արեւ, արեւ, դու ես միայն ճշմարտութեան
Արարչագործ գթո՜ւ հայրը, վեհազոյն
Օր ու գիշեր խենթի՜ նման
Կարօտն է քեզ քաշում բնութիւն...
— Սաղմո՛ս ասէք, երգեր հիւսէք
Յաւերժական արքային.
Մեզ խունկ բերէ՛ք, զանգե՛ր քաշէ՛ք,
Միշտ աղօթենք լուսատեսի՛լ Հսկային...

1914.

Գ.

ԱՌՈՒՐՀ ՈՒ ԿԵՄՈՒՐՀ

Ա.

ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀԸ.

Սիրտս ոսկի մի ժապաւէն՝ հազար ծալով ու հալով
Փաթաթել են բոխչի նման ուղիներս անվրդով:
Ես շատ անգամ բաց եմ անում կծիկը հուր իմ կեանքի՝
Ու կարդում եմ անցքերը բիւր չտեսնուած կարօտով...
Քանի՞ անգամ գո՛րծ եմ արել ցեղերի մէջ վայրենի՛.
Մերթ եղել եմ ես մասնակից նոցա անմիտ խաղերին.
Ես ապրել եմ խայտաբղէտ բիւր ծէսերը տօտէմի,
— Մասնակցել եմ նոցա տգէտ կռիւների՛ն ու որսին..

Ճիշտ չէ՞ ասածը գիտութեան. պատի վերայ սուրբ
սրտիս,
Լոյսերի պէս գրուած է ճիշտ անցուդարձը օրերիս.
— Տեսէ՛ք, ահա բաց եմ անում անցեալ կծիկը կեանքի,
Ու տեսնո՛ւմ եմ ինձ ամէ՛ն տեղ երկրի վերայ շրջելիս..
Ես եղել եմ արշաւանքում եգիպտական մեծ ազգի,
Պալատի մէջ Փարաւոնի՝ ձեռնարկներումը փառքի...
Ու շատ անգամ տաշեղի պէս՝ հատորները իմ կեանքի
Լող են եկել Նեղոսի մէջ՝ լայն ափե՛րը ջրելիս...
Տեսէք, ահա բաց եմ անում ժապաւէնս հոգեւոր

Ու կարդում եմ Պաղեստինի գործերը մեծ եւ հզոր·
Երբ Մարգարէն օրէնքներով Սինայ սարից էր գալիս,
Ես նորա մօտ լսում էի պատգամնե՛րը երկնաւոր···
Ահա՛, Հանճարը՝ լոյսի՛ պէս՝ լերան քարոզն է ասում,
Իւր հոգեւոր օրէնքը նոր մեր սրտերում ակօսում·
Իսկ ամբոխը նորա համար գործ է նիւթում դաւադիր··
— Մի՛շտ, ամէն ժամ իմ սրտի մէջ այս անցուդարձն
է հոսում···

Ես եղել եմ Բաբելոնի աշտարակը շինելիս,
Ես օգնել եմ հին ազգերին ծովի վերայ շրջելիս·
Երբ Գանգէսի լայն ափերին հնչում էր հին մեր Լեզուն,
— Ես մասնակից էի Մարդու հին օրրոցը շարժելիս···
Երբ գաղափարը Բուդդայի թնդում էր խո՛ր եւ ուժգին,
Արտակոչում եղբայրութեան Հնդիկ ու Չին ազգերին, –
Կամ վարպետը հմուտ շարում էն մեծ պատը
չինական, —
— Ես եղել եմ, մասնակցել եմ այդ վաղեմի գործերին··

Ես եղել եմ Աթէնքի մէջ՝ կռուի զանգը հնչելիս,
Երբ խօսում էր Իմաստունը՝ իւր մտքերը դարբնելիս՝ –
— Դիւցազնական աշխարհի մէջ, Ոլիմպոսի գագաթին,
Հոմերոսի անմահական սազը հպարտ ձայնելիս···
Ես եղել եմ Հռովմի մէջ՝ Իրաւունքի հնոցում,
Ես տեսել եմ պայքարը մեծ լատինական ամբոցում, —

Երբ հին Հոգին տարածում էր նոր ազգերին
լոյս ու սէր, —
— Մի՛շտ անբաժա՛ն եւ ամէն տեղ ես եղել եմ
աշխարհում...

Ոչ ոք չ'ասի, թէ եկուոր եմ հանդէսի մէջ էս բարի՛,
Ոչ ոք չ'ասի, ես մի հիւր եմ խոր ծէսի մէջ աշխարհի...
Մասնակցել եմ ես հանապազ տիեզերքի մէջ կատարեալ.
Ոչ ոք չասի, թէ իր ձեռին չունի՛ կեանքի բանալի...
Մեր հոգու մէջ փաթաթուած է կծիկը մեր անցեալի...
— Տեսէ՛ք, ահա բաց եմ անում կծիկը իմ ծալէծալ.
Ու կարդում եմ ա՛նց օրերիս ուղիները ահրելի՛...

1927.

Բ.

ՃՐԱԳՆԵՐԸ.

Տիեզերքի մէջ վառուած են միշտ նրագներ.
Տե՛ս, ամէն տեղ ցրուած են բիւր կրակներ,
Որ անդադար լոյս են տալիս աշխարհին,
— Բայց չ'գիտեն, որն է չարը կամ բարին...
Ես իմ սրտում եւ իմ տան մէջ բնածին
Սարքած ունիմ միայն մի հատ վառ նրագ.
Նա իմ կեանքին լոյս է տալիս ջերմագին, —
— Նա լոյս կ'տայ եւ տիեզերքի՞ն անյատակ...
Անցաւոր չէ՛ նրագը իմ ոգելից.
— Զտեսնուած մի հոգեւոր լոյս ունի:
Զոկում է նա չարն ու բարին իրարից,
Յաւերժաբար ցանում միտքը անհունի՞...
Տիեզերական նրագները կ'հանգչին,
Երբ վերանայ գործը նոցա նիւթական
Աստղ ու արեւ անդառնալի կ'կորչին,
Երբ չ'լինի նիւթը նոցա հիմնական...
Երբ աւարտեմ իմ գործերը ես այստեղ,
Եւ հոդաշէն տունս ընկնի ու փուլ գայ.
— Հանգչելու չէ նրագը իմ փառահեղ,
— Արարչագործ նորա լոյսին վե՞րջ չ'կայ...

1927.

Գ.

ՀԱՆԴԷՍ.

Քաշ են արել ջսիները հին
Առաստաղից տիեզերքի.
Եւ նայում է տէրը վերին
Անցուդարձին խնոյքի...
Հանդէսի մէջ երկիրը մեր
Իւր տեղն ունի պատուաւոր.
Ու տեւում է անքիւ դարեր
Հանդէսը այդ անսովոր...

Վարար ու յար գետն է հոսում, —
Աղմկում է եւ խօսում.
Ո՞ւմ կարօտն է իւր մէջ անվերջ
Զուրը լսում, փսփսում...
Ծովը ահա իւր հին ծէսում
Սաղմոսներ է միշտ ասում.
Ասես մի հին աւետարան
Կարդում է նա ու խօսում...

Ամպը թա՛մբ է մրրիկներին,
Որ ցանում են զօրքը հին.

Եւ անցնում են բանակները
Խորհրդաւոր մեծ ուղին...
Սեւ զօրքի մէջ ամպերի
Զօրապետը զայրացած՝
Դուրս է քաշում սուրը թրի,
Ասես կայծակ ու հարուած...

Անտառը վեհ եւ վիթխարի՝
Կուրծքը բռնած աշխարհի,
Միտք է անում անհունաբար.
Ումն է բերդը էս բարի...
Եւ լսում ենք օր ու գիշեր
Բարբառը խոր բնութեան.
Բայց չգիտենք, ո՞վ է սարքել
Էս հանդէսը յաւիտեան...

1927.

Դ.

ՔԱՐՈՒԱՆԸ.

Տունս բարձր՝ սարի վերայ,
Աստղերի մօտ՝ երկնքում.
Կեանք եմ դիտում ես աշխարայ՝
Հեռու ու մեծ փեթակում...

Վերեւն աստղեր բիւր խմբերով
Ցաւերժութեան մեծ նամբէքին.
— Տէրը քշում է անխոռով
Քարուանը իւր ահագին:
Վազուկ Շունը՝ դունչը մեկնած՝
Իւր լուսեղէն խմբի հետ,
Գաղտագողի՝ դարան մտած՝
Որս է անում առյաւէտ...

Լի բեռներով հազար ու բիւր՝
Սայլերը հին, փոքր ու Մեծ,
Մէջքին խփած շիշ ու շամփուր՝
Ուխտ են գնում դուռ՝ — դրկից...
Իսկ վիշապը երկնահնար՝
Դէմք ու տեսքը անմոռնի՝

Միտք է անում որսի համար՝
Յիտեւն ընկած Քարուանի...

Հովիւը մեծ ու երկնատէր՝
Ձեռքին Քնար նրբատաղ,
Քշում է միշտ անհամբեր
Քարուաններ՝ իւր անվախ...

Իսկ իմ ներքեւ հուր հարսանիք,
Անփոյթ ու սուտ գիշերներ,
Լոյս ու զատիկ, ցաւ ու կարիք,
Եւ տանջահար թշուառներ...

Քաղաքն է հին զուր թաւալուած
Կէս գիշերի Դահլիճում.
Ոճիրն ու դաւը արբեցած՝
Որս են անում արնախում...
Զօրք ու զինուոր, վէրք ու կռիւ,
Զրկանք, արիւն, աշխատանք.
Ազնիւն ու Սուտ, Կիրք ու Հաշիւ
Գործում են միշտ մեզ պատանք...

Եւ ցասումի ու բերկրութեան
Վրաններում՝ իրար կից,
Կեանքն ու մահը՝ միշտ անբաժան,
Վէն են անում արնալից...

Ահա հեռուից անհոգ եւ միշտ
Նամակատարն է շրջում.
Նա ցրում է խնդում եւ վիշտ,
Ինչ — որ բառե՛ր մրմնջում...

Այստեղ ահա երգ ու ժպիտ,
Ազատութեան սուրբ աւիւն.
Այնտեղ ահա բանդը կոպի՛տ
Վիշտ է մանում միշտ անքուն...
Մոլութիւնը իւր բերդի մէջ
Հունձ է անում սանձարձակ.
Փառասէրն է ճչում անվերջ,
Կանչում իրա յաղթանակ...
Կուտակուած են բեռնաւորներ,
Գնում Շուկայ — առեւտուր.
Ստրուկ, ազա՛տ, ջահէլ ու ծե՛ր
Լեցնում են մեծ զանգուածը զուր...

Ո՞ւր է հոսում խորհրդալի
Վարար գետը գոյութեան.
Ծովն են հոսում անդառնալի՛, —
— Երեւոյթներ են միայն...
Յաւերժական դաշտերի մէջ
Ծովն է հոսում Յաւերժի.
— Իսկութիւնը՝ հագուստ հագած,
Իր փէշերը կ'շարժի՛...

Անդառնալի անցուդարձում
Ո՞րն է իսկը յարատեւ.
— Մտապատկերն ու Զգացում
Հաստատել են տեւ ու ձեւ...

Եւ սահում է անխախտ ու լուռ
Քարուանը ողջ տիեզերքի.
— Քարուանապետ է ընդհանուր
Ժամանակը մեր կեանքի...
Ե՞րբ են հագել քարուանի մէջ
Իրերը շոր ու հագուստ.
— Նոքա չունին սկի՛զբ ու վերջ
Անց ու Գալիք եւ Կորուստ...

1927.

Ե.

ԳՆԱՑԲՈՒՄ.

I.

Մարդ եմ, ունեմ հազար ու բիւր ցաւ ու ցրիւ
եղբայրներ.
— Ցեղակից են ինձ անասուն, թռչուն ու բոյս եւ գազան:
Մեզ բոլորիս տիեզերքը հին մի երկունքով է ծնել,
Մեզ բոլորիս նոյն օրօրոցն է խնամել անմա՞...
Մէկն է միայն Դայեակը ողջ կենդանական աշխարհի, –
Մէկ օրօրոց՝ եւ նորա մէջ մի խանձարուր հասարակ.
Մէկ օրրոցում բնութիւնը՝ Մայրը գթոտ եւ արի,
Պահել–շահել է բոլորիս՝ ջանքերով լի՛, կենսունակ...

Դայեակը մեր չի պարգեւել հուր եւ կրակ բոյսերին.
Նա չի կախել նոցա ներսը լուսապսակ նրագներ...
Ապրում են լո՛ւռ բոյսերը բիւր, անո՛ւմ, նօնո՛ւմ
երկրածին.
— Իւր շէնքի մէջ բոյսը չունի կրակ ու սէ՛ր եւ լոյսե՛ր..
Բայց դորա տեղ բոյսը ունի գէ՛սք անմման ու զարդեր.
Նա բնաւին հոգսեր չունի, կեանք է վարում անխոռո՛վ..

— Բռնած ամուր կուրծքը իր մօր՝ աճում է նա
անտարբեր.
— Բոյսը չունի՞ կիրք ու կռիւ, ապրում է նա
անվրդով...

Ինչ որ ունի բոյսը սիրուն ու հանգիստ,
— Ունին նաեւ անասուններ բազմատես.
Էս աշխարհի օրրոցի մէջ խո՞ր ու խիստ
Նոցա սրտում լոյս են վառել մի անտես...
Ու վառւում է ճրագը այն զօրաւոր,
Առաջ տանում անասնական մեծ ուղին...
— Սուտ մի՛ ասէք. կիրք ու կրակ հոգեւոր
Ունի նաեւ անասնական սեղմ հոգին...

—Չէ՞ որ մարդն էլ ծնուել է նոյն օրրոցում.
Դայեակը վեհ՝ բնութեան մէջ գթառատ՝
Խնամել է նորան անմահ իւր ծոցում,
Հիմնել անվերջ նորա ուղին փշապատ...
Նորա մէջ կան եւ բուսական շարժումներ,
Կիրք ու կրակ անասնական աշխարհի.
— Բայց կան նաեւ տարբեր ու վեր ճրագներ,
Լոյս ու արեւ միշտ երկնասէ՛ր հանճարի...

Ո՞վ չի տեսնում, որ նա իր մէջ Փորձ ունի.
Նորա ուղին տանում է վե՛ր, դէպի վսե՛մ
ու նո՛ր կեանք.

— Միտքը նորա գործում է միշտ անուանի,
Յաւերժական ծնում հոսանք ու բերկրանք...
Իրերի մէջ տեսնում է նա իմաստը խո՛ր ու յաւէտ.
Նա է միայն թելադրում էս աշխարհին օրէնքներ.
Միտքն է կապում երկինք, երկիր, կամ աստղերը
իրար հետ.
— Նա՛ է ծնում անմահակա՛ն ու ներդաշնա՛կ
մի պատկեր...

Մարդու մէջ կայ բանդ ու շղթայ եւ դատաստա՛ն
ահաւոր.
— Օր ու գիշեր քննում է նա գործը նորա լոյսի տակ...
Նորա գործին իրաւունքը, խիղճը, իրքե՛ւ դատաւոր,
Իւր անողոք վճիռն է միշտ կարդում հզո՛ր,
համարձակ...
Էս աշխարհի չարն ու բարին, նիստ ու կացը արտաքին
Ցոյց են տալիս արտանկարը հոգեւոր կարգերի...
Շահ եւ կռի՛ւ, բանդ ու շղթա՛յ, ազատուքիւ՛ն,
փա՛ռքը հին
Արդիւնք են միշտ մարդու սրտում ալեկոծուո՛ղ
գործերի...

Այդ ահաւոր սարքուկարգին խիստ համերաշխ
ու հլու՝
Մարդու մէջ կայ հզօր արեւ՛ ճշմարտուքեա՛ն,
գեղեցկի՛...

Եւ տանում է զօրքը նորան դէպի գարունը հեռո՛ւ.
— Դէպ՛ վերադաս ու երկնահաս բարձունքները
նոր կեանքի...
— Կ.ուզէ՞ք արդեօք, որ ձեզ ասեմ իսկութիւնը
մեր ցեղի.
Զօ՛րքը Հոգու, որ ապագայ լոյսերով է միշտ յղի,
Բերել է մեզ եւ կ'հանի անմահութեան բարձունքին.
Խորհուրդը խո՛ր մեր պատմութեան բա՛ց է անում
այդ ուղին...
1927.

II.

Քանի՞ անգամ ասել եմ ձեզ, անմիտներ.
— Մարդը ունի անասնական լի՛ ծագում:
Չ'կան բնաւ տիեզերքի մէջ հրաշքներ,
— Մարդը չունի՛ հանելուկներ իւր կեանքում:
Իրրեւ ծնունդ անասնական աշխարհի,
Բռնել է նա խի՛ստ հեռաւո՛ր մի ուղի.
Սրտում դրած բիւր փարոսներ Հանճարի,
— Նա երկնահաս գործերով է միշտ յղի՛...

Ազատ են միշտ անասուններ ու բոյսեր —
— Նոցա ներքին շարժումները անպայմա՛ն:
Մարդու մէջ կան կռի՛ւ, աղմուկ, լոյս ու սէր,
Խի՛ղճ ու խրատ, շղթայ եւ բանտ, դատաստա՛ն...

— Ի՞նչ բան է այդ պատերազմը հոգու մէջ, —
Կռիւ ու դատ, իրարանցում ահաւոր,
Արարչական գործերի խո՛ր ելեւէջ...
— Դատը ունի վճիռը իւր երկնաւոր...

Երկու բանակ զօրք են հանել կռուի դաշտ.
— Երկնատեսիլ ձիրք ու ձգտում եւ լոյսեր,
Իսկ նոցա դէմ միշտ վայրենի՛ եւ անհաշտ՝
Բնազդը բուք, խաւարը սուտ եւ կրքեր...
Պատերազմը ունի վախճան հեռաւոր.
— Կռուի դաշտից Զօրքը խաւար, տապալուած,
Դուրս կ'հանի իր գործերը, ցաւն ու չոռ...
— Մարդը այնժամ դառնալու է ազատ, արի՛
եւ աստուած...

Ով միտք ունի՝ կեանքը մարդու ըմբռնել,
Հասնել նորա նանապարհի ակունքին,
Եւ խորհուրդը մեր պատմութեան լաւ տեսնել,
— Թող նա քննի պատերազմը այս ներքին...
Նորա ընթացքն ու ծնունդը, եւ վախճա՛ն,
Հազար ու բիւ՛ր ելեւէջը անցեալի.
— Թող նա քննի լոյսն արեւի՛ անսասան,
Կռիւն հոգու խո՛ր ու հզո՛ր, դառնալի...

1927.

Զ.

ԱՂԲԻՒՐԸ.

Ժայռերը խոհուն՝ ճօթերը կիտած
Հպարտ ու անխախտ կանգնած են, ահա՛.
Հսկայ փէշերը չորս կողմ տարածած,
Յեգնաբար ու միշտ նայում են նոքա
Կեանքի ժխորին, սիրոյ տաճարին.
Ամպաչու գլխով երկինքը հասած՝
Ծաղրանք են նետում մտքի հանճարին...

Նոցա ահագահայ փէշերի տակից
Երկունքի ցաւով աղբիւրն է խօսում.
Կաշկանդող լերան թափուած փէշերից
Զրերն աղմկող հեռու են հոսում...
Փրփուրը բերնին՝ ալիքներ կայտառ
Վազում են, սազում, ցայտում դէպի վեր.
Ափունքը կրծող յորձանքը յամառ
Կանչում է, հնչում հեքիա՛թ ու երգեր...
Հեռու վայրերից, երկնքի ծոցից
Սեւ սեւ ու խոժոռ գալիս են ամպեր.
Շարուած են հերթով իրար յետեւից,
— Ասես թշնամու անհամար գնդեր...

Ժայռերը դաժան՝ ուսերը մեկնած,
Զայրոյթը իրենց երկնահաս դէմքին՝
Կանչում են հեռուից զօրքը գրկաբաց.
— Ամպե՛ր, հէ՛յ ամպեր, տարագիր զօրքեր.
Ո՞ւր է ձեր տէրը. ինչո՞ւ է թողել
Ձեզ օտար երկրում պանդուխտ ու սգուոր,
Որ միշտ անկայան շրջում էք մոլոր...
— Եկէ՛ք գունդիգունդ. ուսերը մեր լայն,
Որ կո՛յս են, արի՛, անմատոյց, ազատ,
Ձեզ լաւ օթեւան սրտաբաց կ'տան.
— Եկէ՛ք, ծածկեցէք մեր դէմքն ու գագաթ...

Եւ մութ է արդէն. գիշերը խաւար
Իւր գիրկը առաւ աշխարհը լռին.
Զօրքը ամպերի դանդաղ, յաղթաբար
Բանակը զարկեց լերան ուսերին...
Եւ երբ ոխերիմ ու կռուի կարօտ
Թշնամիների այն խուլ բանակում
Ցոլացին շանթեր ու պայթեց որոտ...
— Կռուղ զօրքի մէջ մռայլ, ահարկու
Թնդաց բնութեան զայրոյթը հուժկու...
— Ժայռերը դաժան, ներնգութեամբ լեցուած՝
Հպարտ ու կծու եւ խիստ անվայել —
Ցեգնաբար ու բիրտ նայեցին դէպ ցած,
Ու խեղն աղբիւրին դարձան անարգել...

— Կանգնի՛ր, ցամաքիր, աղբիւր աղմկող,
Թող տեղդ մնայ աւերակ ու հող.
— Քո բախտը մենք ենք, թնդացին ամպեր.
Ու կ'խորտակենք քո երթն ու ջրեր...

«Իմ երթն ու ջրեր կ'հոսեն դարեր՝ —
Եւ մահ ու վախճան ինձ համար չ'կան
Զո՛ւր են, անցաւոր կապանքները ձեր.
Նոքա կ'կորչին երազի նման»...
Ազատ խօսեցին, հպարտ հոսեցին կոհակները բիւր.
Եւ դարեր ահա հոսում է Միտքը հաստատո՛ւն ու կուռ.

1904.

Է.

ԱՆՍՈՎՈՐ ՄԱՐԴ.

— Ասա, ա՛յ մարդ. էս աշխարհում
Ամէնից շատ ի՞նչ ես սիրում դու ազատ.
Մտերմութի՞ւնը աննձկալի, սէր ու գարուն եւ խնդո՞ւմ.
Ծնողական գո՞ւրքը վսեմ, ձիրք ու ձգտո՞ւմ անարատ,
Թէ՞ գգուանքը հզօր մտքի, հանճարի...
Ձե՞ն գրաւում քեզ աշխարհի փառքն ու պատիւը կարող,
Կամ գոյութեան ներքին իմաստը յուզող...

«Մտերմութի՞ւն. նորան մենակ սիրել գիտեմ
սրտագին, —
Սիրտս կ'տամ մտերմութեան բարձունքին.
Ես դեռ մանուկ՝ մտերմացայ դառնութեան,
Միշտ հարազա՛տ, հաւատարիմ ընկերիս հետ աննման.
Հազիւ լսուեց թոթովանքս մանկական, —
Սրտանց ու ջերմ ընկերեցայ Վշտի հետ,
Ու կեանք մտանք մենք միասին, անբաժան...
Քիչ մ'յետոյ՝ հալածանքը, ձախորդութիւն ու չարիք,
Քիչ էլ յետոյ՝ տանջանք ու սով եւ կարիք՝ —
Եւ միշտ միտեղ, միշտ միասին, ջերմագին
Ուխտ արեցինք մենք իրար հետ սրտագին՝

Մտերմութիւնը փոխադարձ ու հաստատ
Պահել ազնիւ, հաւատարի՛մ ու անխախտ»...

«Ծնողական գո՞ւթը վսեմ... դեռ այն օրից,
Երբ իմ մատաղ միտքը հեռուն սաւառնեց
Ու մանկական երազանքիս քնարին
Եդեմական ծաղկադաշտեր յօրինեց, —
Անփառունակ ու տխո՛ւր՝ —
Առանց ծէսի ու լացի
Ծնողներիս էն աշխարհը նամբեցի...
Այնուհետեւ միշտ տարագիր, մենակ ու լուռ՝
Դարձայ հլու եւ որդեգիր էն հողմերին բարեգութ,
Որ գալիս են անյուսութեան աշխարհից,
Որ տալիս են մեր սրտերին ցաւ ու կարո՛տ եւ կսկիծ,
Եւ լալիս են մեր վինակը դառն ու սուտ...
Էս աշխարհում էրերում
Այլ մերձաւոր կամ ընկեր
Չեմ ունեցել եւ չ'գիտեմ ես տրտում...
Ու դառնագին իմ նամբին
Ես շրջում եմ օր ու գիշեր՝
Ցաւերիս հետ միշտ միասի՛ն, անբաժին»...

— Ի՞նչ ես խօսում զո՛ւր, անտվոր ու տրտում.
Կախարդական երկնքի տակ վեհարար
Միթէ՞ չ'կայ քեզ արժանի ոչ մի բան...
Ի՞նչ ես ասում արեւներին լուսարար,

Տիեզերական կարգուսարքին անկործան...
Ի՞նչ ես ասում գարուններին զմայիլ,
Կամ կենարար վերջալոյսին վեհատեսիլ,
Որ կախարդում, յօրինում են երազներ,
Ու կարդում են մեր սրտերին
Անմահական սաղմոսներից եդեմական երգ ու սէր...

«Սրտիս խորքում ես պահում եմ անբաժան
Վեհ ու պայծառ գարուններ,
Կախարդական բնութեան
Աստուածարար տեսիլներ...
Ես եւ կեանքի տխուր ու լուռ իմ ուղին
Նուիրել եմ չ'տեսնուած գարունների կարօտին...
Բայց քա՜ւ լիցի.
Բացի իմ ժիր գիտակցութեան՝
Ու մտքիս մէջ միշտ արեւող գարունններից, —
Այլ գարուններ ես չ'գիտեմ իրաւացի՜...
Այս բնութեան գէսք ու տեսքը բերկրալից,
Աստղ ու արեւ, երկինքը խոր, ու եթեր
Արտացոլում են իմ միտքը անվեհեր:
Միայն զօրքը իմ յաղթական գիտակցութեան՝
Արարիչն է, սահմանադիր տիեզերքի.
— Ինձանից դուրս չ'կայ ոչինչ,
Ոչ կե՜անք, ոչ սէր եւ ոչ ժպիտ գարունքի՜»...

1904.

Ը.

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՕՏ.

(ՏԵՍԱՐԱՆ)

Անյայտ ձայն (հեռուից):

Շրջում է միշտ երկիրը նիշտ անխափան —
Ժամանակի, տարածութեան ծովի մէջ.
Եւ նախորոշ նորա նամբին անբաժան
Չկայ պայման, չկայ սահման, չկայ վերջ...
Նորա մէջին, նորա կրծին անտարբեր
Բուն են դրել մահն ու կեանքը վառվռուն.
— Ի՞նչ է ուզում մարդը անել ինքնասէր՝
Ցաւերժութեան գործի դիմաց վեհագոյն...
Դուք, մարդկութեան մշակներդ քաջարի,
Ի՞նչ էք անում, ի՞նչ էք արել մինչ այսօր.
Անմահական շէնքերի մէջ աշխարհի
— Ի՞նչ կարող է մարդը անել փառաւոր...

Վարպետ (ուռաջ գալով դէպի ձայնը):

Արարչական գահի հանդէպ եւ անվախ՝
Տիեզերքի մեծ իրադարձում վեհարար՝
Մարդը Հոգի է յօրինող եւ անկախ,
Որ ծնում է անմահական նոր աշխարհ...

Իմ ձեռքի՝ տակ դարեր ի վեր եւ հզօր
Աշխատում է մտքի անվախ գործարան:
Արարչութեան նոր կարգ ու սարք լուսաւոր
Նա կերտում է օր ու գիշեր անմահ...
Մեր հոգեւոր գործարանի շէնքի մէջ
Միտքը փոխում է տիեզերքը ծերացած՝ —
Ժամանակի, տարածութեան ելեւէջ.
Նա յօրինում է նոր երկինք, նոր աստուած...
— Ահա անքիւ բանուորներս ժիր ու քաջ՝
Ճիշտ կ'պատմեն մտքի անմահ գործերից. —
Ի՞նչ է անում մարդու հոգին բազմատանջ,
Ո՛ւր է տանում նորա ուղին բերկրալից...

Հուսարար:

Ամէնից շատ մեզի պէտք է լոյսը պայծառ արեւի.
Նորա մէջ են կեանք որոնում մարդ եւ գազան վայրենի՛,
Ծովն ու ցամաք, անտառ ու բոյս, կամ անումը տերեւի.
Առանց լոյսի երբը կեանքի վարկենաբար կ'կանգնի:
Հզօր եւ քաջ իմ նախնիքը՝ երկունքի մէջ դարաւոր
Նոր լոյս գտան երկրի համար՝ արեւներին մրցակից.
— Ահա հզօր այդ լոյսը մեր քեւ է տալիս մեզ այսօր՝
Որ արշաւենք դէպի վերեւ՝ նո՛ր գարունքին մասնակից.
Եւ արեւ, աստղերի դէմ մենք վառում ենք նոր լոյսեր,
— Մեր լոյսերն են կի՛րք ու կերտող, նո՛ւրբ ու ճկուն
եւ կարող:

Նոր լոյսերից նաւե՛ր ունինք, որ նախրում են
դէպի վեր, —
— Զուր չե՛ն ասում մեզ էն գլխից՝ նո՛ր արեւներ
ստեղծող...

Կրակարար:

Անուշադիր է բնութեան նարտարապետը հանճար,
Դէպի կարիքը տանջահար մեր կեանքի.
— Ի՞նչ է իզուր ջերմն ու կրակը՝ պիտանի մեզ համար,
Նա կուտակել հեռու, օտա՛ր աստղերի մէջ երկնքի...
Չէ՞ որ աշխարհը չի կարող այդ հեռաւոր պահեստից
Ջերմ ստանալ, կամ թէ կրա՛կ՝ համաձայն իր կարիքին՝
Կամ գործ անել, վեր ընթանալ, իր ցաւերին կարեկից..
Այս ծրագիրը աշխարհի յարմար չէ՛ մեզ բնաւին...
— Ժամանակի, տարածութեան սահմանադիրը անսիրտ
Վարում է իւր գործերը զո՛ւր, օտարոտի՛ մեզ համար..
Իսկ իրադարձը տիեզերքի անխուսափ է եւ կոպիտ,
— Նա չի հոգում կարիքները մեր բնական ու արդար...
Մեր ցաւերի յետեւն ընկած, մտքերի ժի՛ր թեւի տակ —
Մենք մեզ համար յօրինել ենք նո՛ր ջերմութիւն
ու կրակ...
Եւ կրակը մեր ձեռքի տակ՝ հլու է միշտ մեր կամքին.
— Նո՛ր կրակով մենք կ'հասնենք արարչութե՛ան
ակունքին...

Դարբին:

Կրակը լի՝ հնոցում,
Աւիւնը լի՝ մեր ծոցում՝ —
— Սի՛րտ ենք զօդում եւ աստուած,
— Մերն է կեանքը՝ նոր ծնուած...
Կռանը յաղթ մեր ձեռին,
Հարուածում ենք զնդանին,
Որ յօրինենք նոր արեւ, —
Մի նո՛ր գարուն յարատեւ...
Կայծակի պէս յաղթ-արար
Ձեռքեր ունինք ու հանճար,
Որ երկաթից, պողպատից
Միտք է ծնում ոգելից...
Արարչի հետ մրցակից՝
Միտքն է հոսում կրակից...
— Դարբնոցը մեր անխափան
Նո՛ր կեանք կ'տայ մարդկութեան...

Ջուլհակ:

Գործե՛ր ունինք համարձակ
Եւ շարժում ենք նախա՛րակ.
Մեր գործուածքը նուրբ ու խաս,
Մենք գործում ենք միշտ ատլաս,
Որ բնութիւնը հագնի
Մեր գործուածքը անուանի՛...

Դերձակ:

Թել ու ասեղ մեր ձեռին,
Արդուկը տաք մեր առաջ.
— կտորներ են թանկագին
Թափուած ահա մեր դիմաց...
Տիեզերքի մէջ անսահման
Առանց շորի, հագուստի
Չ'կայ ոչինչ, ոչ մի բան, —
— Շոր ենք ձեւում նշմարտի՛...
Աշխարհը ողջ նիւթական՝
Լոյսն արեւի, աստղերի՝
Շո՛ր են միայն իսկուքեան,
— Շորն է ծածկը իրերի...
Մարմինը իսկ հողածին
Մի հագուստ է անցաւոր.
Եւ նորա մէջ մեր հոգին
Կեանք է վարում զօրաւոր...
Մատնոցը խո՛ր մեր մատին,
Ասեղն ու թել մեր ձեռին.
Արդուկը տաք մեր դիմաց,
— Շոր ենք կարում անդադար.
Որ մեր կարածը արդար
Կեանքին բերի նո՛ր աստուած...

Բոլորը միասին:

Աշխատանքի լոյսի տակ
Մենք գնում ենք մեր ուղին.
Կայծակի պէս համարձակ
Յորինում ենք նոր Հոգին...
Մեր սրտի մէջ նո՛ր հանճար,
Մեր ձեռքերը պողպատից, —
Մեր սրտերի կրակից
Ստեղծում ենք նոր աշխարհ...

Անյայտ ձայնը (հեռուից):

Փորձն է մարդու անմահական՝ միտք յարուցող հնոցում,
Դրծն է մարդու յաւերժական կրակ ու հուր
դարբնոցում...
Թող միշտ արի միտքը բարի՛ նրագը իւր ճիշտ վառի՛,
Եւ քաջարի ջանքն հանճարի կուրծքը ճեղքի երկնային.
Մարդը մի օր հասնելու է խո՛ր իմաստին աշխարհի, —
— Մարդը հզօր դառնալո՛ւ է տէ՛ր ու աստուած
տիեզերքին...

1927.

Գ.

ԵՐԿ ԵՐԳՈՅ

1. Շա՞տ է երկար էս ճանապարհը կեանքիս,
—Մէ՛կ է ծնունդը իրերի բնութեան.
Ահա՝ կծիկը բիւրաւոր օրերիս,
Եւ նորա մէջ աշխարհը կայ անսահման...

Արեւների, աստղերի հետ միասին
Յաւերժապէս եղել եմ ես երբեւէ.
Հազար անգամ Յարդագողին իմ մասին
Հոգս է արել իւր անբաժան գնդերում...

Մասունքը իմ, իբրեւ մի հուր անհատիկ,
Կեանք է վարել արեւի մէջ ջերմագին.
Ես իբրեւ լոյս ճառագայթում թափանցիկ
Շրջել եմ միշտ տիեզերքի մէջ անմեկին...

Արեւներից նոր նետեցին ինձ այստեղ.
Երկիրը ինձ նոր հաղորդեց դիրք ու ձեւ.
Տերեւներից նո՞ր դուրս եկայ ես անմեղ,
— Ինձի երէ՛կ մայրս ծնեց հեւ ի հեւ...

Եւ երբ աշխարհ նա ինձ բերեց երկունքով, —
Մի ահարեկ ճիչ արձակեց իր սրտից,
Որ ամենքին իմաց անի խնամքո՛վ,
Ո՞ւր եմ գալիս, ո՞ւր կ'գնամ ես նորից...

Օրս կ'գայ, քոյր ու ընկերս անգին
Ինձ կ'տանեն դէպի խոնա՛ւ գերեզման...
Լացը վերջին իսկը կ'ասի իմ մասին.
— Ինչո՞ւ եկայ, ո՞ւր եմ գնում անգիւման...

Աչքս դրսեւ՝ միտք եմ անում ամէն օր.
Ճանապարհիս չնչին մի մասը էստեղ.
— Իմ մօր ճիչը, վերջին լացը անսովոր
Թող ձեզ ասեն անցուդարձը իմ ահեղ...

Շա՛տ է երկար ճանապարհը իմ կեանքի.
— Մէկ է ծնունդը աշխարհի անխտիր.
Տիեզերքի մէջ ես՝ անվախճան մի հոգի,
Միշտ եղել եմ, միշտ կ'լինեմ բնադիր...

1928.

2. Դուք չ'գիտէք, ի՞նչ են խօսում ծաղիկն ու բոյսը դաշտի,
Դուք չ'գիտէք, ի՞նչ են ասում մրրիկն ու լոյսը սրտի.
Թէ լաւ լսէք, ի՞նչ են խօսում բաղերը միշտ ծովի մօտ,
Դուք կ'իմանաք, ո՞ւր են հոսում գետերը խո՜ր
մեր հովտի...
Ձեզ պէս ես էլ անփոյթ էի իմ ճամբէքին մանկութեան,
Ձեզ պէս ես էլ անգուր էի վարք ու բարքին բնութեան.
Իսկ երբ թնդաց սիրտս երգով եթերական սրբութեան,
Նոր զգացի՜, ո՞ւր են հոսում գետերը խոր ճշմարտի..

Ձեզ ո՞վ կ'ասի, ի՞նչ է խօսում բուրմունքը հին
պարտէզի,
Ձեզ ո՞վ կ'ասի, ո՞ւր է հոսում զօրքը վերին մէջլիսի.
— Ապա ասէ՛ք, ո՞վ է տէրը էս անվախճան արարքի,
Ձեզ ո՞վ կ'ասի իմաստը հին եթերական մեր դասի...
Եւ քանի որ օտար է ձեզ կեանքը, իբրեւ մի հանդէս,
Եւ քանի ձեզ, կոյրերի պէս, անյայտ է սուրբ ասպարէզ,
— Քանի մնաք եթերական սարք ու կարգին
դուք անտես, —
Ձեզ չե՛ն ասի խորհուրդը խոր յաւերժական էս Դասի..

Դուք չ'գիտէք, ի՞նչ են ասում բաղերը բիւր ծովի մէջ,
Դուք չ'գիտէք, ի՞նչ են խօսում դատերը հուր սրտի մէջ·
Թէ լաւ լսէք, ի՞նչ է ասում փողը տխուր հողմերի,
Նոր կ'իմանաք, ո՞ւր են հոսում գետերը խո՛ր
կեանքի մէջ···

Ես էլ ձեզ պէս՝ նանապարհին իմ հեռացած օրերի
Անփոյթ էի դէպ անսովոր խորհուրդը խոր աշխարհի·
Իսկ երբ խնդաց երգը իմ մէջ վեր ու հզօր աստղերի,
— Սիրտս զգաց, ո՞ւր են հոսում գետերը հուր կեանքի
մէջ···

Գեղջուկ մանուկ՝ մի հորթարած, դաշտերի մէջ,
լեռներում
Հազար անգամ լսել եմ ես կեանքի երգը հողմերում·
Մուր գիշերը, աստղերը վառ, իմ յուշերը անսպառ
Հազար անգամ ինձ ասել են, ո՞վ է տէրը աշխարհում··
Մրրիկների ահեղ ժամին, ծովի ափին ցրտահար
Հազար անգամ տեսել եմ ես կեանքի երկունքը խաւար,
Որ անողո՛ք թափանցել է սրտիս խորունկը անբառ···
— Ինձ ասել են, ո՞ւր են հոսում խոր գետերը
մեր ձորում···

Իբրեւ գեղջուկ խեղճ մի մանուկ՝ անտառի մէջ
կուսական
Միշտ լսել եմ ես բնութեան ահ ու զայրոյթը դաժան.
Երբ հողմը խիստ մռնչում էր վիշապի պէս ահաւոր,
Իսկ անտառը խոր կանչում էր զօրքերի պէս ժրաջան,
— Մերկ ու մենակ՝ թփերի տակ լսում էի անդադար,
Ի՞նչ է ասում, ո՞ւր է հոսում կեանքի գե՛տը
միշտ վարար,
Ո՞վ է խօսում նորա խօսքը, կարծես մի հին յուշարար, —
Ի՞նչ է ասում բնութիւնը իւր զօրքերով յաւիտեան...

Սիրտս յանախ ձգտում էր վեր՝, միտքս շողում
անքառամ.
— Ի՞նչպէս անեմ, յաւերժական կեանքի գիրքը
մի կարդամ...
Երբ դեռ մանուկ գեղջուկ էի, երկրէ երկիր ես անցայ,
Որ մտքի վեհ տանարի մէջ կեանքի հիմքը հասկանամ..
Քանի՞, քանի՞ իմաստասէր կրօն, ուսմունք ու դպրոց,
Քանի՞, քանի՞ նոր տեսութիւն, գաղափարի խոր հնոց
Տասնեակ տարի հեզ ու բարի միտքս փորձեց ու անցաւ.
— Եւ նոցանից մէկը չ'ասաց, ո՞ւր է հոսում կեա՛նքը
հոծ...

Հազար դպրոց, հազար հնոց անցայ ծարաւ ու անվերջ,
Գործերի մէջ, փորձերի մէջ սիրտս դարձաւ մի զուր վէն
Երկրէ երկիր ես շրջեցի, գիրքն ու դպիրը անթիւ,
Բայց չ'գտայ գիրքը գրոց՝ իրերի միտքը իւր մէջ...
Մարդու համար մի սուրբ տանար յօրինեցի երազում,
— կեանքի համար նոր նանապարհ լոյս աստղերի
խոր դասում...
Բայց գործը իմ հաւատարիմ հող չ'գտաւ կեանքի մէջ.
— Ես չ'գտայ գիրքը գրոց՝ նորա իմաստը բազում...

Սիրտս ծարաւ՝ ուխտ գնացի ուխտատեղերը բոլոր,
Միտքս գրաւ՝ լուռ կարդացի բոլոր գրքերը սովոր.
Ճար ու տանար, գիրք ու դպիր էլ չ'մնաց անծանօթ,
Փորձի դրի հաւատ ու դատ, կեանքի կուռքերը հզօր.
Բայց ոչ մէկը ինձ՝ իմ հարցին կեանքի գաղտնիքը
չ'ասաց,
— Կեանքի դէկը ո՞վ է վարում՝ չար բերմո՞ւնքը թէ՞
Աստուած...
Իմ մուրազին ես չ'հասայ, երազներիս միշտ կարօտ,
Գիրքը գրոց էլ չ'տեսայ, իրերը միշտ քօղարկուած...

Վերջը փոշման ու անգիման՝ միտքս դարձաւ մի դահին
Եղած չ'եղածը սրտիս մէջ միշտ համարեց մի նահին։
Աստուածներիս նա գլխատեց, կուռքերի հիմքը խախտեց
Եւ հաստատեց նոր կարգ ու սարք իմ մէջ իբրեւ
արարիչ...
Եւ ազատուած կեանքի ծանր նահիններից ու ծէսից,
Իբրեւ հատուած յաւերժութեան, իբրեւ հոգի մի անբիծ,
Շրջում եմ ես օր ու գիշեր եւ որոնո՛ւմ իսկ իրեր...
— Միտքս արի, սիրտս բարի՛, ես հեռո՛ւ չեմ
աստղերից...

Մեր քաջերի եւ ջոջերի բոլոր վայրերը անցայ,
Կեանքի անյայտ ուղիների պատկերահանը դարձայ։
Գետերի մօտ ջրերը յորդ անցքերը հին խօսեցին,
Յուզուող ծովի, կանչող հովի հարցուփորձը իմացայ...
Եւ մշուշից խոր անցեալի յետ կանչեցի մեծերին,
Նոր քննութիւն ես կարգեցի մեր հնութեան գործերին,
Որ իմանա՞մ, ո՞վ է դրել հիմքը կեանքի փորձերին...
— Կեանքի բոլոր ուղիների ժիր քննիչը ես դարձայ...

Խօսքի կարօտ Հռովմի մօտ ուրուականները բազում
Զօրքի նման հանդէս եկան անքակտելի մի դասում.
Եւ իմաստուն, աշխարհակալ, եւ Կիկերոն, եւ կեսար
Խոր խօսեցին անցքերը բիւր հին դիրքերում ու սազում.
— Ո՞վ էր վարպետը երկնային իրաւունքի՛ ու կարգի,
Ո՞վ յղացաւ աստուածներին՝ իբրեւ հսկիչ հին բարքի,
Ի՞նչ միտք ունէր դիւցազնութեան՝ հանդէսը բիւր
արարքի...
— Եւ խօսեցին անցքերը հին ուրուականները բազում..

Աթէնքի մօտ՝ միտքս կարօտ խո՛ր ալեւոր հնութեան
Ես լսեցի գործը արի միշտ ահաւոր բնութեան.
Եւ Սոկրատէս իմաստունը, աստուածատես Պղատոն
Նոր հնչեցին երգը բարի հին ազգերի վեհութեան...
Տեսիլներով կախարդական՝ քաջերը հին զարթնեցին,
Աստուածները Ոլիմպոսի սուրբ ուսերին բազմեցին,
Եւ պատմութեան սուրբ էջերը ինձ մի առ մի՛
պատմեցին...
—Ինձ ասացին, ո՞ւր է հոսում վարար գե՛տը
բնութեան...

Եւ պտղատու ափերի մօտ աստուածարար Նեղոսի
Ես կարդացի վերնագիրը կեանքի վերին դարբասի·
— Փարաւոնը զօրք էր հանում թշնամու դէմ ոխերիմ,
Բազմութիւնը ծունկ էր չոքում կուռքերի դէմ
անհասի···
Իսկ ալեւոր Բաբելոնում կրքի կրակ ու յագուրդ՝
Արշաւանքի զէնք ու զրահ, բարքերի խոր մի խառնուրդ·
Կուռքերի մօտ երկրպագու բազմալեզու ժողովուրդ՝
— Նա անմեկին աղօթում էր յաղթանակին հերոսի···

Իմ երազի յետեւ ընկած բոլոր կողմերը անցայ,
Իսկ իրերի հետքը բռնած՝ կեանքի տոհմերը անցայ···
Եւ աշխարհի չար ու բարի բոլոր հողմերը իմ մէջ՝
Ազգերի մեծ նանապարհին՝ կեանքի Հոմերը դարձայ··
Եւ Գանգէսի ափերի մօտ, կամ կտուրին աշխարհի
Ես լսեցի օրրոցի երգը անդրանիկ ազգերի,
Հնդիկ ու Չին ինձ ասացին գաղտնիքը բիւր դարերի·
— Ես ազգերի նանապարհին կեանքի Հոմերը դարձայ··

Իմ հայրենի դաշտերի մէջ՝ Մասիս սարը իմ դիմաց,
Եթերային կեանքի մասին հարցում արի խորիմաց·
Ու նա, քաջը մեր լեռների, հսկայ վկայ անցեալի,
Խօսքը խօսաց ինձ իսկուրեան, կեանքը ասաց
սրտաբա՛ց···
Քանի՞ անգամ Մասիս սարը պայծառատես եւ արի
Աղօթքի պէս գիրքը կարդաց յաւերժական աշխարհի·
Քանի՛ անգամ ես լսեցի խրատը խոր ու բարի···
— Նա ինձ ասաց, ո՞ւր է հոսում կեանքի գե՛տը
սրընթաց···

Երկրի վերայ տեղ չ'մնաց, որ աչքը իմ չ'տեսնէր,
Մեր վերքերին դեղ չ'մնաց, որ սրտումս չ'բուսնէր·
— Եթերի պէս աստղերի բուն, խոր երգերովս անհուն,
Էլ աշխահում երգ չ'մնաց իմ ականջին չ'հասնէր···
Իսկը իմ մէջ նուրբ իրերի· սոսկը իմ մէջ յաւիտեան,
Գէսքը իմ մէջ սուրբ եթերի, խօսքը իմ մէջ անկործան·
— Ինձ են միայն խօսքը տուել, տէրը ես եմ բնուրեան,
Էլ աշխարհում գիրք չ'մնաց, որ իմ սիրտը չ'տեսնէր···

Բոլոր գետերը աշխարհում հոսում են միշտ դէպի ծով,
Բոլոր բաղերը ջրերում խօսում են նիշտ սրտի սով.
Բոլոր դատերը մարդու մէջ հիւսում են նո՛ր առաւօտ,
— Գիրքը գրոց միայն իմ մէջ. սիրտս անհուն
կեանքի ծով...
Դուք չ'գիտէք, ի՞նչ են խօսում ծաղիկն ու բոյսը դաշտի,
Դուք չ'գիտէք, ի՞նչ են ասում մրրիկն ու լոյսը սրտի.
Բոլոր գետերը հոսում են համայնական աղբիւրից,
— Կեանքը մէկ է, աշխարհը մէկ, միտքը նորա՝
ջանքի՛ ծով...

Ինչ եղել է, կամ ինչ որ կայ, ինչ կ'լինի անխուսափ,
Մէկ է միայն, մէկ անբաժան գետի նման բազմաչափ,
Նա է հոսում, անվերջ դասում յաւերժութեան
գործը իւր,
Կեանքը մէկ է, աշխարհը մէկ, սիրտը նորան
միակ չափ...
Սէգ սարերից ու ծովերից, խոր ու հզօր հողմերից
Լսւում է միշտ խորհրդաւոր կեանքի իմաստը անբիծ
Կեանքը մէկ է, աշխարհը մէկ, գիրքը նորա
մարդու մէջ.
— Կարդա՛ եւ տե՛ս յաւերժութեան սուրբ էջերը
աստղերից...

Մի տե՛ս. ծաղիկը մորինու զգում է իր բողբոջը,
Կարմիր շողիկը վարդենու գիտէ սիրոյ սուրբ կոչը.
Բոյս ու ծաղիկ, լոյս ու հովիկ լեցուած են խոր
կարօտով,
Աղմկարար վտակը իսկ զգում է իւր խոխո՛ջը...
Եւ բնութիւնը միշտ յոի՝ շէն ու շողուն գարունին,
Հազար նազով, հազար սազով սպասում է իւր բերքին.
Ցաւերի մէջ սիրտը անվերջ կարօտ է միշտ իւր երգին.
— Ո՞վ յօրինեց էս երկնաւոր կեանքի հզօր բողբոջը...

Մութ գիշերին իւր յուշերին հողմը կարօտ է խօսում,
Իսկ անմեկին իւր փշերին վարդը հեքիաթ է ասում.
Աստղ ու արեւ, սէր ու բարեւ մէկ աղբիւրից են գալիս,
— Երթերի մէջ մէկը անվերջ իւր կարգ ու սարքն
է դասում...
Իմ սրտի մէջ խոր ապրումի հազար ու մի աղբի՛ւր կայ.
Ինձանից դուրս կեանքի գաղտնիքը գտնելու նար չ'կայ..
Չէ՞ որ հոգին է բնութեան անցուդարձին միշտ վկայ.
— Կեանքի սաղմոսը սրտիս մէջ միշտ ասո՛ւմ են
եւ խօսում...

1928.

3. Քո սրտի մէջ կարող ու վէս մի օրէնք՝
Տիեզերական օրէնքի պէս անխորտակ.
Քո մէջ հզօր ամրոցնե՛ր կան, բերդ ու զէնք,
Որ անում են քո գործերը ներդաշնակ...

Երկնքի պէս միշտ հաստատուն եւ արի՛,
Դու քնում ես իրադարձը Յաւերժի.
— Ոչ փոթորիկ, ոչ զօրքը սեւ խաւարի
Քեզ բնաւին՝ դիրքերիդ մէջ չե՛ն շարժի...

Եթերի բիւր շարժումների միակ տէր՝
Դու ես հսկիչը գոյութեան անաղարտ.
Միտքդ հզօր սաւառնում է անվեհե՛ր,
— Զուր չէ՛, որ միշտ անուանում են քեզի մարդ...

1919.

4. Ինձնից երգ մի՛ ուզէք, — երգ խնդուն, վառվռուն.
— Ի՞նչ կարող եմ երգել ձեզ համար.
Ես եկել եմ հեռուից, ես փակել իմ տուն,
Իմ ուղին միշտ պատել են կարի՛ֆն ու խաւար:
Դաշտ, արօտը կարօտ, բուրաստանս տխուր.
Եղբայրս՝ բանտի մէջ, հայրենիքս գերուած.
Կեանքը մեր սգի մէջ, մեր քնարը միշտ լուռ,
— Մեր աստղերը մարած, էլ չ'կայ մեզ աստուած...
Դառնութեան ու մահուան սեւ մուրհակը ձեռին՝
Տե՛ս, աշունը եկաւ, մեր երկիրը տիրեց.
Բախտի ձեռքը ընկանք, ծանր լուծ մեր վզին,
— Մեր գլխին խոր զուլում չար զալումը բերեց...
Իմ սրտում, իմ արտում վիշտը խոր. ու խաւար.
Իմ վզին, իմ ճամբին նորտութիւն...
Ինձ համար միշտ օտար է ժխորը յիմար,
— Շուրջս միշտ մի տխո՛ւր վայնասուն...
Ինչ կարող եմ երգել ես ուրախ, բերկրալի,
Քանի վիշտը դեռ կայ, քանի կեանքը մեր ցաւ.
— Ես եկել եմ հեռուից, իմ ճամբէն դառնալի՛,
Կեանքս սո՛ւգ է իրաւ, սիրտս բո՛ւք է անբաւ...

1904.

5. Քանի՛, քանի՞ բախտը մանի կեանքի թելը անուանի,
Քանի՞ սիրտս կծիկ անի ու տանջահա՞ր միշտ բանի.
— Միթէ՞ էստեղ մէ՛կը չ'կայ՝ սիրտը հզօր եւ արի՛,
Որ ճախարակը սեւ բախտի մի հարուածո՛վ կործանի՞..
Թէ ճիշտ է, որ մեր գործերին մենք ենք տէրը,
տիրական,
Թէ ճիշտ է, որ մեր սրտի մէջ՝ Հանճարը մեր բանական
Փորձ է անում, կեանքը տանում դէպի երկինք,
դէպի վեր,
— Ինչո՞ւ մնայ միշտ մեր վզին բախտի լուծը
անարժա՞ն...
Աչքեր ունեմ, տեսնել գիտեմ ես ամէն բան եւ հեռուն,
Մտքեր ունեմ, սաւառնում են տիեզերքը մեծ եւ անհուն,
Ձեռքեր ունեմ ժիր եւ ընտիր՝ կախարդակա՞ն
գործի տէր,
— Ինչո՞ւ քաշեմ ես սեւ բախտի չար տնազը,
բռնութի՞ւն...
Քանի՞, քանի՞ բախտը բանի, կեանքի համար գի՞զ անի.
Քանի՞, քանի՞ չար բերմունքը սրտի թելերը մանի.
Միթէ՞ չ'կայ մէկը մեր մէջ՝ իր զօրութեամբ անսովոր —
— Էս պատահար դազգահը չար՝ մէկ հարուածով
կործանի՞...

1928.

6. Քո մահինը գունատ, քո դահինը անյայտ,
Քե՛զ, անգին իմ ընկեր, էլ ոչ ոք չի լսում:
Դու խոր ցինջ ես մտել, քո վիճակը հաստատ, —
Բնությունը գթոտ քեզ օրո՞ր է ասում:
Դու անցար քո փշոտ սեւ ուղին,
Աշխարհում թողեցիր վշտի ծով.
— Հողի գիրկը անդորր է, անգին,
Եւ քո քունը յաւերժ անվրդով.
—Բնի՞ր, մահը օրո՞ր է խօսում:
Շուտ կ'գայ վաւ գարունը սիրուն,
Դաշտ հովիտը փարթամ կ'զուգուեն.
Քեզ թփեր կ'գրկեն սիրասուն,
— Քո վերայ զով հովեր կ'սահեն...
Եւ մի օր՝ մի շքե՞ղ առաւօտ,
Կամ տխո՞ւր, ստուերոտ մի գիշեր —
Քո վերայ քաղցրաձայն ու թախծոտ
Կ'խօսեն սիրահար բլբուլներ...
— Դու քնի՞ր, բնությունը օրո՞ր է ասում:
Տարիներ կ'սահեն անընդհատ,
Իրադարձը կեանքի անխուսափ,
— Ով որ կայ, կամ ով գայ այս տխո՞ւր անապատ,
Նա մի օր կ'մտնի՞ գերեզմա՞նը անխաբ...
— Բնի՞ր, մահը օրօր է ասում...

7. Ո՞վ է տէրը տիեզերքի.
— Նա, որ մէկ է նորա հետ...
Կանգնեմ դէմը վեհ փառքի,
Աղօթք անեմ առյաւէտ,
Սրտով հասնեմ երկնային՝
վառ աստղերի սուրբ գահին...
Երբ գայ ժամը, ծագէ լոյս,
Կեանքում շողան սէր եւ յոյս,
Ակունքներիցը հոգուս
Սեւ կապանքը բաց անեմ.
Դէմդ. ելնեմ ու վսեմ
Կեանքի աղօթքը ասեմ...
— Տաճարիդ մէջ կենդանի
Խոր խորհո՛ւրդը միշտ լսեմ...

1928.

8. Ծովն է գալիս իմ վերայ,
— Ծովը խռով աշխարհի.
Զօրք է գալիս իմ վերայ —
Բուքն ու բորանը չարի...
Բանի կ'ուզէ քամին փչի,
Սեւ ագռաւը միշտ կանչի՛,
— Բուքն ու բորանը մուրջի
Թող գրո՛հ տան իմ վերայ...
— Զէ՞ որ խարիսխը նաւիս՝
Ջրերի մէջ խոր ծովիս
Ժի՛ր բանում է աշքարայ,
Թող ծովը գայ իմ վերայ, —
Եւ նաւը իմ յաղթաբեր,
— Ես գնում եմ դէպի վեր...

1928.

9. Երկու ծանր լուծ են դրել իմ վզին,
Երկու տարբեր ցոյց են արել իմ սրտին.
— Ամենօրեայ հոգսը իզուր եւ անդուր,
Եւ հոգեւոր պաշտօնը իմ երկնային:
Ես մի կողմից գործ եմ անում եւ ջանում,
Որ շէն կենայ էս իմ տունը նիւթական.
Իսկ միւս կողմից սիրտս հաշիւ է անում,
Որ պարտքը իր տայ բնադիր վարչութեան...
Ի՞նչ են կապել երկու պաշտօնն իրար հետ, —
Դէթ նոցանից մէկը լինէր իմ ուսին...
— Էս նիւթական հոգսերը՝ զո՛ւր ու չնչին,
— Թողէ՛ք միայն պարտքը վերին վարչութեան...

1926.

10· — Տե՛ս, ամէն օր աղօթելիս արարչութեան վեհ գործին՝
Քե՛զ, անսովոր հարց եմ տալիս, ունայնասէ՛ր հողածին·
— Ինչո՞ւ անհոգ, զուր ու չեզոք չես տեսնում
Լոյսի նման քեզ զուրգուրող ծնողին···
Ես ամէն օր՝ սիրտս սովոր ման եմ գալիս պարտէզում,
Վարդերի հետ, զարդերի հետ խօսք եմ անում
ու խօսում·
Բուրաստանս նա՛զ է անում, գէսքը փարթամ ու բազում·
— Սաղմոսնե՛ր եմ ես միշտ ասում կեանքի անհա՛ս
տաճարին···
Հողը՝ ծնող· ջուրը՝ սնող, լոյսն ու արեւը աստուած,
Վարդ ու շուշան, մարդ ու գազան մէկ արգանդից
են ելած·
Ես՝ ամէնքի եղբայրը մեծ, սիրտս մտքով զարդարուած,
— Ես ամէն օր աղօթում եմ արարչական հանճարին···

1926·

11. Էս լուռ գիշերին Յոյսը չի մնում
Արցունքով պատած սրտիս խորանում.
Սուր-սուր փշերին՝ խոհուն արտիս մէջ
Ցնորքն ու իղձը դրուա՛ծ են անվերջ...
Էս նինջ գիշերին ողբաձայն հոգիս
Ծանր սգում է շիրի՛մն անուրջիս...
Էս ջինջ գիշերին կեանքի տանարում
Սիրո՛յ, երազի՛ ջահերն են մարում, —
Տեսնում եմ, ինչպէս իմ սէրը գարնան
Իջնում է տխո՛ւր եւ լուռ գերեզմա՛ն...
Ահա եւ խարոյկ... ինչո՞ւ փայտը՝ թաց.
Սրտումս սուգ է, թաղում կա՛յ արած:
Խարո՛յկ է վառուում, — իմ երազը այն,
Ծուխը ելնո՛ւմ է ամպերի նման...
— Եարա՞ք կ'տեսնենք արդա՛ր դատաստան...
Ոչ ոք էլ չասաց, ինչո՞ւ պարտիզում
Ծաղիկն ու վարդը թօշնում են, պակսում.
Ինչո՞ւ այդքան խոր աստղերը հզօր
Խորհուրդ են անում գա՛ղտ ու անսովոր:
— Էս խոր գիշերին լռութեան ծոցում
Իր զանգն է քաշում մահը անդադրում...

1904.

12· Քաղաքը հին ծովի ափին միտք է անում դառնագին,
Վիշապի պէս օրօրուելով՝ շարժում է նա իւր մարմին·
Հազար գլուխ եւ հազար ծուխ, — անթիւ աչքեր
կայ իւր մէջ,
Հազար կրակ· հազար նրագ՝ շարքէշարան, բազմաէջ:
Փողոցներում, տների մէջ կեանք է շարժում ու վիժում,
Զանք է անում մարդը անվերջ, խլվլում է, խժվժում··
Վիշապի պէս ու բազմատես միտք է անում հին քաղաք·
— կեանքը այդպէս իւր բազմածէս գործն է անում
համարձակ:
Ով է կազմել, մէջը բազմել, փեթակը մեծ, անսասան·
— Եւ անում է նա յաւիտեան՝ լաւն ու վա՛տը
անխափան···
Դու, որ մէկ ես, ով արարիչ, տիեզերքի հետ անքննին·
Մարդը, քո մէջ բունը դրած, հետեւում է քո գործին··

1924·

13· Ծովի ափին, սարի լանջին կայ զարդարուն մի պարտէզ·
— Անմահական ծաղիկն ու բոյս կեանք են շողում
նրբատես:
Վարդը փայլուն, զարդը գարուն, սիրոյ երգն է
երազում,
Եւ նունուփար, ասես գոհար, իրա բերքն է միշտ
խօսում:
Սաղարթախիտ թփերի մէջ հազար գոյնով ու նազով —
Օրօրւում է շուշանը նոր, զափրանը խո՛ր իր սազով:
Նօճիներն են խորհրդաւոր կամար կապել վերեւից, —
Եւ պահում են վարդն ու շուշանը ջերմակէզ արեւից···
Հողմը սարից հով է բերում, ցող է անում նոցա մէջ·
— Ծաղիկները կախարդում են, արտացոլում,
ծովի մէջ···
Բողբոջում են ծառ ու ծաղիկ եւ անում են գեղեցիկ···
— կեանքը հոսում եւ խօսում է, կարծես խորի՛ն
մի զատիկ···
Հանդիսաւոր համերգ ազդու անհուն կեանքի ու բերքի՛·
— Տէր Արարիչ, որ մէկ ես դու տիեզերքի հետ
անբաժան,
Ցօրինել ես Քնարը այս բիւր լարերից Քո ջանքի,
Որ նա հոսի՛, գովքը ասի՛ քո գործերի՛ն յաւիտեան···

1925·

14· Տիեզերքի խոր կենդրոնի մէջ ես իմ վրանը զարկեմ,
ժամանակի ակունքի մօտ կեանքը վսեմ խնկարկեմ·
Այն, ինչ եղաւ, կամ ինչ որ կայ եւ ինչ լինի այսուհետ,
Սրտիս խորքում ոսկի տառով ես մի առ մի թուարկե՛մ··
Տեսնեմ ընթացքը այն օրի, երբ նոր ծագեց կեանքը մեր,
Գտնեմ գնացքը անցքերի, ուր նոր ծնուեց ջարնքը մեր,
— Բազմութիւնները բազմութեանց մտքիս թեւովը
գրկեմ,
Տեսնեմ, ի՞նչպէս գլուխ եկաւ սրտի հարուստ հանքը
մեր···
Եւ տիեզերքի հազար ու քիւր անցքերի մէջը ազդու
Ես իսկապէս տեսնեմ կապը աշխարհների ու մարդու·
— Միտքս հասնի իսկ իրերի յաւերժական աղբիւրին,
Տեսնեմ, ինչ է յար ու յամա՛ռ կեանքում գործող
ես եւ դու···

1928·

15. Կայծակի նման ամպերի միջեւ
Անվերջ գալարուեմ.
Փոքրիկի պահին Աստուծու առջեւ
Մենակ թափառե՛մ:
Ծովերի ափին՝ ժայռերի պէս դեւ
Կանգնեմ ու դիտե՛մ.
Սրտումս մրրիկ, կայծակը ինձ թեւ՝
Երկնքի միջով նախրե՛մ ու դատեմ...
Բարկանայք ալեաց համերգը սիրուն,
Ու սէգ լեռների խորհուրդը անհուն
Կախարդուած լսե՛մ.
Եւ անվերջ խօսեմ
Գովքը արեւի, նինջը եթերի,
— Գարնան կարօտը, աստղերի լեզուն...

1904.

16. Ես չե՞մ փափագում ձեր ունայն փառքին,
— Աշխարհին յատուկ
Ես չեմ նուագում իմ երգը կուռքին —
— ժխորին անձուկ:
Զո՛ւր էք խնկարկում անցաւոր կարգին,
Երբ շուրջը լի՛ են աւերմունք եւ սուգ...
— Հերի՞ք է, որքան սողալ իմացաք
Կեանքի սրտմաշուկ ճահիճների մէջ.
Հերիք է, որքան դառնութիւն տեսաք
Աշխարհին հլու դահիճների մէջ...
Հերի՞ք է, որքան իզուր մոռացաք
Աստուա՞ծ դառնալու ուղին երկնաէջ...
Ես չեմ համակում ձեր անմիտ կարգին, —
— Ինձ միշտ դէպի վեր կանչում է հոգին.
— Զարնեմ իմ սրտի վշտէ՞ կապանքին —
Փշրե՞մ ու երթա՞մ.
Իմ դիրքը անրիծ, իմ ձիրքը լոյսից,
— Ճամբէս դէպի վե՞ր — ճախրեմ ու երթա՞մ, —
Աստուած դառնալու ցնորքը երկնից
Ձեռքումս վառած՝ բռնեմ ու երթա՞մ...

1908.

17. — Կո՛յր էք դուք իրաւ, չէ՞ք տեսնում բնաւ,
Ի՞նչ է կատարւում աշխարհում անքաւ.
Ինչե՞ր են եղել, ինչե՞ր կ'լինեն
Կեանքի գետի մէջ խո՛ր ու սրարշաւ:
— Անթիւ գարուններ փարթամ ու կայտառ
Սիրոյ պնրանքով եկան ու անցա՛ն.
Անթիւ ձմեռներ դժընդա՛կ եւ չար
Զուր ցաւեր բերին եւ անհե՛տ կորան.
Եւ շա՛տ-շատ անգամ գարնան գալստեան
Ողջոյնը բերած հաւքե՛րը եկան,
Լոյսի յաղթանա՛կ — արեւ երգեցին.
Եւ շա՛տ-շատ անգամ աշնան շնչի տակ
Ծաղիկն ու կանաչ խոտ՛ուր թօշնեցին...
Սրտերը խամրած ու կեանքը մարած,
Անուրջը ոսկի՛ միշտ մուրջը պատած.
Ամէն ինչ տխու՛ր ժամանակը զուր՝
— Իր մահատարած անմիտ թեւի տակ —
Թշում է դէպի մշո՛ւշն անցեալի.
Ի՞նչ է կեանքը, եթէ ոչ անդուր —
Մի չար պատահար՝ սո՛ւգ ու սեւով լի՛...

1904.

18. Կարելի՞ չէ՞, որ ֆուրմը իւր տանարի մէջ
Փորձեր անի պղծալի՞.
Կարելի՞ չէ՞, որ մարդը իւր կանառի մէջ
Գործեր բռնի յանցալի՞:
Ո՞վ է արել աստուածային կոչումի տէր
Մարդուն ստոր մի դասաբ, —
Նա կուրացել է կրքի մէջ՝ օր եւ գիշեր
Կոտորում է անհէսաբ:
Բազարի մէջ, ազարի մէջ մարդը անվերջ
Մինչեւ կոկորդը թաղուած՝
Մոռացել է անունը իւր, հաւատ ու սէր —
Իւր գործե՞րը հոյակապ:
Սուրը ձեռին, խայթը սրտին՝ թոյն է ցանում —
Օձի նման միշտ յիշար.
Վարում է իր գործը պատիր, — կեանքը անում
Սպանդանո՞ց ու բազար...
— Ո՞վ է արել աստուածային պաշտօնի մէջ
Մարդուն անմիտ մի դասաբ,
Որ մոռացել է բնուրթեան տանարի մէջ
Իր անո՞ւնը, իրա չափ...
1928.

19· Երազումս Գանգէս գետի ափն հասայ·
Փեֆիրների հոգեզրոյցը տեսայ···
Երբ նոցանից մէկը ինձի մօտեցաւ,
Ասի՝ կարդա՛ նակտիս գիրը եւ ասա՛·
Հայացքը խոր նա բեւեռեց աչքիս մէջ,
Ժիր ու հզօ՛ր նա դեգերեց սրտիս մէջ
Ապա կամաց ինձի ասաց սրտացաւ·
—Աշխարհը ողջ գրուած է քո սրտի մէջ···
Նորա հզօր ներշնչումից կախարդուած՝
Խոր նայեցի սրտիս ներսը զարդարուած·
Եղած–չեղածը՝ տիեզերքում տարածուած,
Սէր ու եթեր, անհաս երազ ու Աստուած,
Լոյսի նման գրուած տեսայ սրտիս մէջ···
Ինչ կայ, չ'կայ մեր շուրջը չար ու բարի՛,
Ինչ եղել է, կամ կ'լինի կեանքի մէջ,
Դրուած է միշտ, գրուած է նիշտ հոգուս մէջ·
—Սրտումս խոր պատմութի՛ւնը աշխարհի···

1925·

20· Ասի, մայրիկ, ա՛ռ ինձ համար մի քնար·
— Ես էլ կ'ուզեմ երգ նուագել սիրահար:
Աշխարհը, — տե՛ս — երգ է ասում դառնագին,
Ես էլ կ'ուզեմ ե՛րգս ասեմ սրբաբար:
Ասաց, որդեա՛կ, քնարը կա՛յ քո սրտում·
Նա երգում է հազարաձայն ու տրտում:
Զա՛րկ քնարին, որ երկնային երգ ասէ, —
Բոլոր ձայները աշխարհի քո սրտում:
Ասի, քոյրիկ, տո՛ւր ինձ մի գիրք, որ կարդամ,
Տեսնեմ, ի՞նչ են գարունները էս փարքամ·
Ի՞նչ են ասում աստղ ու արե՛ւ եւ լուսին, —
Մարդուն ո՞վ է իզուր տանջում ամէն ժամ···
Ասաց, երբա՛յր, գիրքն ու հանճար սրտիդ մէջ,
Տիեզերական գրադարա՛նը քո մէջ·
Գիրքն ու գիրը քո սրտից են դուրս գալիս,
Իմաստութիւնը աշխարհի սրտի՛դ մէջ:
Ասի, եղբայր, ե՛կ մի ցո՛յց տուր կեանքը խոր,
Տեսնեմ ի՞նչ է շուրջս լինում ամէն օր·
Ո՞վ է բերում, ո՞վ է կրում վիշտ ու ցաւ,
Ո՞վ է գծել պատկերը այս անսովոր···
Ասաց, եղբայր, կեանքը անմար քո սրտում·
Անցուդարձը իսկ իրերի քո սրտում·
— Կեանքի գետը քո սրտից է դուրս գալիս·
Եղած–չ'եղածը ամբարած քո սրտում···

1928·

21· Սիրտս, ասես, բողբոջում է գարնան պէս,
Վարդն ու ծաղիկս անում են երկնատես·
Նոր առաւօտ, հոգուս կարօտը անհուն,
Սիրտս, ասես, ժողովում է մեծ հանդէս:
Արեւի տակ երկնակամարն է շողում,
Միտքս մի նաւ՝ ծովերի մէջ է լողում·
Բերքս անթիւ, ճիրք ու պատիւ, խինդ ու սէր
Սրտումս նոր մի հարսանիք են խաղում···

Սիրտս, ասես, կանաչ ու վարդ եւ շուշան,
— Պարտէզը իմ ծաղկաւէ՛տ է, աննման:
Նորան արեւը այրում է վերեւից,
Երազի մէջ ցո՛ղ է ուզում բուրաստան:
Սրտիս խորին անդունդներից բնածին
Դո՛ւրս է վազում անակնկալ խեւ քամին,
Ու ամէն կողմ շաղ է տալիս սեւ ամպեր,
Որ ցող բերի արեւակէ՛զ պարտէզին···

Խտանում են ամպերը հուր, սեւաթոյր,
Բարձրանում են զօրքերը բիւր, ասես խուր,
— Տեսէ՛ք, ինչպէս քամին զէնք է բաժանում,
Որ գա՛յ շուտով փոթորիկը, ձեռքը սուր...
Ամպը գոռում է ահաւոր ու բարձրաձայն,
Գալարւում են կայծակն ու շանթը դաժան,
— Բռնկում մրրիկը խոր եւ հզօր...
Սիրտս միայն կռուի դա՛շտ է անսասան...

Սրտումս մերթ դժգոյն ուշուն է գալիս,
Հողմը անտես վիշտ է բերում եւ լալիս.
— Ծաղիկն ու բոյսը թառամած, սգաւոր, —
Ո՞վ է երգում, թաղման ծէսը անելիս...
Անտառը զուր տերեւաթափ՝ սրտիս մէջ,
Բնաթը լուռ եւ յուսախաբ՝ ձեռքիս մէջ,
Տե՛ս, քամին է խոր հեկեկում դառնագին.
— Մահն է լալի՛ս, պտո՛յտ գալիս սրտիս մէջ...

Սրտումս կայ եւ ահաւոր տեսարան,
Երբ հնչում են ձմեռը, բուք ու բորան·
Բուքը բռնում, թեփին ոռնում վայրենի,
— Ո՞վ է սիրտս անում աւեր ու վերան···
Ձիւնը ծածկում է շրջապատը մտքիս,
Պիրկ բռնում է սառնամանիքը հոգիս,
Բուքն ու սառոյց ցոյց ու զրոյց են անում,
— Թեփին տխուր շարժում է զուր խե՛ղճ հոգիս···

Սառնամանիք է չորս կողմը վայրենի՛···
Խուլ ոռնո՛ց է հողմը բերում գայլենի·
Գազանը չար՝ վոհմակներով իւր դաժան
Որս է ուզում իմ սրտի մէջ, որ տանի՛···
Եւ պատռո՛ւմ են երկինքը իմ բուքն ու ձիւն,
Գլխատում են մտքերը իմ եւ աւիւն·
Կիրքն է այդպէս գազանի պէս որս անում···
— Մահ է բերում ինձ էս ձմեռը անհուն···

1921·

22· Եթէ իրօք հասար կեանքիդ բարձունքներին յաղթական,
— էլ ի՞նչու ես կուրծքդ թակում, կեանքդ լալիս
անարժա՛ն·
Քո լինելու, չ'լինելու հարցը զո՛ւր է եւ անմիտ,
— Տիեզերքի մէջ լինելը կայ եւ կ'լինի՛ անխափան···
Զուրը սառոյց, հուրը մոխիր կ'դառնայ,
Եղած, չեղածը յաւիտե՛ան, անջնջելի՛ կ'մնայ,
Թէկուզ աւազ, թէկուզ մի մազ, աստղ ու լուսին եւ արեւ
Տարբեր ձեւի եղել են միշտ կամ կ'լինեն անխնայ···
Գոյութեան մեծ շղթայի մէջ՝ դու աննշան մի օղակ՝
Գործով անյայտ, փորձով վհատ, սիրտդ կարօտ
ու անյագ,
Աւազի պէս գալարուում ես դու մի անմիտ մեքենայ,
Եւ չ'գիտես ոչ նախորդը, ոչ գալիքը երկնի՛ տա՛կ···
Ճամբիդ վերայ՝ մէկ վինակից դէպի միւսը անցնելիս,
Տաշեղի պէս կեանքի ծովում անյայտ ու զո՛ւր
լող տալիս, —
Վերջինը չես եւ չես եղել դու առաջին անցորդը,
Որ աշխարհում գործի համար մի նոր բե՛մ ես
դուրս գալիս···
Գետն հոսում է եւ նորա մէջ դու աւազի մի հատիկ,
— Աշխարհ գալիս՝ քեզ չե՛ն ասել կեանքի միտքը ու
գաղտնիք·

Բեմիդ վերայ դու չես հիմնի կեանքի համար ո՞ր
զատիկ·
Ուզես, չուզես, պէտք է լինիս դու հանելուկ
ու խոծիկ, —
— էլ ինչո՞ւ ես զուր եւ տխուր կուրծքդ թակո՛ւմ
եւ լալիս···

1924·

23. Քանի՞ անգամ ասել եմ ձեզ, սիրտս հանդէս է անվերջ.
Ամէն մի բան, ամէն էակ իր տեղն ունի նորա մէջ:
Երկինքը խոր, աստղունք հզօր, յարդագողը՝
ծիրկաթին,
Խաւար ու լոյս, ցուրտ ու կրակ նորա մէջ...
Ժամանակի երթը հզօր, տարածութեան ձեւը խոր
Իմ աղբիւրից են դուրս գալիս աչալուրջ.
— Սիրտս արեւ՝ մոլորակներ բիւրաւոր
Թաւալւում են, պտո՛յտ գալիս նորա շուրջ...
Թէ խելք ունի երկրաչափը. թող միտ՛ք անի ու չափի.
Հազար ու բիւր նոր շարժումներ իր սրտումը կ'գտնի —
Տարածութեան ձեւերը բիւր, ժամանակի երթը խուր
Միշտ կ'տեսնի իր սրտի մէջ կենդանի՛...
Բնագէտ ես, կամ իմաստուն. աչքերդ բաց ու նայի՛ր,
Տե՛ս, ինչե՞ր կան քո սրտումը բնագիր.
Սաղմ ու կազմը քեզ գրաւող, կեանքի խորհուրդը
գաղտնի,
— Տե՛ս, աշխարհը սրտիդ մէջ է անխտիր...
Հնագէ՛տ ես, հետք ես ուզում անյիշելի անցեալի.
— Զո՛ւր ես փորում կուրծքը հողի՝ էն տեղ չ'կայ
ոչ մի բան.
Պեղումներդ քո մէջ արա՛, — քո սրտո՛ւմը կեանքով լի.
— Զէ՞ որ միայն մէջդ համայն կայ անցեալը,
եւ ներկան...

— Քանի՞ անգամ ասել եմ ձեզ, սիրտս հանդէս է
անվերջ·
Ամէն մի բան, ամէն էակ իր տեղն ունի նորա մէջ·
Ժամանակի գետը արագ, տարածութեան ծովը խոր,
— խաւար ու լո՛յս, գարուն ու բոյս ապրում են մի՛շտ
սրտիս մէջ···

1925·

24. Իմ սրտի մէջ օր ու գիշեր սահմանադիր ժողով կայ,
Եւ ժողովին միտքս հզօր ընտրւում է նախագահ:
Հակում ու կիրք, երազ ու ձիրք, չարն ու բարին,
կեանքի սէր
Մասնակից են վեհ ժողովին, — սիրտս արքո՛ւն
մի վկայ...
Մերթ անզգամ վեր է կենում կիրքը անզուսպ իր տեղից
Ազատ ու հարթ բարք է ուզում իրա համար ժողովից:
Ձիրքը ասում է. թոյլ տուէք դէպի երկինք ու երթալ,
Երազն ուզում է սուրբ գարուն միշտ անթառամ
ու անքիծ.
Սէրն ասում է. հնա՛ր գտէք երթեմական վեհ կեանքի,
Գուրքն ուզում է մի նար գտնի, որ խեղճ աշխարհը
փրկի՛...
Չարն ու բարին՝ — անհաշտ ու հին թշնամի —
վէճն են անում, մէջ են բերում լաւն ու վատը աշխարհի.
— Եւ լսում է ժողովը լուռ կամքը, խօսքը ամէնքի:
Նախագահը մերթ ազդարար սաստում է չար խօսողին.
Ցոյցե՛ր անում կարգի համար, որ զո՛րծ ասեն ժողովին..

Սիրտս դպրոց, գիրքը գրոց բաց է մէջը ոսկետառ,
Ու կարդում եմ ես ամէն օր խօսքը նորա երկնաշար:
Սիրտս ատեան ու դատաստան՝ մէջը անվերջ մի ժողով,
Որ անընդհատ սահմանում է օրէնքը իւր անխոով:
Իսկ զօրքերը իմ բնադիր՝ միշտ մասնակից ժողովին,
Պատուէրները լսո՛ւմ են ժիր, կեանքի՛ դասում
անվրդով...

Զո՛ւր էք ասում. մէկ չե՛ն բնաւ
Մարդն ու գազանը սրտով.
Զո՛ւր էք խօսում, մէկ չեն իրաւ
Հոգու բա՛ռնքը կարօտով...
Սահմանադիր ժողովը կայ
Միայն մարդու սրտի մէջ.
— Գազանի մէջ բնաւ չ'կայ
Խօսք ու զրո՛յցը անվերջ...

1927.

25. Զանգը զնգում է զանգատան —
կեանքը կանչում աղօթքի.
— Սիրտս խնկում է յաւիտեան
Եւ խո՛ր տենչում գալունքի:
Ո՞վ է անվերջ զանգը քաշում,
Որ արթնանան խոր քնից.
— Ո՞վ է անվերջ սիրտս տաշում,
Որ ինձ պոկի իմ քնից:
Աշխարհն, ասես, մի զանգատուն —
Սիրտս զանգ է նորա մէջ.
Ու զնգում է սիրտս անհուն,
Շուրջը նորա ելեւէջ...

1928.

26· Սիրտս պարտէզ մի երկնատես,
Մէջը անթիւ ծաղիկներ·
Սիրտս, կարծես, մի մեծ հանդէս,
Մէջը խնոյք, խունկ ու սէր:
Պարտէզի մէջ ջուր է հոսում, —
Ծաղիկներս կ'շողան·
— Իմ բէջարած բերքը բազում,
Տերեւ ու թո՛ւփ կ'խաղան...
Հանդէսի մէջ՝ վեր ամբիոնից
Միտքս քարոզ է ասում·
Մէջլիսի մէջ՝ գարուններից
Սիրտս հէքիա՛թ է լսում...

1928·

27. Բո՛ւք ու բորան սրտիս մէջ.
Ցուրտ ու թեփի անընդմէջ
Գազազում են ահաւոր,
Վազվզում են սրտիս մէջ...
Ու կատաղած բորենի,
Գայլ ու գազան վայրենի —
Խոր ոռնոցով գայլենի
Թափառո՛ւմ են սրտիս մէջ...
— Ինձ իմ զօրքն է միշտ պահում,
Շուրջս զօրք է մերթ սահում...
Գայլ ու գազան արնախում
Երկնչո՛ւմ են սրտիս մէջ...
Լոյս առաւօտ սրտիս մէջ,
Յոյս ու կարօտ սրտիս մէջ.
— Կեանքն ու գարուն, սէրը անհուն
Բողբոջում են սրտիս մէջ...

1928.

28· Անթիւ դարեր մարդը իզուր ջանք է անում, որ գտնի
Արարչութեան գաղտնիքը խոր, խորհուրդը մեծ
անհունի·
— Ե՞րբ եւ ինչպէ՞ս, կամ ո՞րտեղից ծնունդ առաւ
աշխարհը,
Երբ կ'լինի վերջին ժամը նորա ահե՛ղ վախճանի···
Սաւառնում է միտքը արի տիեզերքի լայն դաշտերում,
Զուիրնում է ձիրքը բարի արարչութեան գործերում·
— Զէ՞ որ անտէր ու անիմաստ ցանքսը պտուղ չի
բերում,
Մարդը երբէք բնութեան վեհ օրէնքներին չի՛ հասնի··
Եւ սիրտս հուր, մտքերս բիւր՝ բուրմունքը խո՛ր
ծաղկոցի·
Օր ու գիշեր ես գնում եմ ծաղիկների՛ն իմ այցի·
Եւ ամէն օր ես դնում եմ հարցումը իմ մեծ գործի·
— Ասէ՛ք, ինչպէ՞ս ծնունդ առաւ էս աշխա՛րհը
անուանի···
Դուք, որ գիտէք արարչութեան խնամքը· սէ՛ր
եւ զայրոյթ,
Դուք անցել էք նանապարհը նորա հզօր եւ հմուտ·
Դուք թրծել էք ձեր սրտի մէջ կամքը նորա եւ բնոյթ,
— Ասէ՛ք, ո՞վ է աներեւոյթ տէրը հզո՛ր անհունի···

Հարց եմ տալիս ամէն անգամ ծաղիկներին ոսկեծամ. –
Դուք տեսել էք եւ լաւ գիտէք կեանքի զատիկը,
բայրամ, —
Դուք լսել էք, խո՛ր կ'դատէք չարն ու բարին ամէն ժամ,
— Ո՞վ է դրել Դարբնոցի մէջ հիմքը վերի՛ն Զնդանի...
Ծաղիկ ու բոյս անտարակոյս միտք են անում աննման,
Թէեւ լռի՛կ ու անլեզու՝ միշտ լաւ գիտեն ամէն բան,
Բայց չեն ուզում մարդուն ասել գաղտնիքը խո՛ր
պատմուքեան,
— Նարաբ ինչպէ՞ս ծնունդ առաւ էս աշխա՛րհը
անուանի...

1928.

29. Կրակի պէս միտք է հոսում աներեւոյթ իմ բնից.
— Մէկը անվերջ խօսք է ասում սրտիս վերին ամբիոնից.
Դատաստանը իմ սրտի մէջ գործ է անում միշտ արդար..
— Մէկը անվերջ դատ է անում եւ հա՜րց անում
ինձանից...
Բերքերս շատ, հունձս առատ՝ խոր ամբարած սրտիս
մէջ,
Միտք ու խրատ եւ լա՜ւն ու վատ բուն են դրած բերդիս
մէջ:
— Մէկը իմ մէջ կարծես անվերջ կալ է կալսում ու
խօսում.
Ով է անյագ բերքս աղում, արագ շա՜ղում կեանքի մէջ..
Մէկը ահա խօսք է ասում իր ամբիոնից լուսավառ.
— Ե՞ս եմ ապրում բնութեան մէջ, իսկ նա օրէնք ինձ
համար,
Թէ՞ բնութիւնը իմ մէջն է իր գործերով բնադիր,
Իսկ ես նորա օրէնսդիրը՝ լիակատար ու արդար...

1928.

30· Դու չես տեսնում աշխարհի վեհ սարք ու կարգը,
տնաբանդ,
Տե՛ս, անսովոր հոսում է խոր բարք ու վարքը հնազանդ·
Եղած, չեղածը հաւասար՝ մի արգանդից, մի բովից,
—կեանք են ծնում, գործ են անում անհատիկը ու
Եռանդ···
Տե՛ս, երկաթը լոյսերի տակ մասնիկներ է դուրս
վանում,
Անհատիկը իր մէջ արագ շարժումներ է միշտ անում·
Փոքր ու մեծը, լաւն ու ցեցը մի նամբայ են միշտ գնում,
— Եղած, չեղածը մի Հոգի՛, միայն կորո՛վ ու Եռանդ··
Նիւթը իր մէջ Եռանդ ունի, որ հոգի՛ է իսկապէս,
Նիւթը իր մէջ աւա՛նդ ունի, նման մտքին մեր անտես,
Անթիւ դասեր եւ բիւր մասեր ահա՛ կազմել են հանդէս,
Որ մէ՛կ է միշտ, մէկ օրէնքի միայն հլու, հնազանդ···
Առանց ոյժի եւ կորովի կեանքում չ'կայ ոչ մի հիւլէ,
ոչ մի կէտ·
Իրերի մէջ միշտ կայ կորով, որ գործում է արթուն դէտ,
Եւ քաշում են նոքա իրար, եւ կցւում են իրար հետ,
— կեանքը մէկ է, մէ՛կ է ներքին նորա հոգին
ու աւանդ···

Դու չես տեսնում, ա՛յ տնաբանդ, ի՞նչ է մարդը իր
հոգով,
— Յաւերժութեան մասը միայն, նիւթի ծէսը եւ կորով,
Որ նրբատես ծնել է մեզ, մեր միտքը ծով, միշտ խռով,
— Նիւթը մի ծէս, Հոգին անտես, կեանքը կորո՛վ
ու Եռանդ...
Տիեզերքը ողջ կեանք է բողբոջ — շէնք ու շնորհք
յաւիտեան,
Անվերջ կորով, կարծես մի ծով — անմահ հոգի
բնութեան.
Եղած, չեղածը մի Եռանդ եւ մի՛ կարգի բազմութեան,
— Կեանքը մէկ է տիեզերքի մէջ, մի՛ օրէնքի հնազանդ..

1928.

31. Բոլոր գետերը հոսում են դէպի ծով,
Ջուրը անչափ, իսկ նա անափ՝ չի լեցուում.
Բոլոր դատերը անում են սրտին հով,
— Իսկ նա ծարա՛ւ, խոր կարօտից չի բացուում...
Հողմը անվերջ ամպ է քշում երկնքից.
Իսկ ամպը կայ, ծովին վկայ չի պակսում.
Մահը անվերջ կեանք է տաշում մեր բնից,
Բայց գարունը սրտումը կայ, չի՛ պակսում...
Բոլոր վէտերը էս կեանքի դէպի ինձ,
Բոլոր գետերը տիեզերքի դէպի ինձ.
— Եղած, չեղած հոսում է սրտիս մէջ,
Իսկ նա, անկուշտ, հարց է տալիս էլի ինձ...
Անցքերը բիւր ապրում է լուռ իմ հոգին,
Երկինքը խուր, արեւը հուր՝ իմ հոգին.
Ցուրտ ու ձմեռ, գարուն ու սէր նորա մէջ,
— Բայց էլի ճիշտ ծարա՛ւ է միշտ իմ հոգին...

1923.

32·

Ես միշտ կ'ուզեմ ազատ լինեմ եւ ալդպէս
Սրտիս անմահ դատաստանի առաջին,
Որ դատաւորը՝ ամբիոնից անաչառ
Խօսքեր չ'ասի ինձ դառնալի՛ց ու մթին...
Բայց կիրքը իմ, — մի ոխերիմ ելեւէջ,
Գազանի պէս ներս է խուժում սրտիս մէջ·
Թշնամու պէս սուր է շարժում իմ վերայ,
— Ալա՛ն, թալա՛ն, աղմուկ անում սրտիս մէջ...
Ամէն անգամ ինձ տանում են ճնշուքեան,
Դէմս դնում մեղքեր ու ցաւ զանազան,
Եւ ամէն ժամ ինձ կանչում են հարցումի,
— Սրտումս միշտ դա՛տ են անում, դատաստա՛ն...
Ասա՛, բարի, առաքինի լողմանի,
Ինչպէ՞ս անե՛մ, որ գազանը վայրենի...
Սրտիս խորի՛ն կարգ ու սարքին չ'հասնի...
— Որ էլ բնաւ ինձ չ'քաշեն դատաստա՛ն...

1928·

33· Ո՞վ է քաշում ինձ ամէն օր աջ ու ձախ,
Ո՞վ է շարժում ինձ անսովոր ու յանախ,
Ո՞վ է դրժում գործը ընտիր, մեր փորձը ժիր, անխտիր,
— Ո՞վ է սղոցը միշտ քաշում եւ զուր տաշում իմ
դագաղ···
Անապատում քարուանը մեծ՝ աւազի մէջ անբնակ,
Սլանում է միշտ աջ ու ձախ, անկարեկից ու մենակ·
Նորան քշում ու քաշում են հողմերը չար, համարձակ,
Զորս կողմը ցա՛ն, թոզ ու դուման, նանապարհը
սեւ ու մութ,
— Եւ քշում է հողմը դաժան քարուանը մի՛շտ
հերարձակ···
Զէ՞ որ ես էլ քարուանի պէս անց եմ կենում անապատ·
Սրտիս Քամին դուրս է գալիս, քշում, քաշո՛ւմ է
միրատ···
Սամումը չար իմ մէջ յամառ փչում, ճչում է ազատ,
Առջեւս մո՛ւթ, թոզ ու դուման, կրքերս սո՛ւտ
եւ դաժա՛ն,
— Ինձ քշում է անապատով Հողմը անգո՛ւթ ու միրատ··

Սիրտս ժխոր, Սամումը խոր, իսկ իմ միտքը քաջարի
փորձ է անում, որ նշմարի նանապարհը մեր բարի·
Ձիրքն ու ձգտում, կիրքն ու երդում, եռանդ ու սէր
միշտ արի —
Իրար յետեւ քարուանի պէս՝ առաջնորդը իմ հոգին,
— Մեզ քշում է Սամումը սեւ անապատո՛վ աշխարհի··
Եթէ ասեն· ո՞վ է հիմնել էս կարգ ու սարքը վերին,
Կ'ասեմ· դաժան ու անբաժան տիեզերքը·
Եթէ ասեն· Ո՞վ է բերել աշխարհի բերքը խորին,
— Կ'ասեմ· հզօր, ամենազօր տիեզերքը···
Եթէ ասեն· Ո՞վ է ծնել էս քարուանի երթը հին,
— Կ'ասեմ· միայն ու անսասա՛ն տիեզերքը···

1928·

34. Արտիս վերին բերբն ես դու, արտիս խորին ե՞րգն ես դու
— Միայն քո մէջ երկունքը իմ, դու ապրում ես
վէրքը իմ.
Սիրտդ անյագ, մէջը կրակ, որ այրում էր խորքը իմ,
Ինչ որ իմ մէջ, կայ եւ քո մէջ, գործդ հզօր ու ազդո՞ւ,
— Դո՛ւ, որդեակ իմ, էս աշխարհում շարժում ես խո՞ր
զո՞րքը իմ...

Արեւների եւ աստղերի յաւերժական մասն եմ ես,
Անդրաշխարհի եւ Արդարի անջնջելի դասն եմ ես,
Էս տանարի ու հանարի դեռ չ'լսուած սազն եմ ես,
— Ես քեզանից, դու ինձանից, ճանապարհը մեր հեռու,
Ես մի աղբիւր՝ դու մէջը ջուր, — անմահների դա՞սն
եմ ես...

Երբ հողածին էս բունը իմ ընկնի մի օր ու վերանայ,
Եւ սիրտը իմ՝ թեւաւորուած՝ աստղերի հետ միանայ,
Գործս՝ աւիւն, փորձս՝ անհուն — զո՞ւր, անպտուղ
չի՛ մնայ,
Նա քո արտում միշտ անտրտում արեւի պէս կ'շողայ...
— Անդրաշխարհի եւ Արդարի դեռ չ'լսուած սազն եմ ես.

Աստղերի պէս միշտ վե՛ր ու վէս ես քո մէջն եմ,
դու իմ մէջ
Իմ հոգեւոր յուզմունքն է խոր, որ այրում է քեզ
անվերջ...
Միտքդ հզո՛ր ու ամէն օր սաւառնում է երկնաէջ,
Սրտիս վերին ակունքների միակ լոյսն ես անխնայ,
— Մեր սիրտը հէգ, մեր ջանքը մէկ, — ես քո մէջն եմ,
դու իմ մէջ...

Աշխարհը ողջ՝ կեանքը բողբոջ՝ մտքիդ մի խոր
առարկայ,
Սիրտդ մի ծով, ինքդ կորով՝ տիեզերքը քեզ մի վկայ,
Ժամանակի գնացքի մէջ քո մտքերին վե՛րջ չ'կայ...
— Աշխարհը միշտ քո սրտի մէջ, բերքդ համայն
ու հսկայ,
Մենք անբաժան միշտ իրարից, ես քո մէջն եմ,
դու իմ մէջ...

1928·

35. Ժամանակի ու գոյութեան կապն եմ ես,
Աշխարհների միակ հզոր չափն եմ ես.
Կեանքն ու մահը պայքարում են միշտ իմ մէջ,
— Անդրաշխարհի միշտ երազուն ափն եմ ես...

Աստղ ու արեւ հոլովում է միտքը իմ,
Ցարդագողին բարեւում է ձիրքը իմ.
— Իսկ իրերի երթը միայն սրտիս մէջ,
Գարուններին արեւում է դիրքը իմ...

Ես եմ միայն նիշտ օրէնքը տիեզերքին,
Աստուածներ է միշտ յօրինում իմ հոգին.
— Սուտ է, չ'կայ մահ ու վախճան կեանքի մէջ,
Աստղե՞րը իսկ նախանձում են իմ շէնքին...

Ես չ'լինեմ, էլ չեն լինի չա՞ր ու խաւար եւ արեւ,
Էլ չի գործի ժամանակը աշխարհի մէջ յարատեւ.
Էլ չեն լինի տարածութեան շարժումներ,
— Իմ մէջ են միշտ տիեզերական տեւն ու ձեւ...

Ժամանակի անքակտելի կապն եմ ես,
Աշխարհների կախարդական չափն եմ ես.
Կեանքն ու մահը պայքարում են լոկ իմ մէջ.
— Տիեզերական կարգը ես եմ ու հանդէս...

1928.

36. Կեանքս, կարծես, արագահո՛ս մի վտակ,
— Խոխոջացին ջրերը զուրը ու անցան.
Տիղմը պատել է վտակի խոր յատակ,
— Զուրը անդո՛ւր, ջուրը փրփո՛ւր ու դաժան...

Նա չի տեսնում ակունքը իւր բնաւին,
Նա չի գնում նպատակի՛, մուրազի՛.
Տիղմի վերայ հոսում է միշտ դառնագին,
Որ անորոշ իր ասելի՛քը ասի...

Օրերը իմ արագավազ մի առու.
Ջրերի՛ պէս խոխոջացին ու անցա՛ն...
Տիղմով պատած նանապարհը իմ հեռո՛ւ,
— Սէ՛ր ու կարօ՛տ, լոյս ու գարո՛ւնը անցան...

1928.

37· Էլ չ'գիտեմ, ի՞նչպէս եղաւ, ի՞նչ եղաւ,
Այսօր իմ մէջ սեւ փոթորի՛կ բարձրացաւ·
Որոտացին ամպերը խի՛տ սրտիս մէջ·
Խոր թնդացին կիրքն ու կրա՛կը անբաւ···
Սրտիս խորի անդունդներից՝ գազաններ
Դուրս վազեցին եւ պատեցին իմ հոգին·
Թշնամական սեւ զօրքերի բանակնե՛ր
Շուրջը բերդիս խաւար ու խիտ բռնեցին···
Սիրտս՝ կարծես մի պաշարուած բերդ լինի,
— Թշնամին է գրոհ տալիս վայրենի՛·
Վերեւը ամպ, կայծակ ու շանթ եւ որոտ,
— Կռիւ ու կիրք իմ բերդի մէջ անուանի՛···
Էլ չ'գիտեմ, ինչպէ՞ս եղաւ, ի՞նչ եղաւ,
Սրտիս անմիտ փոթորիկը վերացա՛ւ·
—Թշնամական զօրքերը սեւ էլ չ'կան·
Սի՛րտս էլի կեանքի տաճա՛րը դարձաւ···
Վերը նորից անմահ արեւը փայլեց,
Իմ մէջ է՛լի անհուն գարունը ծաղկեց·
Հազար երգով, խո՛ր բերկրանքով ու սազով
Կեանքը էլի ինձ կարօտով բարեւեց···
Ո՞վ է արել կռուի մի բուն՝ սիրտս խոր·
Սեւ փոթորիկ, սէր ու գարուն լուսաւոր
Ո՛ւն են դնում իմ սրտի մէջ հարթ ու մեծ·
— Ո՞վ է տեսել էսպիսի կարգ անսովոր···
1928·

38. Ինչո՞ւ էսպէս ծանր եմ զգում ես ինձի,
Զէ՞ որ իմ մէջ հանքը չ'կայ պղնձի,
Ես մի հոգի՝ լոյսերի պէս թափանցող,
— Ո՞վ է իմ մէջ թաղել պահեստը գանձի...
Ծովերի պէս խորն է սէրը իմ սրտում,
Ինձ աշխարհի գաղափարն է միշտ դրդում.
Միտքը գարուն է յօրինում իմ բերդում,
— Ինչո՞ւ էսպէս մանր եմ զգում ես ինձի...
Կեանքում թաղած բոլոր հանքերը իմ մէջ,
Տիեզերական հզօր ջանքերը իմ մէջ,
Ինձ այրում է կեանքի կրա՛կը անվերջ...
— Ասէ՛ք, ինչո՞ւ ծա՛նր եմ զգում ես ինձի...

1923.

39. Բիւր բերբերով պարարտ հողը միշտ յղի՝
Բողբոջում են պտուղնե՛րը իմ Բաղի...
— Ոչ ոք չ'ասաց. ի՞նչ է բանում արտիս մէջ.
Բերբը ես եմ երազներով լի՛ հողի...

Հունձը կ'գայ, բերբը շուտով կ'հասնի.
Աչքը հազար ծառ ու ծաղի՛կ կ'տեսնի.
Իմ պարտիզում անմահ գարուն կ'բուսնի, —
— Միշտ պտղաբեր ես այգի՛ն եմ էս թաղի...

Աշխարհը լի՛, արգասաւոր մի այգի.
Տիեզերքի մէջ կեանքն է հոսում մի կարգի...
Եղած, չեղածը արդիւնք է մի՛ ջանքի,
— Բերբը ես եմ յաւերժական էս Բաղի...

1923.

40. Տիեզերքի մէջ ես ընկերներ շա՜տ ունեմ.
Կրակի մէջ ես իմ սրտի՝ անհո՜ւն եմ...
Երկրի մէջ արեւի պէս միտքս ժի՜ր,
— Ես մի հանդէ՜ս, աստղերի պէս, կանգո՜ւն եմ...

Ամէն մի մարդ մի հասարակ տուն ունի.
Մայր հողի մէջ ամէն էակ բուն ունի.
— Բայց իմ տունը ոչ այստե՜ղ է, ոչ այնտե՜ղ.
Ես ապրում եմ տանարի մէջ անհունի...

Չեմ հաւատում մահ ու կեանքի օրէնքին.
Ինձ չե՛ն դիւթում զօրք ու զէնքը ձեր մթին...
— Օրէ՜նք չ'կայ, սահմա՜ն չ'կայ իմ սրտին...
Ես ապրում եմ տանարի մէջ Անհունի...

1928.

41· Զո՛ւր էք լալիս անցեալի փառքը հզօր,
Զո՛ւր ափսոսում գարունը ձեր լուսաւոր,
Զո՛ւր սպասում գալիքը իսկ անսովոր,
— կեանքը մէ՛կ է, աշխարհը մէկ, գո՛րծը մէկ:
Եղածը կայ, ու կ'մնայ նա անվերջ···
Մէկ է գործը յաւերժութեան ծովի մէջ,
Եւ ոչ մի մազ աւել, պակաս նորա մէջ,
— կեանքը մէ՛կ է, աշխարհը մէկ, գործը մէկ···
Ժամանակի արարքը սուտ, երեւոյթ,
Անցեալը սուտ, գալիքը սուտ ու անփոյթ·
Էս աշխարհը ունի միայն մի՛ բնոյթ·
— կեանքը մէ՛կ է, աշխարհը մէկ, գործը մէկ···

1928·

42· Ո՞վ է հիմնել սրտումս խոր եւ անսովոր գործանոց·
Օր ու գիշեր կազմ է անում, կարծես մի հին կազմանոց··
Վարպետը ժիր՝ բանուորի հետ նստած ահա դազգահին՝
Գործ է անում, փորձ է ծնում իրրեւ հմուտ մի դպրոց··
Հոգիս էսօր դարբնո՛ց է խոր· մէջը ահա մի դարբին,
Որ զօդում է երկաթը իւր, — փա՛ռքը նորա զնդանին··
Փուքս են փչում, հարա՛յ կանչում, բոցն ու կրակ
ահագին,
Ո՞վ է վառել, սիրտս արել այսպէս կրա՛կ ու հնոց···
Հոգիս դպրոց չէն ու շիտակ, մէջը խրատ եւ ուսում·
Մեսրոպ-Մաշթոց եւ տուրբ Սահակ երբէ՛ք նորան
չեն պակսում·
Հազար տեսակ մարդ ու էակ ինձ են գալիս եւ լսում,
— Ո՞վ է շինել սրտումս խոր եւ հոգեւո՛ր էս դպրոց···

1928·

43· Սրտումս կայ խոր ու խոհուն եւ երազուն մի գաղտնիք·
— Ուր որ գնամ, ուր էլ լինիմ, քեզ կ'յիշեմ, հայրենիք··
Բեռները քո ծանր ու ցրիւ, լեռները քո երկնահաս,
— Ես կ'յիշեմ ջրվէժը չար, գետը վարար ու գողտրիկ··

Խնոյքդ խուր, հանոյքդ հուր, բերք ու բարիքը
անհաս·
Լինը պայծառ, երգը հունար, երկինքը խոր ու ալմաս –
Կախարդում են, կարծես վերին եդեմական սուրբ
զատիկ,
— Դարուններեր կրծքիդ վերայ բողբոջո՛ւմ են
անպակաս···

Ամէն անգամ թերթում եմ ես սրտիս գիրքը փառունակ,
Ամէն անգամ կարդում եմ ես Նարեկացի ու Բուշակ···
Իմ մէջ անվերջ խօսում են խոր Մեսրոպ–Մաշտոց
եւ Սահակ,
— Աղօթքի տեղ իմ հայրենի երգն է հնչում անպակա՛ս··

Սրտումս կայ անմեղ վկայ՝ արի՛ եւ քաջ իմ ազգի,
Ես չե՛մ մոռնայ գովքը բնաւ մեր երգերի ու խօսքի···
— Ուր էլ գնամ, քեզ կ'յիշեմ, լեռների Քա՛ջ,
ո՛վ Մասիս,
— Դո՛ւ, աշխարհ իմ խորհրդաւոր, խոր կարօտն ես
իմ կեանքի՛···

1928·

44· Ասի՝ մտնեմ մի հանքահոր, տեսնեմ ի՞նչ կայ մէջը լաւ·
— Հանք են փորում եւ փորածը դուրս են տանում
սրարշաւ:
Սիրտս հզօր մի հանքահոր, մէջը ընտիր հանքը անբա՜ւ,
— Ափսո՜ս, հանքս դուրս հանելու ձեռքիս չ'կա՜յ
մի միջոց···
Հանքահորի տէրը ունի հազար ու մի մեքենայ·
Ձիրքը արի՛ ստեղծողի, շէնքը նորա շէ՛ն կենայ·
Հանքը ընտիր դուրս են տանում դէպի կեանքը անխնայ··
Եարաբ, հանքս դուրս հանելու ինչո՞ւ չունեմ մի միջոց··

Ասի՛ մտնեմ հեռագրատուն, տեսնեմ, ի՞նչ կայ
նորա մէջ·
— Ժի՛ր մեքենայ գործ է անում օր ու գիշեր նորա մէջ··
Եւ անդադար լուր է գալիս կեանքի բոլոր խաւերից,
Նա անդադար դուրս է տալիս իրա բերքը կեանքի մէջ··
Սիրտս, ասես, հեռագրատուն, թելերը իսկ եթերից,
Նա անդադար միտք է ծնում կեանքի բոլոր ծալերից,
— Ափսո՜ս միտքս դուրս հանելու ձեռքիս չ'կայ
մի միջոց·
Ինչո՞ւ այսպէս այրւում եմ ես խօսքի հզո՜ր կարօտից··

1928·

45. Անյայտ երկրէն մի դո՛ւշ եկաւ,
— Սինամ–Դուշը նրբաթեւ.
Իսկը, կարծես, նմուշ եկաւ,
— կեանքի յուշը յարատեւ...

Կեանքի իմաստը ինձ հասաւ,
— Խորին փաստը իրերի.
Երթերի մէջ սիրտս տեսաւ
Երազը վա՛ռ աշխարհի...

Ահա՛ ուղին իմ դառնագին
Տանո՛ւմ է միշտ դէպի նա.
— Ե՛րգը, ե՛րգը իմ երկնային
Կեանքի դուռը կ'բանայ...

1928.

46·

Էս ի՞նչ անմիտ գործ են արել մեզ համար·
Սիրտը լեցուած հազար ու մի խորհրդով,
Սիրտը, ասես, աստուած է ժի՛ր, անվրդո՛վ,
— Իսկ խօսքը մեր թոյլ ու թերի՛ եւ անճար:
Տե՛ս, սրտումս վարկեանապէս ողջ աշխարհը ես կ'ապրեմ,
Տե՛ս, սրտումս երբերի՛ պէս աստղ ու արեւ կ'ցրեմ...
Յաւերժութեան իմաստը ես կ'զտե՛մ·
Նեղած, չեղածը իմ սրտում կ'դատե՛մ...
Արեւների ծնունդը մե՛ծ, անվախճա՛ն,
Գարունների՛ խորհուրդը խո՛ր, աննման,
Կեանք ու կռիւ, չարիք, բարիքը վսե՛մ
Սրտումս միշտ ապրում եմ ես անբաժա՛ն...
— Իսկ իմ խօսքը թոյլ ու թերի՛ եւ գերի՛·
Նա ոչ մի բան լի ու լրիւ չի՛ ասում·
Տես՝, իմ սրտի բիւր բերբերից էս արի՛
Անգամ մէկը վառ ու պայծա՛ռ չի խօսում...

1928·

47· Բաւ է, քանի չարն ու չարիք խնդոյք արին իմ սրտում·
. Բաւ է, քանի ցաւն ու դաւը բերքեր բերին իմ արտում··
— Ես չեմ ուզում խնդոյք ու սէր
Էլ չեմ ուզում հանդոյքը ձեր···
Միայն մտքիս յետեւն ընկած՝ նոր շէնքեր եմ ես շինում,
— Իմ սերմերից եղեմական արտե՛ր եմ նոր ես ցանում··

Բա՛ւ է, քանի սիրտս մաշեց աշխարհի ցաւը սովոր,
— Բեզարել եմ էս բազարից, էս ազարից յանցաւոր···
Այգի դրի, ծառը ծաղկեց անթառա՛մ,
Բայց հարամին կտրեց տարաւ անզգամ·
Արտ ցանեցի՝ — կանաչը վա՛ռ, ոսկեշող·
Զար թշնամին արտս արե՛ց ոտնակոխ···
Բարձր տանար ես ձեզ համար հիմնեցի —
Արեւաշո՛ղ իրաւունքի՛ ու բարքի՛,
Մարդը եկաւ՝ կեղտը սրտում եւ քրծի,
— Սոդոմ Գոմոր արեց տանարը կեանքի՛···
Ահա՛, հզօր հանդէսի մէջ երկնաւոր
Անո՛ւրդ է միշտ կիրքը անում դարաչի·
Մեր երազած վանքերի մէջ հոգեւոր
Բուն են դրել ցաւն ու չո՛ռը եւ չարչի···
— Էլ ի՞նչ ասեմ ես ձեր հարցին ու փորձին,
Բեզարել եմ էս ժխորից, սեւ խաւարից ու չարից·
Էլ ի՞նչ ասեմ դժոխածին ձեր գործին,
Բեզարել եմ էս աշխարհի սե՛ւ բազարից, ազարից···

Ես չեմ ուզում խնձոյք ու սէր,
— Թող վերանայ կեանքի անո՛ւրդը անմիտ...
Ես չեմ ուզում հանոյքը ձեր,
— Թող վերանայ էս ժխո՛րը ձեր կոպի՛տ...
Թողէ՛ք, մտքիս յետեւն ընկած՝ իմ նո՛ր շէնքը
ես շինեմ.
— Իմ սերմերից եդեմական նո՛ր արտերս ես ցանեմ...

1929.

48· Սիրտս, կարծես աւեր մի տուն,
— Շէնքն ու շնորհքը վէրա՛ն···
Կեանքը, ասես, անվերջ մի քուն,
— Նա՛ է հիմքը գոյութեան···
Տունս մնաց անիւնի տակ,
Փայտն ու երկա՛թը տարան·
Ձիրք ու ձգտումը՝ աւերա՛կ,
— Դարուններս ո՞ւր կորան···
Մեր վիշտը միշտ քուն է բերում,
— Քունը՝ կեա՛նք է յաւիտեան···
Ո՞վ է անվերջ սիրտս փորում,
— Ո՞ւմն է էս խո՛ր գերեզման···

1923·

49· Ի՞նչ է անվերջ գլխիս վերեւ
Ագռաւը սեւ զի՛լ ճայնում...
— Ո՞վ է նետել ինձ յարատեւ
կեանքի անմի՛տ ոստայնում...
Շուրջս տխո՛ւր մի աւերակ,
Բայղուշը մէջ բո՛ւն ունի.
— Իսկ դո՞ւ ինչ ես, խեղճ ու կրակ,
կեանքդ եարաբ միտք ունի՞...
Բանի կ'ուզէ միտքը բանի՛
Եւ մեզ վերե՛ւ միշտ տանի,
կեանքը տխո՛ւր մի աւերակ,
— Բայղուշը մէջ բո՛ւն ունի...

1928·

50· Ծով է սիրտս մի աննման,
Ցուզմունքը խոր նորա մէջ·
Ձիւն ու կարկուտ, բուք ու բորան —
Թափւում են մի՛շտ նորա մէջ···
Նա անսասան բերդ է կարծես,
Թշնամու դէմը կանգնած·
Եւ տեղում է կարկուրտի պէս
Սրտիս վերայ յո՛րդ հարուած···
— Ո՞վ է դրել հիմքը բերդի,
Ո՞վ է տէրը յաղթական·
Ո՞վ է ուզում բերդը զաւթի, —
— Ես չ'իմացայ ո՛չ մի բան···

1928·

51· Ես չեմ կարող գնալ ճամբէն ձեր սիրած,
— Ձեր նպատակը միշտ օտա՛ր ինձ համար·
Ես չեմ կարող կարդալ գիրքը ձեր գրած,
Ձեր սիրտը չա՛ր, իսկ ձեր կեանքը մի բազա՛ր···
Ձեզ հետ միտեղ ես չեմ քաշի կեանքի լուծ·
— Դուք աշխարհից շա՛հ էք ուզում փոքրոգի·
Մեր գործերը բաժանուած են շա՛տ վաղուց,
Օտա՛ր է ձեզ կեանքը սիրոյ ու երգի՛···
Թէկուզ լինիմ ես իմ ճամբին միշտ միայն,
Թէկուզ բախտը երկրէ երկի՛ր ինձ նետի·
— Բայց հեռո՛ւ չէ· մի օր կ'գայ դատաստան·
Եւ վատն ու լաւ նա իրարից կ'զատի՛···

1928·

52. Աչքս ճամբին՝ իմ օրն եմ ես սպասում.
— Ո՞ւմն է տալիք սիրտս տխուր էս փոսում.
Ոչ ոք չ'ասի, թէ գո՛րծ է նա տնազի.
Սրտումս միշտ ռադիո-ալի՛ք է խօսում...
Էսօր եկաւ ինձ հարցումի մի վարպետ.
— Կ'ուզե՞ս, կապեմ քեզ աշխարհի, կեանքի հետ...
Տանդ լինի Ռադիո-գործիք ու խօսի,
Եւ դու լսես եղած-չեղա՛ծը յաւէտ...
Ասի. ունիմ Ռադիո-ալիք ես իմ մէջ,
Ասի, սիրտս Ռադիո-գործիք է անվերջ...
Եղած, չ'եղածը եթերի, անհասի՛
Բերում, ցրում է անխնայ նա իմ մէջ...
Աչքս ճամբին՝ իմ օրն եմ ես սպասում.
Ռադիո-ալիքը իմ գալիքն է խօսում.
— Կեանքս մի գործ՝ խորհրդալի անհասի,
Ո՞ւմն է տալիք սիրտս տխուր էս դասում...

1928.

53· Ո՞ւր են ցանել լաւն ու վատը էս արտի մէջ միասին,
Զուր են հանել սուտն ու դատը էս բերդի մէջ միասին·
— Ի՞նչ միտք ունի՝ վարդն ու փուշը էս բաղի մէջ
իրար հետ,
Սեւ բայղուշը բլբուլի հետ չի էլ սազում միասին···

Ո՞վ է կազմել ծրագիրը էս լայն ու լի՛ աշխարհի,
Ի՞նչ են բազմել իրար կողքի արարքը չար ու բարի·
Խորքն ու խեւը զուր են դասել գեղեցկի հետ միասին,
— Մի սխալ կայ էս գործումը արարչական հանճարի՛··

Սերմնացանը իւր արտի մէջ պէտք է լա՛ւը միշտ ցանի,
— Ո՞վ է կարգել, որ մահն անվերջ իրա դաւը միշտ անի,
Մեր սեւ բախտը սրտի համար տխուր ցաւը կ'մանի՛,
— Իսկ բայղուշը բլբուլի հետ չի էլ սազում միասին···

1928·

54. Ո՞ւր էք, հասէք, իմ ընկերներ,
— Սիրտս հիւանդ ու նաչար
Հէքիմներից դեղ ուզեցի,
Ասին՝ — չ'կայ դեղ ու նար.
Օր ու գիշեր հողմի նման
Ման եմ գալիս անգիւման.
Հարց եմ տալիս սարի՛ն, քարի՛ն,
— Չ'կայ սրտիս մի դարման...
Յոյսերը իմ անց ու կորած,
Լոյսերը իմ միշտ մարած.
Ես շրջում եմ հողմի նման,
— Չ'կայ արեւ ու աստուած...

1904.

55. Ես կանգնած եմ այստեղ՝ մտատանջ ու մենակ.
— Շուրջս լուռ եւ տխո՛ւր է աշխարհ,
Իսկ հեռուն՝ մէգի մէջ՝ սարի տակ
Հովիւները վառել են կրակ...
Եւ առուակը տխուր սաղմոսներ երգելով՝
Զուր լալիս՝ ինչ որ հարց է տալիս.
Դաշտ արօտը անբո՛յր, հեռաստանը խռով,
— Հողմը ի՞նչ է կորցրել , ի՞նչ է նա մաղ գալիս...
Մէկ սեւ ամպ՝ասես նիշտ մի նաւակ ծովի մէջ —
Զուր սահում, հետեւում է լուսնին.
Լուռ աստղերը անվերջ՝ կարօտով երկնաէջ —
Սպասում են, կարծես, իրենց սո՛ւրբ մուրազին...
Ես կանգնած եմ ահա՛, մտատանջ ու մենակ,
Շուրջս լուռ եւ տխո՛ւր է աշխարհ.
Իսկ հեռուն, մէգի մէջ կայ մի լո՛յս, մի կրակ.
— Եարաբ շո՞ւտ կ'ծագի առաւօտ, արեգակ...

1908.

Շուրջս լի հնութեան ալեւոր բեկորներ.
— Անցեալի ստուերներ, ի՞նչ էք զուր ման գալիս.
Ինչ որ կար, էլ չ'կայ... անցեալի՛ հատորներ,
Ի՞նչ էք լուռ ձեր վինակը անմիտ ցոյց տալիս...

Այստեղ կեա՛նք կար մի օր եւ աղմո՛ւկ ընդհանուր.
Իրաւո՛ւնք, հզօր կամքն իշխողի, կամ կուռքեր.
Եւ զուլում, եւ զալում, աշխատանք ու բարքեր.
— Ասացէ՛ք, ո՞ւր են, ո՞ւր...

Մի գուցէ այստեղ իսկ լուսնկայ մի գիշեր
Սիրահարն էր գալիս սուրբ սիրոյ տեսութեան.
Կամ գուցէ հէնց այստեղ սուրբ տաճար է եղել,
— Աղօթքի՛, կամ մտքի, արուեստի նեմարա՛ն...

Ինչ որ կար կենդանի,
Ինչ որ կար անուանի —
— Կործանուած է ահա՛ եւ թաղուած հողի տակ...
Հետք անգամ էլ չ'կայ,
— Կամ արքուն մի վկայ,
Որ պատմի մի առ մի անցեալի մեր վինակ...

Միայն միտքն է տխուր
Սաւառնում եւ հասնում անցեալի օրերին.
Միայն միտքն է իզուր հարց անում դառնագին.
— Ո՞ւր էք, ո՞ւր...

1907.

57· Օր ու գիշեր աչքս ճամբին կ'սպասեմ·
Ե՞րբ կ'հասնի ժամը վերջին տխրադէմ···
Ես մի անցորդ՝ վերջին ճաւին կ'սպասեմ·
— Աշխարհը ճոխ, մեզի ոչինչ չի մնայ···

Արտերի մէջ բոյս ու ծաղիկ կ'բսնի,
Սրտերի մէջ բերբ ու բարիք կ'հասնի·
— Ով կայ էսօր, վաղը անցո՛ր կ'մեկնի·
Աշխարհը ճոխ, մեզի ոչինչ չի մնայ···

Փորձդ արի՛, գործդ բարի՝ աշխատի՛ր,
Օրդ վերջին հասնելու է անխտիր·
Սրտիդ կասկածը բնաւին փարատի՛ր·
— Աշխարհը ճոխ, մեզի ոչինչ չի՛ մնայ···

1920·

58· Արտը յղի բերբերով,
— Սիրտը լեղի՝ վերբերով·
Ե՞րբ պիտի գայ մեզ համար
Միտքը իր բի՛ւր զօրբերով···
Ով աչք ունի կ'տեսնի,
Սիրտ ունեցողը կ'զգայ·
— Բերքը մի օր կ'հասնի,
Ճամբէն բացո՛ղը կ'գայ···
Բանի՛ վերին երգը հուր
Մեր սրտերին չ'հասնի,
Մեր արտումը սեւաթ-ոյր՝
Փուշը անվերջ կ'բուսնի···
Բանի՛ անօգ եւ օտար
Բլբուլն ու վարդը լինին·
Մեր տանը լի՛ մի խաւար,
— Բայղո՛ւշը մէջ անմեկին···

1928·

Ե·

ՌԵՐԴՄԵՆԵՑԵՆ

Մ. ԳՈՐԿԻ.

ՄՐՐԿԱՀԱԻԸ.

(ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ)

Սեւ ծովի ալեզարդ հարթութեան երեսին
Հողմն ամպեր է կիտում.
Ամպերի՝ ծովի մէջ՝ — նման սեւ կայծակին՝
Սլանում է հպարտ մրրկահաւը օդում:
Նա հարում է թեւով ջրերին
Եւ սահում դէպի վեր շեշտակի՛.
Նա նչում է, կանչում ու երգում.
— Իսկ ազատ երգի մէջ թռչնակի
Սեւ ամպերը բերկրանք են լսում.
— Դա՝ — ծարաւն է հզօր փոթորկի,
Նորա բոցն ու կրակ,
Որ կանչո՛ւմ է, նչում դեւի պէս...
Եւ լսում են ամպերը ազատ երգի մէջ՝ —
Գալարումն ահաւոր տենչանքի
Ու խորին կրքի բոց եւ կրակ, —
Համոզմունք յաղթութեան ու զայրոյթ երկնքի...
Փոթորկին դէմառդէմ ուրուրները իրար են անցնում
Ու անվերջ հառաչում.

Եւ պատրաստ են նոքա ցած նետուել՝ դէպ անդունդը
ծովի,
Որ պահեն կամ թաղեն իրենց ահը վայրի
Ծովի խոր յատակում...
Բադերն իսկ վայրենի
Զարգանդով խիստ պատած.
Հառաչո՛ւմ են, լալի՛ս
Ու պտոյտ են գալիս...
Օ՛ նոքա, էն բադե՛րը երկչոտ, մոլորուա՛ծ
Չեն կարող փոթորիկը տեսնել,
Չեն կարող անսասան կռուի սէրը զգալ.
Նոցա սիրտն է քամուում՝ սարսափած,
Երբ որոտն է պայթում յաղթարար...
— Ահա սագը վայրի եւ յիմար,
Որ մարմինը իւր գէր ժայռի մէջ է պահում...
Եւ միայն մրրկահաւը հպա՛րտ, քաջարի՛
Սլանում է, տուլում անվեհեր.
Նա ճչում է, կանչում
Փրփրահար ջրերի երեսին.
Սաւառնում է, երգում՝ նման սե՛ւ կայծակին...

Իսկ ամպերն է՛լ աւել մթագոյն՝
Է՛լ աւել դէպի ծովն են իջնում...
Փոթորկին դէմառդէմ ալիքներ դէպի վեր
Մերթ պարում ու լեռներ են շարում,

Մերթ յուզում են, երգում անսովոր...
Դղրդում է որոտ: Զայրոյթից փրփրահար անսովո՛ր՝
Ալիքներն են լալիս,
Բիւր ձայներ են տալիս,
Հողմի հետ են վիճում,
Աղմկո՛ւմ ու ճչո՛ւմ...
Ահա հողմը գրկում է խուրձերը ալեաց,
Եւ նոցա կատաղի՛ ժայռերին է նետում,
Դէպի վեր է հանում,
Փշուր — փոշի է տալիս...
Ու պտո՛յտ են գալիս
Զմրուխտէ ջրերի
Վառ կոյտերն ահագին, լեռնացած...

Մրրկահաւը միայն, նման սեւ կայծակին,
Սաւառնում է ազա՛տ, աներկիւղ ճչալով.
Խիտ ամպերը խաւար նա ճեղքում է ազա՛տ, նետի պէս,
Նա զարնում է թեւով ցած՝ ալեաց,
Դէպի վե՛ր է ճախրում ահարկո՛ւ դեւի պէս...
— Ահա նա. կարծես ճիշտ ու անվիշտ մի սեւ դե՛ւ՝
— Ցաղթարար մի ոգի,
Եւ նման կայծակի՛...
Նա սուրում է չորս կողմ,
Նա ճախրում է վերեւ,
Եւ անցնում աջ ու ձախ, դէպի ծո՛վ, դէպի հո՛ղմ...

— Նա՛ է՝ խո՛ր եւ հզո՛ր դեւը զոռ փոքրիկի, —
Դեւ յանդո՛ւգն ու անվա՛խ·
Ճիշտ, ասես, յաղթական մի ոգի՛,
Նա ճչում, եւ կանչում է կռուի···
Ցաղթական կռուի դեւն է ուժգի՛ն,
Հեկեկում է, ճչում, ծիծաղում,
Եւ ծաղրանքը նետում ամպերին·
Ու նորի՛ց հառաչում,
Հրճուանքի՛ց հեկեկում···
Նա՝ Հանճարը կռուի՝ —
Ցոգնուքի՛ւն է վաղուց նկատել
Զայրոյքի՝ հերսի մէջ որոտի···
Նա գիտէ, լաւ գիտէ, համոզուած է հոգով, —
— Չեն կարող սեւ ամպերը ծածկել
Ժպիտներն ու լոյսերն արեւի՛·
— Օ, երբէ՛ք չեն կարող···

Մռնչում են հողմեր, ու պայթում է որոտ·
Եւ կապոյտ բոցերով՝
Բարկ ծովի երեսին բռնկւում են ամպեր·
Կատաղի ալիքներ՝ փրփրահար, բացբերա՛ն,
Շէկ շանթեր են որսում,
Կայծակնե՛ր են բռնում, ջրի մէջ հանգցնում···
Կայծակի բիւր թելե՛ր,
Վառվռուն օձի պէս

Գալարում են ծովի երեսին,
Ու կրկին չքանում երկնքում...
— Փոքրրի՛կ... թող շուտո՛վ փոքրրիկը պայթի:
Եւ հպարտ մրրկահաւն է միայն,
Որ արա՛գ, դեւի պէս յաղթական,
Կայծակներ նետելով սաւառնում է վերեւ.
— Ցաղթութեան մարգարէն է այդպէս քաջարի
Միշտ նչո՛ւմ ու կանչո՛ւմ յարատեւ.
— Է՛լ աւել թող ուժգի՛ն բռնկուի փոքրրի՛կ...

1905.

ԼԵՐՄՈՆՏՈՎ

Ա.

ԱՂՕԹՔ.

Կեանքի դժար բոպէին՝
Սրտումս վիշտ ու պատիր.
Մի սուրբ աղօթք ջերմագին
— Մերթ ասում եմ ես անգիր...
Կայ աննման զօրութիւն
Էն կենդանի խօսքերում.
Ու նոցա մէջ մի անհուն
Գեղեցկութիւն է հնչում...
Կասկածն ու բեռը սրտիս
Հեռանում են, վերանում.
Հաւատում եմ եւ լալիս,
— Թեթե՛ւ, թեթե՛ւ միշտ զգում...

1904.

Բ.

ԱՌԱԳԱՍՏԸ.

Ծովի կապուտակ մշուշի միջից
Մի առագաստ է հեռաւոր փայլում.
Ի՞նչ է որոնում այնտեղ նա հեռուից,
Ի՞նչ է նա թողել հայրենի՛ երկրում...

Ալիքն է խաղում, հողմերը սուլում,
Կայմը նորընչում՝ մի կողմը թեքուած.
Աւա՛ղ, նա բնաւ բախտ չի որոնում,
Ոչ էլ բախտից է խորշում դառնացած...

Նորա տակ ցայտեր՝ լաջուարթ ու փայլուն,
Վերեւն արեւի լոյսը անմահ.
Իսկ նա մոլեգնի՛ն մրրիկ է ուզում,
Հանգի՛ստը կարծես նորա մէջն է միայն...

1904.

Գ.

ՀՐԵՇՏԱԿ.

Հրեշտակ երկնքով կէս գիշերային
Սահում էր, երգում երգը աննման.
Լուսինը, աստղեր, ամպեր խմբովին
Լսում էին լու՛ռ երգը սրբութեան...
Բերկրանքն էր երգում նա հոգիների՝
Եդեմական սուրբ վրանների տակ.
Երգում Աստուծոյ փառքը մեծարի,
Եւ գովքը նորա անմե՛ղ էր, յստա՛կ...
Աշխարհի վշտի՛, արցունքի համար
Տանում էր՝ գրկած՝ մի մատաղ հոգի,
Որի սրտի մէջ էն երգը տխուր
Թողեց հետքը իւր՝ անմահ երկնքի՛...
Ու կեանքում երկա՛ր նա իզուր տանջուեց՝
Ծարաւ ու լեցուն մի սուրբ ցանկութեամբ.
Բայց նորա լսած երգին չ'փոխուեց
Երգը աշխարհի՝ իւր հին դառնութեամբ...

1904.

Դ.

ԱՄՊԵՐ.

Երկնային ամպեր՝ յաւերժ անցաւոր,
Դաշտերով լաջուարթ, շարքերով գոհար —
Սահում էք ինձ պէս դէպ՝ հեռու աքսոր,
Սիրուն հիւսիսից դէպ՝ հարաւ աշխարհ...

Ո՞վ է ձեզ քշում... կապանքը բախտի,
Նախա՞ճը գաղտնի, թէ՞ չարիք յայտնի...
Հալածում է ձեզ գո՞րծը յանցաւոր,
Թէ՞ ընկերների կեղծը թունաւոր...

Ոչ, յոգնած էք դուք դաշտերից անմիտ.
Կրքե՛ր դուք չունիք, չունիք եւ տանջա՛նք...
Դուք յաւերժ ազատ, ցրտաբեր ու խիտ —
— Ո՛չ վաթա՛ն ունիք, եւ ո՛չ հալածանք...

1904.

Ե·

Տխո՛ւր է, տաղտո՛ւկ· չ'կայ մէկը, որ ձեռքը սեղմեւ
Հոգեկան թախծալի՛ ժամերին·
Բաղձա՛նք··· ի՞նչ օգուտ այդքա՛ն զուր ցանկանաս
ու ձգտես,
Մինչ անցնում են օրերդ մէկմէ՛կ, դառնագին···
Սիրե՞լ· սակայն ո՞ւմ··· անցաւո՞ր, դա իրա՛ւ մի՛տք
չունի·
Իսկ սիրել մշտապէս չե՛նք կարող մենք բնաւ:
Մի լաւ մէջդ նայի՛ր· տե՛ս քո սիրտը դատա՛րկ,
ամայի՛·
Ու չ'կան նորա մէջ անցեալի ոչ մի հետք ու գրա՛ւ·
Ե՛ւ տանջանք, ե՛ւ բերկրանք աննշա՛ն են եւ բիրտ
Իսկ կրքերդ··· աւա՛ղ, նոցա խանդը մի օր
Մտքերիդ լոյսի տակ անցնելու է իսպառ···
Եւ քո կեանքը, թէ չորս կողմդ նայես սառնասիրտ,
— Իսկապէս որ անմի՛տ մի կատակ է յիմար···

1904·

ԳԷՕԹԷ.

Խոր նիրհում են լեռներ
Գիշերուայ մթի մէջ.
Ու խորհում են դաշտեր
Միգապատ ու անվերջ.
Հողմն ադմուկ չի՛ անում,
Ուղին թօզ չի հանում...
Տերեւները, որ խիստ
Անշարժ են եւ հլու...
— Կա՛ց մի քիչ, եւ հանգիստ
Կ'զտնես նաեւ դու...

1925.

ՕՄԱՐ-ԽԱՅԵԱՄ.

Ա.

Ինչո՞ւ, տէր իմ, զուր կոտրեցիր
Գինուս գաւը՝ իմ յուրան
Եւ առջեւս գոցեցիր
Դուռը կեանքի բերկրութեան...
— Ի՞նչ եղաւ ֆեզ, ո՛վ երկնային,
Որ թափեցիր անարդա՛ր
Վարդի՛ նման իմ գինին,
— Հարբա՞ծ էիր, թէ՞ խելաւ...

Բ.

Խորհուրդն աշխարհի՝ խո՛ր ու ոսկեշող,
Գրուած է վաղուց մատեանում սրտիս.
Բայց այն ձեզ ասել երբէ՛ֆ չեմ կարող,
— Գուցէ լինի՛ նա վախճանը կեանքիս...
Իսկ էստեղ չ'կայ մէկը իմաստուո՛ն՝
կե՛անքը հասկացող.
Ինչ որ կայ թաքուն իմ սրտում անքուն,
Ասել չե՛մ կարող...

Գ.

(Նմանողութիւն:)

Եթէ թօթափես քեզնից քո փոշին,
Կ'մնաս միայն իբրեւ մի հոգի՛...
Քո տեղը միայն երկինքը վերին.
— Ամո՞թ է, երբ դու, քա՛ջդ երկնքի,
Տո՛ւն ես քեզ շինում աշխարհումը սին...

Գ.

Մեր հոգին միայն մի ձա՛յն է խորին,
— Իսկ նորա կազմը դողդոջուն եղէգ.
Գինի՛ է հոգին, սրուակը՝ մարմին.
— Ի՞նչ բան է, ասէ՛ք, մարդը իրազէկ,
Եթէ ոչ լապտեր՝ մէջը մի նրագ —
Որ լոյս է տալիս, իբրեւ արեգակ...

Ե·

(Նմանողութիւն:)

Նա որ տիեզերքի պատկերը քաշեց,
Ինչո՞ւ է իզուր իւր գործը ջնջում·
— Ով արարչութեան կազմը հաստատեց,
Ի՞նչ է ամէն օր նորան կործանում···
Թէ լաւ է գործը՝ արդիւնքը բարի,
Ափսոս չէ՞ քանդել շէնքը երկնաւոր·
Թէ վա՛տ է փորձը՝ բերմունքը չարի՝
— Ո՞վ է այդ բանում իրօք մեղաւոր···

ԷԴԳԱՐ ՊՕ.

Ա.

ԶԱՆԳԱԿՆԵՐ ՈՒ ԶԱՆԳԵՐԸ.

Տե՛ս, ինչպէս են սահում սահնակներ, —
Ցատկոտում շարէշար.
Եւ հնչում են զուարթ զանգակներ.
— Մոռացում. ֆռ հեֆիաթը յամառ
Զիլ հնչում են, տեղչում զանգակներ...
Կարծես ջի՛նջ մի ժպիտ մանկութեան, —
Մրմնջում են հեֆիաթ անմման,
Որ անկման օրերին
Հետեւում է կեանքի առաւօ՛տ,
Որ վայելքն է վսե՛մ ու կարօ՛տ,
Երբ միայն նա երա՛զ է անգին...
Սահնակներն են սահում անտրտում.
Զանգակներն են հնչում համարձակ.
Ու աստղերն են լսում նոցա երգն ու նուագ...
Սահնակներն են վազում ու խօսում.
Իսկ աստղերը վերին երթերից
Ցնորում են, ասես նուրբ հոգի...

Ու լեցուած կաթսայ երկնքի,
Անհուն սէ՛ր են շողում քերկրալից...
Վառ աստղերը հեռո՛ւ, աննման,
Երազումը սուզուած դիւրաման, —
— Երգ ու սէր են ասում ու լսում.
— Մոռացո՛ւմ. քո հեքիաթն են խօսում...

1915.

Բ.

Տե՛ս զանգերն են հնչում միալար
Մահագոյժ ու անմիտ մի դողանջ.
Տխուր երգն է կանչում վշտահար.
— Այդ ո՞ւմ կեանքն է մարել չարատանջ...
Եւ զարգանդը պատում է հոգին.
Մարդ խորշում է ունայն հոգսերից,
Հեծեծում է անվերջ եւ յիշում տխրագին,
Որ մահիցը հողում կ'սպասի եւ իրեն դառնալից...
Եւ հնչում է անգութ ու խաւար
Մահուածայնը տխուր, հեռաւոր.
Սեւ դողանջը տանջո՛ղ ու յամառ
Հառաչանք է ծնում ահաւոր...
Ձայրացկո՛ւ, դառնալի՛, վշտաբեր՝
Հուլ աղմուկը չորս կողմ է հոսում,
Եւ կարծես՝ ամէն տեղ նա նոյն բանն է ասում. —
«Նահատակը փակեց յաւիտեան իւր աչքեր»...
Եւ մոմերը վառուած են արդէն սգաւոր.
Իսկ վերեւ՝ զանգատանը աղմուկ.
— Ո՞վ է նա բարձրաձա՛յն դողանջում անսովոր.
Ուրուական կայ այնտեղ մի անձուկ,
Որ անվերջ հրոհրում ու աղմուկ է հանում,
Ղողանջում է հպարտ եւ ոռնում.

Նա դառնում է ահա զանգերին,
Ու թակում է մեծ զանգը վերին·
Եւ հնչում են զանգերը տխուր,
Հեծեծում օդի մէջ մունջ ու լուռ...
— Գերեզման ու սե՛ւ մահ, ձեր մասին,
Ձեր կոչնակն է հնչում նա իզուր...

1915·

գ.

Ես գնում եմ մենակ այս տխուր իմ ուղին,
Եւ աճում են ցաւերը սրտիս.
Ես փախչում եմ արա՛գ, դառնագին,
— Ոչ բոյսեր կան իմ դէմ, ոչ լոյսեր առաջիս...
Տե՛ս, տիրում է տանջանքը տխո՛ւր ամէն տեղ,
Ու պատել է չորս կողմ անապատ...
– Բայց ինձ հետ կայ մի լոյս, – դա իմ ցոյսն է շքեղ..
— Դու, ոսկի իմ երազ, քո լոյսերն հարազատ —
Ինձ գարուն են բերում, ինձ թեւեր են տալիս.
Աննման ցնորքնե՛ր են իմ դէմ դուրս գալիս...
Ասես նիշտ ծովի մէջ՝ փոթորկի ժամերին,
Երբ հեռուից երեւում է կղզին փրկարար.
Մոնչում են անվերջ ալիքները ուժգին,
Կռուի մէջ գալարւում են, ոռնում փրփրահար.
Բայց կղզին մենաւոր այդ կռիւը բնաւ չի տեսնում,
Չի լսում նա աղմուկը, ժխորը ծովի մոլեգին.
Ու նիրհում է կղզին անխոով, անտրտում...
Իսկ արեւն ամպերի յետեւից եւ առատ
Նորան ջերմ համբոյրներ է տալիս.
Ու շողում է կղզին՝ զարդարուած ու ազատ.
— Իսկ հեռուն՝ ահեղ ծովն է կուռում եւ լալի՛ս...

1921.

ՎԵՐԼԷՆ.

Ա.

(Ազատ թարգմանություն:)

Երգը խոկուն, երերուն,
Մթին աշունը անհուն.
Երգը, ասես երկար մի սուգ,
Հեռուից գալիս է անձուկ...
Սրտումս լի՛ մի թախիծ.
Երգը ծնում է կսկիծ...
Կեանքս անշուք, սրտմաշուկ,
Ի՞նչ են ուզում ինձանից,
Միշտ անո՛գ եմ եւ անմար,
Մտքերս չար ու դժար.
Հեռու երգը հնչելիս՝
Իմ օրերը հողմահար
Ես յիշո՛ւմ եմ ու լալիս...
Չար հողմերին ես ընդդէմ
Սլանում եմ ողբանիմ.
Հողմերը սեւ, ցուրտը բուք
Թշո՛ւմ, քաշում են անգուր.
Ես մի տերեւ նոցա մէջ՝ —
— Ինձ քշում են լուռ ու մո՛ւք...

Բ.

(Ազատ թարգմանություն:)

Խոր է քունս ու թախիծ.
Կեանքս պատել է կսկիծ:
Քնէ՛ք եւ դուք, գարուն ու սէր,
— Օրո՛ր կ'ասեմ ձեզ անքիծ...
Կոյր է միտքս ու մոլոր.
Կորուցել եմ լաւ ու վատի
Իմացումը երկնազօր,
Ու երգում եմ սեւ երգե՛ր իմ սրտի...
Ես վիշտ եմ խոր, սիրտս անզօր վշտի ծով.
Ինձ քաշում են գաղտնի ոյժեր անարգել,
Ինձ մաշում են բռնի ոյժեր անտարբեր,
Եւ խօսում են խօսքը անմիտ ու խռով.
— Լո՛ւռ կաց, մահն է քեզ սպասում անհամբեր...

ԲԱՅՐԸՆ.

Ա.

Տխրամած է հոգիս, շո՛ւտ արա, դու երգիչ.
Ահա քեզ եւ տաւիղ ոսկեթել.
Թող սահեն նորա վրայ քո մատները կտրիչ՝ —
Արթնացնեն դրախտի հնչիւններ...
Եթէ բախտը տարել է անդարձ՝ իմ յոյսեր,
— Նոքա շուտ իմ սրտում կ'զարթնեն.
Եթէ կա՞ն իմ աչքում արցունքի կաթիլներ,
Եւ նոքա կ'հալուեն, կ'թափուեն...

Երգիր ե՛րգ վայրենի՞. տե՛ս, ինչպէս մի պսակ,
Ծանր են ինձ հնչիւններ բերկրալից.
— Ես արցունք եմ ուզում, — երգի՛ր երգդ արագ,
Թէ չէ սիրտս տխուր կ'պայթի՞ էս ցաւից...
Նա տանջանք է կրել դառնագին,
Հալածուել է երկա՞ր ու անձայն.
Հիմայ ժամը հասել է վերջին,
Եւ նա լի՞ է թոյնովը մահուան...

1904.

Բ.

Թէ ճիշտ է, այնտեղ՝ հանդերձեալ կեանքում,
Իւր սէրը նորից կ'ունենայ հոգին.
Թէ կեանքից յետոյ՝ անյայտ աշխարհում՝
Հանդիպելու ենք սիրող սրտերին, —
— Փաղցր է անսահմա՛ն՝ աշխարհը հեռուի,
Սիրելի՛ է միշտ մահինը մահուան.
Թողնե՛լ, մոռանա՛լ այս բեռը ցաւի
Ու այնտեղ ապրել ազատ յաւիտեա՛ն...
Եւ վերջին ժամին՝ անդունդի դիմաց
Զո՛ւր չէ՞, որ էնքա՛ն սոսկում է հոգին.
Ծնկաչոք կեանքի շղթայի առաջ՝
Ափսոսում է նա օղա՛կը վերջին...
Եւ իսկ անուրջը կեանքի առյաւէտ
Ինձ կ'ներշնչի բերկրանք անմոռաց,
Թէ ճիշտ է, հոգիս սիրած սրտի հետ
Էնտեղ կ'լինի՛ ազատ միացած...

1904.

Գ.

Թէ վիրոտ իմ հոգու խորքերից
Մի թախիծ երեւայ իմ դէմքին.
— Ինձ համար չյուզուիս, սրտակից,
— Չ'հարցնես դու երբէ՛ք իմ մասին...
Իմ ցաւերը ունին ապաստան —
Մշտական իրենց բունը սովոր.
Իմ դէմքից նոքա շուտ կ'գնա՛ն
Դէպի խորքը հոգո՛ւս մենաւոր...

1904.

Դ.

ԺԱՄԱՆԱԿ.

Հզօր ժամանակ. ձեռքովդ կարող
Մահը գեղեցկի դու լոյս ես անում.
Հիւանդ սրտերի ցաւերը բուժող՝
Ցնորքը ունայն դո՛ւ ես խափանում...
Ստուգել գիտես ճշմարիտն ու սէր, —
Զօրութիւնը քո՝ ազատ, նրբամի՛տ
Ամէն մի լոյսից հզո՛ր է եւ վեր.
— Դո՛ւ ես, որ ահեղ մանգաղը ձեռիդ
Միշտ կեանք ես հնձում եւ ցանում աւեր...

1923.

Ե.

Մնաս բարեա՛ւ. տե՛ս, կորչում է հեռո՛ւն կապուտակ
Վերջին տեսքը երկրիս հայրենի.
Ալիքները սահում են իրար հակառա՛կ,
Եւ ուրուրը նչում վայրենի՛...
Իսկ արեւն շտապում է ծովի խորխորատ,
Որ այնտեղ իւր հանգիստը գտնի՛...
— Դէ՛հ, մնա՛ս դու բարեաւ, իմ երկիր հարազատ,
Քեզ գիշե՛ր բարի հո՛ղ հայրենի...

Շուտ կ'անցնեն իմ ժամերը տխուր. եւ վերեւս նորից
Նո՛ր արեւ կ'փայլի՛ կենդանի՛.
Կրկին օ՛ր կ'տեսնեմ, բայց առ միշտ իմ աչքից
Հեռացած կ'լինի իմ երկիրն հայրենի՛...
Եւ հիմայ սոսկ դատարկ է իմ տունը մենակ,
Նորա մէջ նրագներս մարած.
Խիտ կանաչը պատում է նորան համարձակ,
Եւ ոռնում է իմ շունը դրան՝ մոլորուած...

—Ե՛կ ինձ մօտ, սպասիկ իմ անգին, սրտակից.
Ինչո՞ւ ես հեկեկում դառնալի՛...
Միթէ՞ դու ծովի մէջ սարսափում ես մահից,
Գուցէ ցո՞ւրտ է այստեղ՝ հողմի դէմ զգալի՛...
— Շո՛ւտ արցունքդ սրբի՛ր. ուրախ կաց եւ պայծա՛ռ.
Մեր նաւակն է արի՛ ու թեթեւ.
Եթէ նոյն իսկ բազէն մեզ հասնել ցանկանար,
— Նա հեռո՛ւ կ'մնար ու յետեւ...

«Փոթորկից բնաւ չե՛մ վախենում. թող ջրերը յուզուին,
Եւ նաւակը թող միշտ գալարուի հողմահար...
Տէ՛ր իմ, մի՛ զարմանա՛, որ այսպէս դառնագին
Ես արցունք եմ թափում անդադա՛ր...
Զէ՞ որ ես չեմ տեսնի էլ իմ հօրն ալեւոր,
Կամ խեղճ մօրս՝ արցունքն աչերին.
Միայն դու ես հիմայ ընկերն իմ մենաւոր,
Նաեւ նա, որ ապրում է երկնքումը վերին...

Ինձ իմ հայրը օրհնեց անջատման բոպէին,
Թէպէտ սառն էր հայեացքը նորա ազդեցիկ.
Կարօտից մայրս խո՛ր կ'տանջուի դառնագին,
Մինչեւ յե՛տ ես դառնամ հայրենիք»...
— Բաւական է, ընկեր. հասկանում եմ ես քեզ.
Ամօթ չէ քո արցունքը մաքուր.
Թէ իմ սիրտը լինէր քո քնքոյշ սրտի պէս,
Ես էլ լա՛ց կ'անէի ջերմագի՛ն ու տխո՛ւր...

— Մօտ եկ դու, իմ ծառայ, տեսնեմ, ի՞նչ ես անում.
Դալկութիւն է խաղում քո դէմքին.
Գաղիացի թշնամո՞ւց ես գուցէ վախենում,
Կամ սոսկո՞ւմ ես գուցէ փոթորկի առաջին...
«Զուր ես այդ իմ մասին մտածում, ազնիւ տէր.
Անձնական հոգսը չէ՛ փոթորկում իմ հոգին,
Ես կնոջս թողի՛, հեռացայ անտարբեր,
Նորա ցաւն է մաշում ինձ օտա՛ր էս ճամբին...

Հայրական բերդիդ մօտ՝ մտալար
Ես թողի իմ որդոցն, հեռացայ...
Երբ նրանք հարց անեն իմ մասին վշտահար,
Ի՞նչ կարող է ասել խղճուկ մայրը նոցա»...
— Բաւական է. ճիշտ է խօսքդ, ազնիւ իմ զինուոր
Գովեստի է քո վիշտը արժան.
Սակայն ես... ա՛յլ բնոյթ ունեմ ես անսովոր.
Ժպտալով ես թողի՛ հայրենիք ու վաթա՛ն...

Ի՞նչ օգուտ նենգամիտ կանացի արցունքից.
Նա երկար սպասո՞ւմ է մենակ եւ անձնուկ.
Մէկ ուրիշը էգուց նորա վառ աչերից
Կ'սրբի երէկուայ արտասուք...
Ափսոսալ չե՛մ ուզում իմ օրե՛րն անցեալի,
Անվեհե՛ր կ'կանգնեմ փոթորկի՛, կռուի դէմ.
— Ես չունիմ մտերիմ ու ընկեր,
Ո՞ւմ համար արտասուքս թափեմ...

Ինչպէս միշտ անցեալում՝ մենաւոր եմ կրկին.
— Անընկեր ու անսէ՛ր էս անհուն ծովերում...
Ո՞ւմ համար լաց լինիմ սրտագին,
Թանի որ իմ մասին ոչ ոք չի՛ ափսոսո՛ւմ...
Նոյն իսկ շունըս՝ իմ տան էլ երկար չի ոռնայ.
Նա մի օր նոր անկիւն կ'գտնի՛ իւր համար:
Եւ եթէ յետ դառնամ՝ նա ինձ միշտ կ'մոռնայ,
Իմ վերայ կ'յարձակուի՛ չարաչար...

Ա՛ռ նաւակ եւ արագ տար ինձի հեռուներ,
Թող ջրերը ներքեւ զալարուին անխտիր...
Տա՛ր շուտով, ուր կ'ուզես դէպ օտա՛ր երկիրներ,
— Միայն ոչ հայրենի՛ իմ երկիր...
Է՛հ, բարեւս տարէ՛ք ծովերի՛ն կապուտակ,
Էլ նոցա իմ նամքին չեմ տեսնի՛.
Բարեա՛ւ ձեզ սար եւ դա՛շտ ընդարձա՛կ
Միշտ բարի՛ քեզ գիշեր, երկի՛ր իմ հայրենի՛...

1904.

Զ.

ԾՈՎԸ.

Անտառ կուսական՝ քաջդ անվեհեր.
— Անման մի հանոյք եւ սէր կայ քո մէջ,
Դիւթակա՞ն է քո խորհուրդը անվերջ...
— Բայց ես սիրում եմ ծովը ու ջրեր.
Նորա կապուտակ ալիքն անվեհեր
Եւ խորհրդաւոր այն երգը, յուզում,
Որ գեղեցկութեան կարօտն են խօսում...

Դու, անսահման ծով, որ վեհ ես, արի՛.
Քո լայն ալիքով շարժւում ես հեռուն. —
Դու հանդուրժում ես նաւ ու նաւորդին.
Ամէն բան մարդը պղծում է կեանքում,
Բայց նորա գործը քեզ չի վնասում...
Քո մէջ կան հետքեր երբեմն աւերի,
Որ լոկ հետքերն են քո մրրիկների՛...
Անզգո՛յշ նաւորդն, արքայ բնութան,
Նետւում է քո մէջ, անդունդներդ լայն,
Ուր նորա անմիտ անիւնի համար
Չկա՛ն ոչ դագաղ եւ ոչ շիրմի՛ քար...

Մարդու վատ հետքեր չկան քո ճամբին.
— Խրոխտ ու անյաղթ՝ երբէ՛ք թոյլ չես տայ,

Որ քեզ հալածեն, ճնշեն քո հոգին...
Միշտ արհամարելով կապանք ու շղթայ,
Քո կրծքից մարդուն նետում ես հեռուն.
Եւ քո յաղթական անթիւ ալիքներ
Բշում են նորան, նետում դէպի վե՛ր...
Մերթ խեղն ու կրակ աղօթում է նա,
Զուր աստուածների օգնութեան դիմում...
— Իսկ դու՝ անողոք եւ միշտ անխնայ,
Նետում ես նորան ժայռերին անհուն,
Որ այնտե՛ղ մեռնի փոքրոգի հինուն...
Թող միշտ որոտան ռազմի գործիքներ
Եւ մերթ խորտակի՛ն զինուած ամրոցներ...
Թող ահ ու սարսափ բերեն ազգերին,
Եւ յաղթահարեն նաւ ու նաւորդին...
Բայց դու ես ազատ միայն աշխարհում.
Տէրերն աշխարհի քո ճեռքին գերի՛,
Ծաղրելի են խիստ՝ իբրեւ խաղալիք.
Քո մէջն է թաղուում, կորչում ամէն բան. —
Եւ արշաւանքներ, եւ փառք որոնող...
Բայց յաւերժապէ՛ս հնչում են ալիք,
Քո գովքը ասում հպա՛րտ ու կարող...

Տե՛ս, ինչպէս անցան եւ ոչնչացան
Թիւր պիտութիւններ քո նոխ ափերին...
— Ո՞ւր է Հռովմը, ո՞ւր է Յունաստան,

Եւ կամ լուսաւոր կարթագէնը հին...
Փառք ու պսակով կորած են, չկան...
Մեծ արշաւանքների եւ ազատութեան,
Կամ զո՞ւր բռնութեան դաժան օրերին
Դու չէ՞իր նոցա երկիրները լայն
Ողողում քո սուրբ շնչով ու ջրով...
Դու չէ՞իր դիտում անկումը վերջին՝
Բարբարութեան գահից դէպի՛ գերեզման...
— Դու ես, որ միշտ կա՛ս անմահ, անբաժան,
Որ միշտ անփոփո՛խ սահում ես ուժգի՛ն...
Կարծես ստեղծման առաջին ժամին՝
Կեանքը հոսում է քո ծիր ճակատին...

Երբ խոր պայթում է ահեղ փոթորիկ,
Կամ խաղաղ պահին՝ զեփիւռը մեղմիկ
Ալեկոծում է քո վսեմ ջրեր.
— Դու ես կենդանի՛ եւ անմահական
Միշտ արտայայտում Արարչի պատկեր...
Հէնց որ սուլում է հողմը բարբաձայն,
Եւ շարժում դաժան սառուցի լեռներ,
Կամ երբ հարաւում արեւն է այրում, —
— Ամէ՛ն տեղ ազա՛տ եւ միշտ անբաժան
Հոլովում ես մի՛շտ դու ծիր ալիքներ,
Դու ես զա՛հը մեծ արարչի համայն...
Քո անդրնդախոր ջրերի կրծքում

Ծնուում են յանախ անթիւ հրաշքներ.
Միշտ հպա՛րտ, արի՛, դէմքով անտրտում
Սահում ես, նետուում հեռո՛ւն, դէպի վե՛ր...

Ես քեզ սիրեցի մանուկ օրերից,
Քո ջրերի հետ խո՛ր մտերմացայ...
— Անմահ ալիքնե՛ր, իբրեւ սրտակից,
Ձեզ հետ միանա՛լ, ձուլուե՛լ կամեցայ...
Ես իմ մանկութեան ազատ օրերին
Դիտում էի մերթ, թէ զուա՛րթ եւ ժի՛ր
Ինչպէ՛ս են փարուում ջրերը ժայռին.
Փոքրուկից առաջ՝ ալիքը ընտիր
Ինչպէ՛ս է փրփրում, ճչո՛ւմ մոլեգին...
Ձեր խորհրդաւոր հանդէսի դիմաց
Հոգիս լեցուում էր ահ ու զարմանքով, —
Եւ միշտ յօրինում ազատ ապրումներ.
— Դո՛ւք, անմահութեան հոգի՛ էք, աստուած...
Ինձ՝ իբրեւ մանուկ, ջուրը իր երգով
Յօրինել է մի՛շտ օրօ՛ր ու հանգիստ...
Դո՛ւ, անթառա՛մ ծով. քո ժպիտը խիստ
Շոյե՛լ եմ ես միշտ իմ մատա՛ղ ձեռքով...

1921.

Է.

ՄՐՐԻԿՆԵՐ.

Մրրիկ ու ալիք, երկինք ու որոտ,
Լեռներ երկնահաս՝ ամպեր անպակաս, —
Ձեզ հետ է հոգիս, ես ձեզ եմ կարոտ...
Հեռու ափերից ձեր երգն ու երազ
— Հազիւ են հնչում, բայց սրտիս խորքում
Կարծե՛ս անուրջներ՝ հազար ձեւերով
Ապրում են նոքա անվախնան սիրով...
— Մրրիկնե՛ր հզօր. էս լա՛յն աշխարհում
Արդեօք կա՞յ ձեզի մի սահման ու վերջ...
Ահե՛ղ գոչումով՝ հուժկո՛ւ, յաղթարա՛ր
Շառաչում է՛ք մերթ խոր մթութեան մէջ,
Կամ պայթո՛ւմ սրտի ներսումը խաւար...
Արծիւների պէս՝ ժայռերի գլխին
Թուն էք դուք շինում ազատ ձե՛զ համար...

1921.

Ը.

Երբ մահը գայ ու մեզ տանի՛,
Մեր անիւնը սառոյց անի՛,
Մեր սուրբ հոգին ո՞ւր կ'դիմի,
Երբ անիւնից բաժանուի...
— Գուցէ բռնի նա այն ուղին,
Ուր անցնում են յաւերժածին
Տիեզերական մարմիններ
Կամ ձուլուելով արարչի հետ՝
— Գուցէ շրջի օր ու գիշեր
Տիեզերքը ո՛ղջ առյաւէ՛տ...

Այն ժամանակ նա կ'իմանայ,
Ի՞նչ է լինում երկրի վերայ, —
Կամ երկնքումը, աստղերից...
Մոռացման վե՛հ կամարներից
Նա կ'տեսնի՛, ինչ կա՛յ, չկա՛յ...
Եւ կ'կանչի, իբրեւ վկայ,
Բոլոր հետքերը անցեալից...
Իւր մտքերով յաւերժական
Նա կ'կապի իրար հետ
Անցեալը մե՛ծ եւ ապագան...

Թափանցելով անցեալի մէջ՝
Նա կ'տեսնի օրերը հին.
Երբ արարիչը՝ երկնաէջ
Ծնեց աշխարհը դառնագին...
Իւր հայեացքը քաջ ու հզօր
Նա կ'նետի դէպ ապագա՛ն...
Թէկուզ արեւն հանգչի մի օր,
Նա կ'մնայ յաւիտեան,
Որ լո՛յս տայ միշտ բնութեան...

1921.

Թ.

Ո՞ւր էր թէ լինէի ես մանուկ մի ազատ
Եւ կրկին ապրէի լեռներում հայրենի՛...
Ո՞ւր էր թէ շրջէի անտառում հարազատ,
Փարուէի երջանիկ ջրերին ծովերի՛...
— Չեմ կարող ես ապրել հոգսերո՛վ դառնագին,
Ճոխութիւնը անմիտ չի սիրում մի հոգին.
Սիրտս միշտ երազում եւ ձգտում է արի՛
Դէպի ձե՛զ, սէ՛գ լեռներ, ծո՛վ ազատ, անմահ,
Դուք, ժայռե՛ր, որ կրծքով ձեր հզօր ու դաժա՛ն
Լուռ զսպո՛ւմ էք ալեաց արշաւանքը վայրի՛...

Դո՛ւ, իմ բախտ. յետ ա՛ռ քո պարգեւները առատ,
Իմ մեծ դիրքը՝ հնչող դարերի խորքերից...
Չեմ ուզում ես ապրել նորտի պէս եւ վիատ,
Կամ տեսնել նորտութիւնը նորից...
— Յետ տուր ինձ երկիրն իմ վայրենի՛,
Ուր շողում էին պերն երազներ մանկութեան.
Ուր յանա՛խ, ծովերի յուզմունքին կենդանի՛
Սեւ ժայռերը տալիս են ազա՛տ պատասխա՛ն...

Ծեր չե՛մ ես տակաւին, բայց աշխարհը խռով, —
Էս աշխա՛րհն ինձ համար չէ՛ բնաւ.
Զուր ինչո՞ւ են պատել խաւարի սեւ քողով
Մեր գալիքը, օրե՛րն օրհասի, մահ ու դա՛ւ...
Կա՛ր մի օր, երբ զգում էի ես երազնե՛ր,
Գեղեցկի՛, նշմարտի՛ տեսիլներ դիւթական.

— Սակայն նա՝ կեանքի վիշտը՝ ցրեց իմ լոյսեր,
Երազներս անցա՛ն, սէր եւ լոյս վերացա՛ն,
Մտերիմ ընկերներ, դուք հեռո՛ւ էք, օտա՛ր.
Իսկ նոքա, ում սիրում էի ես, էլ չկա՛ն.
Իմ սրտումը տիրում է մթի՛ն մի խաւա՛ր,
Իմ աստղերը, յոյսերը կորա՛ն յաւիտեան...
— Յետ եկէք իմ անգին մտերիմ ընկերներ.
Ես ձեզ հետ երազներ հիւսեցի մանկակա՛ն.
Ես կ'ուզեմ թօթափել գինարբու խնոյքներ,
Դառնալի՛ էս ժխորը, էս փառքը ունայն...

Ինձ յուզել չեն կարող՝ ոչ կանայք,
Ոչ էլ սէրը նոցա՝ անցաւոր, նենգամիտ.
Էս աղմուկը անվերջ, խնոյքները անմիտ
Ես պատրա՛ստ եմ փոխել մի կաթի՛լ բերկրանքի,
Որ յատուկ է սրտին՝ պարզութեամբ երկնքի՛...
Գինարբու խնոյքներ, ես յոգնել եմ հոգով
Ձեր անզուսպ ու մոլի տանջանքից.
— Մարդկութիւն, անմիտ կեանք, ձեզ ատո՛ւմ եմ
սրտով...
Ինձ տարէ՛ք խոր ձորեր, որտեղ մէ՛գն ու կսկիծ
Միշտ պատում են հոգին սե՛ւ քողով...
— Ո՞ւր էր թէ լինէի՛ աղաւնի ու թռչուն,
Ճախրէի՛ դէպի վեր, դէպի բո՛ւնս սիրուն...
Այս տուէք ինձի թե՛ւ, դէպի վե՛ր սլանա՛մ,
Անմիտ կեանքը թողնե՛մ, յաւիտեա՛ն հեռանա՛մ...

1916.

ՀԱՅՆԷ.

Ա.

Վառ աստղերը՝ ոսկի ոտներով՝
Տե՛ս կամա՛ց են շարժում երկնքում,
Որ երկիրը՝ պատած մէգերով.
Չ'զարթնի իւր քնից անտրտում...

Մուր անտառն է քնած մեղմաբար,
Բայց նայում են չորս կողմ տերեւներ.
Բարձր սարը շարժում է յամառ
Իւր կանաչ լանջերին ստուերներ...

— Էն ո՞ւմ երգն է լսւում. հնչիւնները անհուն
Թափանցում են տխուր իմ հոգին.
Դա՝ սոխա՞կն է երգում կախարդուն, —
Թէ՞ քո ձայնն է միայն, իմ անգին...

1920.

Բ.

Մտքերս ցուրտ են, մտքերս նիհար.
Տխո՛ւր են դաշտեր, վիհատ, սառցապատ:
Մերկ են պտտերը, մերկ է եւ անտառ,
— Աշո՛ւն է շուրջս, աշո՛ւն, անապատ...

Մերկ ծառերի մէջ՝ աշնան շնչի տակ
Մի ծառ կայ միայն՝ կանաչ է հագած.
Թաց տերեւներով զարդարուա՛ծ, մենա՛կ՝
Կանգնած է, ասես, արցունքով ցողուած...

Հիւանդ իմ հոգին տխո՛ւր է անվերջ ,
Թօշնած է, ինչպէ՛ս աշուն, անապա՛տ...
— Իմ անգին կախա՛րդ, քո պատկերն իմ մէջ՝
Էն ծաղկող ծառն է միշտ կանաչապա՛տ...

1920.

Գ.

Նստած եմ այստեղ՝ — ժայռերի ուսին,
Եւ երազները պատել են հոգիս.
Հողմե՛ր են, ամպե՛ր միայն ու մթին,
Յուզւում է ծովը՝ ջրե՛ր կողքիս...
Իմ ջերմ ընկերներ կոյսե՛ր աննման,
Ես ճի՛գ եմ անում ձեզ յիշել նորից.
— Ո՞ւր կորաք շուտով... հողմերն են միայն,
Մրմունջ եւ տրտո՛ւնջ, ծովը փրփրալի՛ց...

Դ.

ԵՂԵԻՆԻ.

Վայրենի հիւսիսում մեն-մենակ՝
Լերան մերկ ուսերին եղեւնի է կանգնած.
Նա նիրհում է, ճօնում... սպիտակ,
Ասես ձիւն, մի շուրջառ է հագած...
Երազում է էդպէ՛ս նա միայն,
Թէ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ, ուր արեւն է ելնում,
Մի այրուած ժայռի մօտ՝ իր նման
Մենաւո՛ր մի արմա՛ւ է բսնում...

1920.

Ե·

Աստղերն անշարժ շարուած են միշտ
Հազար ու բի՛ւր տարիներ·
— Իրար սիրո՛վ, մե՛ղմ ու անվիշտ
Ուղարկում են բարեւներ···

Նոքա գիտեն զրոյց անել·
Կախարդիչ է բարբառը այն·
Նոցա լեզուն չի հասկացել
Ոչ ոք, ո՛չ մի լեզուաբան···

Ես հասկացայ այդ սուրբ լեզուն·
— Նորան երբէ՛ք չե՛մ մոռնայ···
— Քո տեսքը ինձ ով իմ սիրուն
Քերական էր անխնայ···

1903·

Զ.

Ես շրջում եմ, լալիս անտառում.
Եւ արագ ցատկելով ծառէ ծառ
Ինձ մալվիտն է կամաց մրմնջում.
— Զուր ինչո՞ւ ես լալիս անդադար...
— Իմացի՛ր քո ծիծառ քոյրերից,
Նրանք գիտեն եւ կ'ասեն իմ մասին.
Նոցա բունը՝ անցեալ գարունքից
Կից էր նիշտ սիրունո՛ւս լուսամտին...

Է.

Պերնաշուք արեւի լոյսի տակ
Թախծալի՛ երազում է շուշան.
Իւր գլխով կամացո՛ւկ ու թեքուած
Անհամբեր սպասո՛ւմ գիշերուան...
Եւ լուսինը՝ նորա սիրահար՝
Արթնացնում է նորան իւր լոյսով.
Միշտ ուրախ նա նայում է լուսնին
Ու ժպտո՛ւմ իւր ծաղիկ թփերով...
Նա փայլում է, շողում ու կանչում,
Եւ ժպտում՝ երկնքին միշտ յառա՛ծ...
Դողդողում է, բուրում եւ լալիս,
Սիրոյ խո՛ր կրակո՛վը լեցուած...

1904.

Ը.

Սրտիս մօտ՝ իմ գրկում
Հանգիստ ա՛ռ անտրտում.
— Ես երկինք եմ անհուն,
Դու՝ իմ ա՛ստղը սիրո՛ւն...

Մեր ներքեւ, տես, ժլատ է աշխարհ,
Միշտ յուզւում է անմիտ մարդկութիւն.
Միշտ ճչում, հայհոյում են իրար,
— Հայհոյանքը սիրում են, իբրեւ սրբութի՛ւն...

Աղմկում եւ վիճում են անվերջ.
Նոցա կիրքն է անմիտ ու տգեղ.
Իրար միս են ուտում կռուի մէջ.
— Իսկ հանգիստը մեզ մօ՛տ է, էստե՛ղ...

Բախտաւոր ենք այսպէ՛ս անտրտում,
Խիստ հեռու են մեզնից այդ կռիւն ու կրքեր.
— Դու հանգչում ես գլխով իմ կրծքում՝ երկնքում,
Ասես աստղը փայլո՛ւն, լուսաբե՛ր...

1920.

Թ.

«Փախի՛ր ինձ հետ, եղիր ինձ կին,
Իմ սրտումը հանգիստ գտի՛ր.
Աշխարհն օտար՝ քեզ կ'դառնայ
Հայրենի՛ տուն ու երկի՛ր»
Իսկ երբ դնեն ինձ հողի մէջ,
Մնա՛ս մենակ, տարագի՛ր.
Հայրենի հողն, հայրենի՛ տուն
Քեզ կ'թուան օտա՛ր երկիր...

Եղեամ իջաւ դաշտի միջին
Իսկոյն պատեց ոստն ու թփեր.
Միշտ պատեց՝ շո՛ւտ մրսեցին
Ու չորացա՛ն ծաղիկներ...
Էն քաջի հետ մի մուր գիշեր
Կոյսը փախա՛ւ ու գնաց.
Իսկ իր մօրը, սիրանուէր,
Եւ իր հօրը բա՛ն չասաց...
Օտար երկիր եւ օտար ցեղ.
Ցո՛ւրտ ու ձմեռ, ցաւ ու կարիք...
Եւ թօշնեցին նոքա էնտեղ,
Ինչպէս ցրտից բո՛յսն ու ծաղիկ...

Գերեզմանը նոցա կարօտ
Խիտ պատել են բոյսերը զո՛ւր...
Եւ նստում են միշտ նորա մօտ
Սիրահարները տխո՛ւր...
Հողմն է փչում խո՛ր, ահաւոր,
Երգ են երգում թռչնակներ.
Մերթ լալի՛ս են լո՛ւռ, անսովոր,
Մերթ խօսո՛ւմ են սիրուածներ...

1921.

Ժ.

Եթէ ծաղիկն հասկանար,
Որ սիրտը իմ վէրք ունի.
— Նա սուգ կ'անէր անդադար,
Որ իմ սիրտը դարմանի՛...
Թէ սոխակը իմանար,
Ի՞նչ է տանջում իմ հոգին,
— Երգերով իւր սիրահար
Ինձ կ'ամոքէր սրտագին...
Թէ աստղերը համակուած՝
Իմ խոր վիշտը տեսնէին,
— Երկնակամարը թողած՝
Ամոքելու կ'գային...
Նոքա լուռ են, անտեղեակ,
Դարդս գիտի սիրուհիս...
— Զէ՞ որ նա էր, որ մենակ
Պոկեց վարդերը սրտիս...

1920.

ԺԱ.

Կայսերական անտառը հին,
Ուր ծաղկում են ծառերը բիւր,
Ուր լողում է լռիկ լուսին,
— Թեւ է առնում մեր հոգին...

Անց եմ կենում նորան մօտ, —
Տայլերս խուլ եւ անձուկ,
— Սոխակն է այն կամացո՛ւկ
Երգում մեր սէրն ու կարօտ...

Ահա անտառը յամառ,
Մէջը ամրոց բարձրաշէն.
Կանգնած է նա միշտ մռայլ,
Կարծես մեռած ու անզէն...

Փակ են դուռը, պատուհան,
Իբր անցեալի շիրիմներ.
— Լուռ են, անխօս յաւիտեան՝
Եւ մոռացուած պալատներ...

Սֆինքսն ահեղ մուտքի մոտ,
Որ կիրք է զուտ եւ զայրոյթ.
Մարմնով առիւծ է հզօր,
Դէմքով մի կո՛յս բարեգուր...

Կի՞ն ես արդեօք... եւ դժգոյն
Հայեացքը լի՛ կրքերով.
Ժպտո՛ւմ, կանչո՛ւմ էր անհուն,
Յուզւում հզօր տանջանքով...

Իսկ սոխակները՝ լալիս,
Երգում էին տխրագին,
Երբ կախարդուած էր հոգիս,
Ու գրկեցի՛ ես կոյսին...

Կուռքը յանկարծ կեանք առաւ, —
Քարը շնչե՛ց ու շարժուեց.
Կրքի՛, տենչի՛ միշտ ծարաւ՝
Համբոյրներո՛վ ինձ պատեց...

Սֆինքսը իւր ճանկերում
Գրկած էր ինձ անդադար.
Իր անսովոր թաթերում
Սեղմո՛ւմ էր ինձ խանդավառ...

Սահման չունէր տանջանքն իմ,
Սէրն էր մէջս զօրանում.
Այրում էր ինձ գգուանքն իմ,
— Նա սեղմո՛ւմ էր իւր գրկում...

Եւ դառնում են, երգելիս՝
Սոխակները լուռ կոյսին.
— Քո կիրքն է մեզ կեանք տալիս,
Սիրով լեցնո՛ւմ մեր հոգին...

— Մեկնի՛ր խորհուրդը կեանքի,
Ասա՛, ո՞րն է մեր ուղին.
Դարերն անվե՛րջ տանջանքի
Ինչո՞ւ մեզ լոյս չ'բերին...

1918.

ՇԵԼԼԻ.

Հեռացի՛ր. ահա մթնեց հեռաստան,
Անվստահ փայլեց դալկադէմ լուսին.
Իսկ վերջալոյսի ժպիտն անմահ
Կորաւ ալէծուի մէգերի միջին...
Շուտով կ'փչի գիշերուայ քամին
Եւ կ'ողողէ հովիտ ու անտառ.
Նա կ'ծրարի պատանով մթին՝
Խոհուն աստղերով լի՛ երկնակամար...

Ընկերիդ իզուր խափան մի՛ անի.
— Գիշերն այդպէս պարզ ասում է. «անցի՛ր».
Անջատման ժամին ցաւը կ'բանի,
Արցունքի ժամը, կ'գայ, սպասի՛ր...
Այն, ինչ կորած է, չե՛ս գտնի նորից,
Ինչ որ անցել է, յետ չի գայ կրկին.
— Էլ չի՛ բորբոքուի՝ իւր խոր կրակից
Անտարբեր հայեացքն ու տխո՛ւր հոգին...

— Նա՝ մենութիւնը, մտերմիդ նման,
Քո տունը կ'գայ ամայի՛ արդէն.
Եւ վիշտ կ'ցանի չորս կողմը դաժա՛ն, —
Մահինի վերայ քո անապատէն...
Եւ մշուշապատ ստուերներ թեթեւ
Կ'սկսին սահել գիշերուայ ժամին.
Մերթ ոստոստալով չորս կողմ ու վերեւ
Մի պար կ'բռնեն նոքա օդային...

Անխուսափ եւ զուր աշնան տերեւներ
Թօշնելով՝ ծառից թափւում են տխուր.
Անխուսա՛փ եւ զուր գարնան ծաղիկներ
Ցանում են, ցրում բուրմունք ընդհանուր...
Անցնում անխախտ շաւղով համաչափ
Օրերն ու շաբաթ, տարի եւ ամիս.
Ամէն իսկ բանին այստեղ անխուսափ
Միշտ սովորական մի հե՛րթ է գալիս...

Լուռ եւ տարագիր ամպերը յանախ
Խոր քուն են մտնում ընդհանուր ժամին.
Դադարում են մերթ հողմերը անվախ,
Սարի յետեւը ներհում է լուսին...
Աղմուկը ծովի ձանձրալի՛ եւ խոր
Մերթ դադարում է, հանգիստ որոնում.
— Այն, ինչ կուում է, խոկում ամէն օր,
Վերջը մի որոշ հանգիստ է առնում...

Հանգիստ կ'գտնես եւ դու հողի տակ.
Բայց քանի մահը չի եկել այցիդ,
— Սիրելի՛ են քեզ պարտէզն ու տնակ,
Արշալոյսը վա՛ռ եւ օր փորձիդ...
Քանի՛ քո վերայ դեռ չ'կայ ազատ
Հողը մի անշուք բլուրի նման.
— Սիրելի՛ են քեզ դաշտերն հարազա՛տ,
Դէմքը մտերմիդ, սէ՛րդ մանկութեան...

1904.

Ռ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ.

Ես շա՛տ եմ սիրել, սիրի՛ր նաեւ դու
Յստա՛կ, երփներանգ զարդերը գարնան,
Թօշնած տերեւի սօսաւը ազդո՛ւ,
Եւ սուրբ կոչնակը վերջին հանգստեան...
Ես շա՛տ եմ սիրել, սիրի՛ր նաեւ դու
Այտե՛րը դալուկ, երգե՛րը գունատ,
— Այն մահազգեստ վսե՛մ լռութեան
մեղեդին վիատ...
Օ՛, ես սիրել եմ, սիրի՛ր նաեւ դու
Վերջին օրհասի, անմի՛տ երազի
Տագնապը մահու...

1904.

Տ. SOLUSՕՅ.

Սոնիի մուք անտառը հեռու եւ մենակ
Կանգնած է սգաւոր եւ տխուր սօսաւում.
Եւ միջը ծառերի կարկաչուն եւ յստակ
Մի վտակ է սահում, խո՛ր վշշո՛ւմ, թռչկոտում...
Ես սիրում եմ հոգով այդ երկիրն, այդ առուն,
Առուի մօտ ես սիրում եմ յիշել հնութիւն...
— Ե՛կ անտա՛ռը ծածուկ իրիկուայ հով պահին,
Ե՛կ նստիր իմ կանաչ ու դալար ափերին:
Շատ վաղուց է, այսպէ՛ս ես սահում եմ յամառ,
Եւ անցեալը կարո՛ղ եմ յիշել քեզ համար...
Քեզ մէկ-մէկ կ'պատմեմ իրիկուայ զով հովին,
Թէ ինչե՞ր չեն անցել իմ հարուստ ափերին.
Ես գաղտնի աշխարհից եմ իրրեւ մի վկայ,
Իմ նամբին դիւթական շա՛տ բաներ եմ տեսած...
Երբ արեւը մտնի եւ լուսինը դուրս գայ,
Երբ աստղերը շողան ջրերումս կամա՛ց,
Ե՛կ ինձ մօտ, քեզ կ'ասեմ մեղմաձայն,
Թէ ինչե՞ր են լինում մթի մէջ անխափան...
Այդ ասաց, մրմնջաց ու ցոլաց ջինջ առուն...
Ես մենակ մնացի մտքերովս անհուն:
Միայն ցայտն էր առուի, որ լսւում էր կամաց.
Եւ տխո՛ւր յիշեցի իմ օրերը անցած...

1904.

ՀԵՋԻՕՏ.

Բի՛ւր անգամ աւելի գերադաս կ'լինէր ինձ համար
Ծնուել ո՛ւշ, կամ շուտով աշխարհից հեռանալ...
— Ի՞նչ օգուտ, էս անգուր ժխորումը մնալ,
Քանի՛ կեանքը մեր ձա՛խ է գնում անդադար...
Մեզ բաժին է հասել երկաթէ ժամանակ,
Երբ հոգին կաշկանդող ցասումից ու ցաւից
Մեր երկիրը դողում է անվերջ դառնութեան լծի տակ.
Մեզ մաշո՛ւմ են խաւար, բռնութի՛ւն ու կսկիծ...
Ահա՛ մօտ է այն օրը՝ կեանքին վինակուած,
Երբ որ չարն ու բարին կ'դառնան անտարբեր,
Երբ որ հայրը որդուն կ'ժխտի, ուրացած,
Եւ էլ չի՛ հասկանայ ընկերոջը՝ ընկեր...
Կեանքի մէջ հիմնովին ոտնատակ կ'լինին
Անբիծ սէրը, արդարն ու բարին լուսաբե՛ր,
Զարագործը կ'գա՛յ եւ ազա՛տ կ'տիրէ սրտերին...
Գործի մէջ, մարդու մէջ էլ հաւատ չի՛ մնայ.
Նորան միշտ, ամէն տեղ կ'ծաղրեն չարաչար,
Եւ իշխո՛ղ կ'դառնան սուտն ու սե՛ւը, ոճիրն անխնայ,
Մոլութիւնն ու անկում եւ չարի՛քն անսպառ...
Բռնութիւնն ու կռիւը անգուր եւ դաժան
Կ'դարձնի մարդուն նիշտ վայրենի՛ մի գազան...

Ազատ խիղճն ու ամօթ, աշխարհից հալածուած,
Ձիւնափայլ ֆոդերով իրենց դէմքը պատած,
Կ'թռչին դէպի վե՛ր, դէպ աստղերը պայծառ.
— Ողջ աշխարհը առմիշտ կ'պատի՛ մի խաւար,
Ուր մարդիկ ֆարշ կ'գան մոլորուա՛ծ, վայրենի՛,
— Էլ այնժամ չարութեանը սահման չի՛ լինի...

1904.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

Նախերգանք 7
Ա. ՈՒԹՆԵԱԿՆԵՐ 13

Բ. ՁՆՂՈՒՄ ՈՒ ՊԵՂՈՒՄ

Ա. Կանգնած ես դու հողի վերայ 71
Բ. Ես եմ մենակ երկնքի տակ 72
Գ. Նկաւ մի օր կոյսը սիրուն 73
Դ. Չէ՞ որ մի օր հոգուս բարձրէն դու անցար 74
Ե. Ինչ հաւքեր, որ աշնան 75
Զ. Իմ կեանքը թօշնեց, լոյսերս կորա՜ն 76
Է. Տուր ձեռդ, եղբայր. խոր վիշտը կեանքի 77
Ը. Սեւ-սեւ ամպերն եկան թափուան սար ու ձոր . . . 78
Թ. Երկնքում աստղեր կան 79
Ժ. Ես նիւթապէս մի աննշան 80
ԺԱ. Սրտագին դաշտային ծաղիկներ 81
ԺԲ. Ես չեմ ժխտի ու չեմ խախտի վսե՛մ գործը գիտութեան 82
ԺԳ. Ո՞վ է վառել ջահերը իւր տիեզերքի մեծ այգու մէջ . 83
ԺԴ. Քեզ եմ երգում 84
ԺԵ. Սիրո՛ւն աղջիկ, նազլո՛ւ աղջիկ 85
ԺԶ. Ես կ'ուզեմ ոսկեշող արեւի լոյսի մէջ 86
ԺԷ. Քերթող 87
ԺԸ. Բանուորի երգը 88
ԺԹ. Անսասա՜ն, ինչպէս ծուռն անբաժան 90
Ի. Հեքիաթներ 92
ԻԱ. Միտքս ազատ, դիրքս հաստատ 94
ԻԲ. Զմրան գիշեր 95
ԻԳ. Օրերն ու տարիք մէկ-մէկ, միալար 97
ԻԴ. Դործս լինէր երկնքի մէջ 98
ԻԵ. Մարդը ահա միտք է անում ամեն օր 99
ԻԶ. Մեր լայն երկնքում բանակ առ բանակ 100

ԻԼ. Արնակարկաչ կեանքի հովտից ծով ալակով 101
ԻԸ. Իմաստունն ես եւ արթուն ես դու մտքովդ խորիմաց . 103
ԻԹ. Ամպը 105
Լ. Զեմ հասկանում, ի՞նչ են անում երկինքն, արեւ ու աստղեր 106
ԼԱ. Ես շատ յաճախ միտք եմ անում 107
ԼԲ. Բանաստեղծը 108
ԼԳ. Ողջոյն ձեզ, իմ ծախորդ սեւ օրեր եւ տանջանք . . . 111
ԼԴ. Քաղաքը 113
ԼԵ. Երանի՜, ով կարող է վատնել իւր հոգին 115
ԼԶ. Անմահ սիրտ ու հոգի 116
ԼԷ. Աղօթք 117
ԼԸ. Ի՞նչ էք խորհում օր ու գիշեր, ա՜յ սարեր 118
ԼԹ. Երգի տենչը մարած է իմ մէջ 120
Խ. Թող ես հալածուեմ 122
ԽԱ. Մեր ժամանակի երկաթ հողմերի 125
ԽԲ. Իրիկուա՜յ ստուերներ, իրիկուա՜յ ստուերներ 127
ԽԳ. Հալածուած իմ ընկեր, դու հանգիստ ես ուզում . . . 129
ԽԴ. Կայծակներ 131
ԽԵ. Ծովը 132
ԽԶ. Մենք ծնուել ենք լոյսեր տեսնենք 134

Գ. ԱՆՈՒՐՋ ՈՒ ԿԱՄՈՒՐՋ

Ա. Իմ ճանապարհը 139
Բ. Ճրագները 142
Գ. Հանդէս 143
Դ. Քարուանը 145
Ե. Գնացքում 149
Զ. Աղբիւրը 154
Է. Անսովոր մարդ 157
Ը. Գործարանի մօտ (տեսարան) 160

Դ. ԵՐԳ ԵՐԳՈՑ

1. Շա՜տ է երկար էս ճանապարհը կեանքիս 169
2. Դուք չ՚գիտէք, ի՞նչ են խօսում ծաղիկն ու քոյսը դաշտի 171
3. Քո սրտի մէջ կարող ու վէս մի օրէնք 181
4. Ինձնից երգ մի՛ ուզէք, — երգ խնդուն, վառվռուն . . . 182
5. Քանի՜, քանի՜ բախտը մանի կեանքի թելը անուանի . . 183

6. Քո մահիճը զունատ, քո դահիճը անյայտ 184
7. Ո՞վ է տէրը տիեզերքի 185
8. Ծովն է գալիս իմ վերայ 186
9. Երկու ծանր լուծ են դրել իմ վզին 187
10. Տես, ամէն օր աղօթելիս արարչութեան վեհ գործին . . 188
11. Էս լուռ գիշերին Յոյսը չի մնում 189
12. Քաղաքը հին ծովի ափին միտք է անում դատնագին . . 190
13. Ծովի ափին, սարի լանջին կայ զարդարուն մի պարտէզ 191
14. Տիեզերքի խոր կենդրոնի մէջ ես իմ վրանը զարկեմ . 192
15. Կայծակի նման ամպերի մէջեւ 193
16. Ես չեմ փափագում ծեր ունայն փառքին 194
17. Կոյր էք դուք իրաւ, չէք տեսնում բնաւ 195
18. Կարելի չէ, որ քուրմը իւր տաճարի մէջ 196
19. Երազումս Գանգէս գետի ափն հասայ 197
20. Ասի, մայրիկ, այս ինձ համար մի քնար 198
21. Սիրտս, ասես, բողբոջում է գարնան պէս 199
22. Եթէ իրօք հասար կեանքիդ բարձունքներին յաղթական 202
23. Քանի անգամ ասել եմ ձեզ, սիրտս հանդէս է անվերջ 204
24. Իմ սրտի մէջ օր ու գիշեր սահմանադիր ժողով կայ . . 206
25. Զանգը զնգում է զանգատան 208
26. Սիրտս պարտէզ մի երկնատես 209
27. Բո՜ւք ու բորան սրտիս մէջ 210
28. Անթիւ դարեր մարդը իզուր ջանք է անում, որ գտնի . 211
29. Կրակի պէս միտք է հոսում աներեւոյթ իմ ընից . . . 213
30. Դու չես տեսնում աշխարհի վեհ սարը ու կարգը, տնաքանդ 214
31. Բոլոր գետերը հոսում են դէպի ծով 216
32. Ես միշտ կ'ուզեմ ազատ լինեմ եւ արդար 217
33. Ո՞վ է քաշում ինձ ամէն օր աջ ու ձախ 218
34. Արտիս վերին քերքն ես դու, սրտիս խորին մրգն ես դու 220
35. Ժամանակի ու գոյութեան կապն եմ ես 222
36. Կեանքս, կարծես, արագահոս մի վտակ 223
37. Էլ չ'գիտեմ, ինչպէս եղաւ, ինչ եղաւ 224
38. Ինչո՞ւ էսպէս ծանր եմ զգում ես ինձի 225
39. Բիւր բերքերով պարարտ հողը միշտ յոգի՝ 226
40. Տիեզերքի մէջ ես ընկերներ շատ ունեմ 227
41. Զո՞ւր էր լալիս անցեալի փառքը հզօր 228
42. Ո՞վ է հիմնել սրտումս խոր եւ անսովոր գործանոց . . . 229
43. Սրտումս կայ խոր ու խոհուն եւ երազուն մի գաղտնիք 230
44. Ասի՝ մտնեմ մի հանքահոր, տեսնեմ ինչ կայ մէջը լաւ 231

45. Անյայտ երկրէն մի ղուշ եկաւ 232
46. Ես ինչ անմիտ գործ են արել մեզ համար 233
47. Բաւ է, բանի չարն ու չարիր ինձոյք արին իմ սրտում 234
48. Սիրտս, կարծես աւեր մի տուն 236
49. Ի՞նչ է անվերջ գլխիս վերեւ 237
50. Ծով է սիրտս մի աննման 238
51. Ես չեմ կարող գնալ ճամբէն ձեր սիրած 239
52. Աչքս ճամբին՝ իմ օրն եմ ես սպասում 240
53. Ո՞ւր են ցանել լաւն ու վատը էս արտի մէջ միասին . . 241
54. Ո՞ւր էք, հասէք, իմ ընկերներ 242
55. Ես կանգնած եմ այստեղ՝ մոատանջ ու մենակ 243
56. Շուրջս լի հնութեան ալեւոր բեկորներ 244
57. Օր ու գիշեր աչքս ճամբին կ'սպասեմ 245
58. Արտը յդի բերքերով 246

Ն. ԹԱՐԴՄԱՆԱԿԱՆ

Մ. Գօրկի՝ Մրրկահաւը 249
Լեռնօձտուղ՝ Ա. Աղօթք 254
„ Բ. Առագաստը 255
„ Գ. Հրեշտակ 256
„ Դ. Ամպեր 257
„ Ե. Տխուր է, տաղտուկ. չկայ մէկը, որ ձեռքը սեղմես 258
Գէօթէ՝ Խոր նիրհում են լեռներ 259
Օմար-Խայեամ՝ Ա. Ինչու, տէր իմ, զուր կոտրեցիր . . . 260
„ Բ. Խորհուրդն աշխարհի՝ խոր ու ոսկեշող 260
„ Գ. Եթէ թօթափես քեզնից քո փոշին . . 261
„ Դ. Մեր հոգին միայն մի ձայն է խորին . 261
„ Ե. Նա որ տիեզերքի պատկերը քաշեց . 262
Էդգար Պօ՝ Ա. Զանգակներ ու զանգերը 263
„ Բ. Տես զանգերն են. հնչում միալար 265
„ Գ. Ես գնում եմ մենակ այս տխուր իմ ուղին 267
Վերլէն՝ Ա. Երգը խոկուն, երերուն 268
„ Բ. Խոր է բունս ու թախիծ 269
Բայրըն՝ Ա. Տխրամած է հոգիս, շուտ արա, ով երգիչ . . 270
„ Բ. Թէ ճիշտ է, այնտեղ՝ հանդերձեալ կեանքում . 271
„ Գ. Թէ վիրոտ իմ հոգու խորքերից 272
„ Դ. Ժամանակ 273

Բայրոն՝ Ե. Մնաս բարեաւ. տես, կորչում է հեռուն կապուտակ 274
„ Զ. Ծովը 279
„ Է. Մրրիկները 283
„ Ը. Երբ մահը գայ ու մեզ տանի 284
„ Թ. Ո՞ւր էր թէ լինէի ես մանուկ մի ազատ . . . 286
Հայնէ՝ Ա. Վառ աստղերը ոսկի ոտներով 288
„ Բ. Մտքերս ցուրտ են, մտքերս նիհար 289
„ Գ. Նստած եմ այստեղ — ժայռերի ուսին 290
„ Դ. Վայրենի հիւսիսում՝ ու մենակ 290
„ Ե. Աստղերն անշարժ շարուած են միշտ 291
„ Զ. Ես շրջում եմ, լալիս անտառում 292
Է. Պերճաշուք արևի լոյսի տակ 292
„ Ը. Սրտիս մօտ՝ իմ գրկում 293
„ Թ. Փախեր ինձ հետ, եղիր ինձ կին 294
„ Ժ. Եթէ ծաղիկն հասկանար 296
„ ԺԱ. Կախարդական անտառը հին 297
Շելլի՝ Հեռացիր. ահա մթնեց հեռաստան 300
Ռ. Մանուէլեան՝ Ես շատ եմ սիրել, սիրեր նաեւ դու . . 303
Տ. Տոլստոյ՝ Սոճիի մութ անտառը հեռու եւ մենակ . . . 304
Հեգիօտ՝ Բիւր անգամ աւելի գերադաս կ'լինէր ինձ համար 305

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Մխիթարեան Տպարան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0029416

№ 1336

Ա Զ Դ

Պատրաստ են եւ շուտով կը յանձնուին տպագրութեան հեղինակի երկերի՝

Դ. ՀԱՏՈՐ (ԱՐՁԱԿ-ԴԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ)

ա. Մեր կեանքի իմաստունները՝ "Պատկեր եւ ժպիտ" վերտառութեամբ:
բ. Պատմուածքներ:

Դ. ՀԱՏՈՐ (ԳԻՏԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ)

ա. Մարդը՝ իւրատեսակ մի մասը տիեզերքի:
բ. Մարդը՝ հասարակութեան մէջ:

ԳՐՔԻՍ ԴԻՆ Է՝

Արտասահմանի համար՝ 1·25 դոլար:
Խորհրդային Միութեան սահմաններում՝ 2 ռ.:

Մխիթարեան Տպարան